



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

15647

15648

15649

15650

891.99

7-29

QmD 44.
N^o 234.

примените по
используются " Гривы ст
месте не вникаете

не вникаете

2003

1872

4/17

Մ Ն Ո Ւ Շ Ա Վ Ա Շ

Գ Ր Ե Ա Ց

Ժ Ե Ր Ո Ւ Ն Ի Ն Գ Ա Բ Ի Է Լ Դ Ա Տ Կ Ա Ն Ե Ա Ն

Հ ր ա թ ա ռ ի Կ ր ի յ ա յ և ա ճ ի ռ




Զ ի ի ռ Ն ի խ

Տ Գ Ա Գ Բ Ո Ւ Բ Բ Ի Բ Ն Տ Է Տ Է Ե Ա Ն

1875

Գ Ի Ն Տ Դ Ա Յ Ե Կ Ա Ն



891,99

7-29

u

Մ Ե Ր Ո Ւ Ն Ի Ն Կ Ա Բ Ի Է Լ Դ Ա Տ Կ Ա Ն Ե Ա Ն

Գ Ր Ե Ա Ց

Մ Ե Ր Ո Ւ Ն Ի Ն Կ Ա Բ Ի Է Լ Դ Ա Տ Կ Ա Ն Ե Ա Ն

Տ Ի Գ Ր Ա Ն Ե Մ Բ Ր Ո Ւ Բ Ի Ի Ն Տ Է Տ Է Ե Ա Ն

Տ Ի Գ Ր Ա Ն Ե Մ Բ Ր Ո Ւ Բ Ի Ի Ն Տ Է Տ Է Ե Ա Ն



ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ
Կ. ՄԱՍԻՍԻ
7/27. 1922
ИМЕНА. МАСШТАБ
У. МАСИՍԻ

Զսիշակիս

Տ Գ Ր Ա Ն Ե Մ Բ Ր Ո Ւ Բ Ի Ի Ն Տ Է Տ Է Ե Ա Ն

1875

1001
3930

3420

Handwritten text, possibly a title or header, written in a cursive or decorative script.



Handwritten text, possibly a date or a specific reference number.

Small handwritten text or initials.

Vertical handwritten text on the left side of the page, possibly a list or index.



Handwritten text at the bottom of the page, possibly a signature or a note.

Vertical handwritten text on the right edge of the page.

ՆԱԽԱՀԱԻԻՂ ՄԱՏԵՆԻՍ

Քանաստեղծից ընարի ծայնէն
զարթեր են ազգեր:



ՀԱՍԱՐԱԿ մարդոց կարգէն զերազանց մարդիկ զանուած են ազգաց մէջ ժամանակ ժամանակ, որք իւրեանց կեանքով և գործքով զերազանց իմն փայլեցուցած են իւրեանց անձնական և հոգեկան բարձրութիւնը. որով պատիւ բերած են երկրին՝ յոր ծնած են, ժողովրդեան և ազգին՝ որում սլատկանած են, դարուն՝ յորում ապրած և փայլած են:

Ար տեսնուի զերազասութիւն նաև երկնային ողեղինաց իւրեանց նուիրական հրեշտակական կարգին, Աստուածային սպասաւորութեան և փառաբանութեան մէջ. ոչ ամենայն հրեշտակք ԳԱԲՐԻԷԼ են. ոչ ամենայն հոգիք՝ ՌԱՓԱՅԷԼ, և ոչ ամենայն դասք՝ ԲԵՐՈՒԷԻՑ են:

“Եւ սասցաղ Ժան զասացաղ սասաւել է փասաթ,”:

Շատ են զետեր երկրագնտիս, այլ ոչ ամենայն զետք Եփրատ են և Երասխ: Եփրատն և Երասխ յԱզնա

բղխին, զղրախտ ուողանեն: Գուրք՝ որ խառնեալ յոսկի,
 և ընթանան պատեն ուր ոսկին է, և ոսկի երկրին այնու-
 ըիկ ազնիւ. անդ և սուտակն և ակն դահանակ: Գուրք
 որ յանմահութեան վայրէն հոսին, և անմահութեան համ-
 ու հոս ջամբեն ըմպողաց:

Ես գործ չունիմ այստեղ քաղաքական և զինուորա-
 կան հանձարոց հետ: Ես կը սիրեմ այն մատուցն՝ որ կը
 գրեն ու կը դաշնակեն. քան զբազուկն՝ որ կը հար-
 կանէ, ու կը խորտակէ: Դաւիթին տաւիղն ու սաղմոս կը
 սիրեմ. և ոչ Սաւուղին աղեղն ու զեղարդն: Հովերոսի
 տաղից մի տող՝ քան զՀերակլեայ ուռն և Լքիւլլեայ
 թուրն. Աիրգիլիոսն հովերգ՝ քան զԱեսարսն ահարկու-
 իմս Խորենացին՝ քան զՂիւցազն Աիշապաժին. ՚ի մի բան՝
 թանգ է պատառ մի մագաղաթին՝ քան զգանձ և պալատ,
 քան զպերճ յաղթողն Աիմպիաղին, քան զայն ամենայն
 անձ, որ կը ճոխանայ ՚ի ծիրանի և ՚ի բարձ:

Աեհից ամենից նախանձելին Լղեքսանդր նախանձէր ոչ
 Տրովացւոց յաղթողաց զիւցաղանց հաստ բազկին, հուժ-
 կու ուժին, գոռ կառքին, ուժգնակի նիզակի զարկին. այլ
 նախանձաբեկ լինէր նա Հովերեայ մտաց խանդին, խանդ-
 եռանդ երգին, և երգոց պարունակող թղթի թերթին,
 թերթին՝ որ ոսկեղէն և հոգեղէն անմահ յաղթանակ և
 փառք ձօնած էր այն զիւցաղանց զլխին:

Ճակատամարտի մէջ հանդիսացող քաջաց զիւցազնու-
 թիւն տուող՝ պատմողին բարբառն և զիրն է: Նա է որ կը
 զեղափայլէ հողին վայելչութիւնը՝ նկարագիր ոճով. և զայն
 պաշտելի ըզձալի կ'առնէ մարդկային սրտին: Նա է որ կը
 ողջունէ և կ'օժանէ զգացմանց աւիւնով հայրենի երկրին
 խոտերն ու տերեւներն. և շողաթաթախ ոստէ յոստ անց-
 նելով՝ կ'իջնէ կ'այցելէ յաւիտենական շիրմաց, կորուսեալ
 դամբարանաց, փոշիացեալ ոսկերաց. հոգի կուտայ կը կեն-
 դանացնէ զիակները. և կմախաց վրայ արկանելով մորթ

և միս, կազմելով արխն և ջիւ, կցելով ոսկր յոսկր, կը յարուցանէ, կը բարբառեցնէ, կը կացուցանէ մեր աչաց յանդիման սպառազինեալ մարտիկք, հանձարեղ խորհրդաճուք, ճարտասան լեզուք. չքնաղ կուսանք. ժրագլուխ տիկնայք. հայրենեաց և մարդկութեան համար ապրող ու մեռնող պատմական կամ աւանդական անձինք. ամբողջ ազգեր. նոցա կենցաղն, նոցա շինածն ու աւերակն. նոցա սիրոյ և փառաց, նոցա աղէտից և անկման յիշատակներն, պատճառներով հանդերձ: — Ի հարկին կ'ստեղծէ նաև նոր նոր արարածները:

Իբր երբեմն, որ տաւիղն ու լար կը կատարէին թղթի և գրչի պաշտօն: Նոցա կը պարտինք շայքս՝ «Արտաշէսին և Սաթինկան մարգարտասփիւռ ոսկետեղաց հարսանիքն, ոսկեօղակ շիկափոկ պարանն, որ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին Ալանաց», Սեր «Շրահեր և բոցամօրուս աստուած Ահազն՝ երկնի և երկրի երկանց ծնունդ լինելն», երդչաց միտքն է ստեղծեր, բանասիրաց բերանն աւանդապահեր, և Խորենացւոյն գրիչն է մեզ ընծայեր: Այսպէս և Արուանդեանն Տիգրանայ սխրալի ձիրքեր ու պանծալի քաջազործութիւնք, Տիգրանուհւոյ առաքինի հոգւոյն և համբաւոյն հետ. ընդ որս և շատ ևս:

Շարկ է խոստովանիլ թէ երգն ու գիր ոչ միայն կենդանարար է մեռելոց, այլ և կրթիչ ու նորոգիչ է ժողովրդոց:

Ազգեր բանաստեղծից քնարի ձայնէն են զարթեր:

Ահպն ու երգ է 'ի բան և 'ի գիր այն հոգին, որ շրջի 'ի վերայ խաւար անդնդոց. և կ'արարչազործէ զարարածս 'ի ջրոց: Ար հիւճին, 'ի ջուր կը լուծին, հեղգ ու մեղկ կը դառնան շատ անգամ մարդիկ, կը մոռնան իրենք զիրենք, կը մեռանին զգացողութեամբ: Նոցա հոգւոյն զարնող ձայն պէտք է որ սթափէ զիրենք, ճանաչելու և գործել տալու իւրեանց պարտիքն ու պարծանքն, ինչ որ ան-

ձանց՝ անձանց. ինչ որ ազգին՝ ազգին. ինչ որ հայրենեաց՝ հայրենեաց. ինչ որ Աստուծոյն՝ Աստուծոյ :

Մի աշխարհի բնական դիրքն մեծապէս կ'ազդէ մարդկային մտաց, բանաստեղծից հայրենիք պէտք է լինի դրախտասարաս վայր. ուր լուսաթափ Միլտոմիսի աչքերն անգամ պայծառ կը տեսնեն : Պէտք է լինի այնպիսի մի տեղ, ուր երկնից աստեղք պայծառ, լուսնակն պսպղուն, արևն ամենափայլ, օդ ջինջ և զովագին, ջուր զուլալ և զղզղուն, բոյսեր կանանչ և դալարաւէտ, կենդանիք կայտառք, հաւքեր գոյնզգոյն և դայլայլիկք, անտառք նուիրական. լերինք անուանական, միով բանիւ՝ ամենայն ինչ գեղանի, պատուական և պատմական. այս ամենայն կ'ազդեն ՚ի մարդ լինիլ կենդանի, լինիլ գործօն, լինիլ մտածու, լինիլ խօսուն և զուարթուն : — Այսպիսի աշխարհ մեր աշխարհն է : Այո՛, և

“Մեր աշխարհը պատգամահան է, որ բռնամտ է նորան յապող .

“Մեր աշխարհը ²այսպէս անն է, որ կայ շատ խաղ հանող :

“Այն ազգը որ երբ ասող զոմնի .

“Նա ինչ որ արտօմը սէր զոմնի ,” :*

Թողլով այս ընդհանուր տեսութիւններն և հնութեան վերաբերեալներն, մօտ դանք ներկայիս ²այլական բանահիւսութեան և գրականութեան : Արդի մեր ազգային երգասացութիւնն և գրականութիւնն բազմահոյլ մանր ու խոշոր աստղերով փայլիլուն աստեղատան մը կը նմանի, կամ բուրաստանի, յորում զանազան և գոյնզգոյն ծաղկունք են ծաղկած, մանիշակն, համաափիւուն, մեխակն, շինականն շուշան, վարդն բոսորային, ամեն ծաղկանց պերճ թագուհին. և այլն : Արդ տեսանեմք ²այսաստանի դարատանին ծաղկեալ են նունենիք, ծաղկեալ նշենիք : Թող

* Սէյեպ :

երևին ՚ի շարս այսոցիկ նաև անհոտ ծաղկունք, և ծառք
անպտուղք. այդ բնական է երկրի բնութեան: Իհայոցս այս-
օր ոմն դիւցազներգու է, ոմն հովւերգու, դուսաներգակ,
ողբերգակ, պատմագիր, թատերագիր, վիպախօս, հնա-
խոյզ, հնաստեղծ, բանաստեղծ, հրաւիրակ, քնարերգակ,
թարգմանող, ծրագրող, օրինագիր, խմբագիր, և այլն:
Յանկալի էր եթէ ուրոյն ուրոյն՝ դոնէ ականաւոր անձանց
գործք և կենսագրութիւնք դարուս հայ դրաղիտաց՝ հա-
ւաքող և հրատարակող ոք լինէր. ինչպէս փորձ փորձած
է արդոյ Պ. Միանսարեանցն ՚ի Ս. Պ. Բուրգ «Քնար
Հայկականով», որ ըստ ինքեան պատուական և թանգ
գործ է, և նախանձելի պէտք է հանդիսանայ ամեն կարող
անձանց:

Յարգելով իւրաքանչիւրի երկն ու կեանքն, կը փու-
թամ մասնաւորել խօսքս ներկայ գործոյս հեղինակին նկատ-
մամբ, Անուշավանայ հնաստեղծողին, ինչպէս որ ինքն Ար-
ժանապատիւ հեղինակն սիրած է այսպէս կոչել: Պատկան-
եան ծերունի տէր Վաբրիէլ, այժմ գտանի ՚ի Ս. Պ. Բուրգ
յայեղարդեալ հասակի 75 ամաց. որոյ հայրն բանաստեղծ,
ինքն բանաստեղծ, որդին բանաստեղծ, եղբօրորդին սորա
Քերովբէ Պատկանեան անդամ Ռուսաց կայսերական Ա-
կադէմիայի ՚ի Ս. Պ. Բուրգ. լեզուաբան, պրօֆէսօր Ա-
րևելեան լեզուաց, գրաքննիչ ՚ի նոյն մայրաքաղաքի, թարգ-
մանող և հեղինակող զանազան ընտիր երգոց և բանից,
հրատարակող այլ և այլ բանասիրական և քննական գը-
րութեանց հայ և ռուս լեզուաւ: Արդի ծերոյն Տ. Վաբ-
րիէլի՝ Ռափայէլ Պատկանեան, որոյ քնքոյշ և վսեմ տա-
ղերն գրեթէ ամեն բանասէր հայոց ծանօթ և սիրալի են
«Քամառ Քաթիպայ», երգարանով, և «Քնար Հայ-
կականով», — Մայր Արսի. — Թէ իմ ալեոր. —
Հիմի էլ լռենք. — Սոխակ ինչու դադրեցար, և այլ
բազմաթիւ երգեր, ամենքն ևս գոհարազարդ ընդելուզեալ,

Ը

սքանչելեօք լի. որք զմարդ կը հիացընեն, կը յափշտակեն, կը զմայլեցնեն, կ'եռացընեն պէս պէս խանդերով:

Նետեկալ կենսագրական մասն Պատկանեան Տ. Գաբրիէլին՝ «Բնար Նայկականէն», օրինակելով այս տեղ կը գնենք:

«Տ. Գաբրիէլ Պատկանեան՝ որդի Սերովբէի Տ. Պետրոսեան Պատկանեան, վարժապետ մականուանելոյ, ծնեալ ՚ի Տփլիս ՚ի 1802 ամի, փետր. 28: Ընուն մօր նորա Մարիամ Միքայէլեան ՚ի տանէ Ապէկայ Պապայ: Աշակերտեալ հօր իւրում, և ապա ՚ի Սեմինարիի Ռուսաց Ասորախանայ. ՚ի 1817 ամէ մինչև ՚ի 1827, վարեաց զպաշտօն վարժապետութեան ՚ի հողևոր դպրատան Նայոց և զատենագալութիւն ՚ի կանսիստօրիային Նայոց Ասորախանայ. պարապեալ ընդ նմին ՚ի թարգմանութիւնս և պէս պէս շարադրութիւնս, և ապա ՚ի նմին ամի փոխադրեալ ՚ի Նորնախջևան մինչև ՚ի 1845 ամն շարունակէր զիւր մանկավարժութիւն, կատարելով և զպաշտօն քահանայական, զոր ստացել էր ՚ի 1832, յունվար 17 ձեռնադրութեամբ մեծանուն Ներսիսի Արքեպիսկոպոսին ՚ի Գրիգորուպօլիս. (այն է Ներսէս Ա. կաթողիկոս Աշտարակեցին:)

Ի 1845 ամի տեղափոխեալ ՚ի Տփլիս քահանայագործեաց ՚ի Նորաշէն եկեղեցւոջ. և ամ մի և կէս վարեաց զպաշտօն Խաչէկօցի, վերատեսչութիւն ՚ի Ներսիսեան դպրոցի: Աւ ապա ՚ի 1851 ամի վերադարձեալ ՚ի Նորնախջևան հանդիպեցաւ շարաքաստիկ վիճակի և կորոյս զամենայն ինչ զոր ունէր, և ՚ի 1863 ամէ մինչև ցայսօր կայ ՚ի Սանկդ Պետրբուրգ յաննախանձելի դրութեան: Ի գրաւոր աշխատութեանց սորա սակաւ ինչ գտանի ՚ի լոյս ընծայեալ: Ի 1845 ամի էր գործակից «Պովկաս», հայերէն լրագրին ՚ի Տփլիս: Աւ ՚ի 1842—1851 ամնն յիւրում սեպհական տպարանի խմբագրէր ըզ- «Արարատ», շաբաթագիրն իւր: Ի 1820 թուի ՚ի լոյս

էաճ զհամառօտ քրիստոնէական տեւորակ « Ուղղափառութեան վարդապետութիւն », անուանեալ: — Ի 1825 զ« Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ », թարգմանեալ ՚ի հեղինակութենէ Դիոդորի Սիկիլիացւոյ: — Յերգոց սորա ապեալ են միայն, 1) Հայրենասէրք Արամեան: 2) Քրնէ քրնէ սիրուն որդի: 3) Վեղեցիկ Մախիջեան: 4) Քրտնաջան այգեպան: 5) Յուլունան Շամիրամայ: 6) Վեղգեղեալ: 7) Վեղապսակ պայծառանայ: 8) Աարդան Մամիկոնեան: 9) Շաւարշ Բ: 10) Միջնավէպք՝ անցք Հայոց ընդ Արասիս, և հիմնարկութիւն Նոր Մախիջեան քաղաքին Հայոց: 11) Սիկոյ: 12) Ուսումնատուութիւնք և ուսումնարանք Հայոց,:

Սոյն կենսագրութիւնն տպագրեալ է ՚ի 1868 ամին:

Չուզելով մորմոք և կսկիծ առթել ընթերցողաց, չեմ բանար այն տխուր ու սև վարագոյրն, զոր ծածկած է կենսագրողն « չարաբաստիկ և աննախանձելի », բառերով . . . : Յիշատակել կը փութամ սակայն այսպիսի հօր և ծերունւոյ գրական այլ և այլ մին քան զմինն առաւել թանկագին վաստակներն ևս, որոց ամենամեծ մասն տակաւին ձեռագիր կը մնան:

Ի 1852 ամէն ց1854 ամն շարագրած է « Հայկերզն », զորձ մեծագործ և ստուար, քառանդամ և ոտանաւոր, արուեստիւ, հմտութեամբ և հնարագիտութեամբ զեզուն, լեզուն և ոճն ողորկ, դիւրիչ և ախորժելի ընթերցանելեաց, ՚ի նկարագիրս կարի հետաքրքրական, ՚ի դիւտս ճարտար, ՚ի դիմսունութիւնս դիւրաթեք, միանգամայն և զուարճալեօք բարեխառն. ինչպէս են նաև իւր միւս զորձքերն: Միւսնոյն ժամանակամիջոցին գրած է « Անուշավան », « Տիգրան և Ահազն », Ի 1854 ամին ՚ի մէջ բանտին գրած է « Մրմունջք Յիսուսի ՚ի խաչին », զոր կցորդաբար լրացոյց խնդրանօք Ս. Հայրիկին և յայտմամբ ՚ի լոյս էած: — « Արամեերզն », որ գրեթէ հաւատար է

Ժ

«Հայկերդին», ՚ի 1854 ամին: «Մահ Պարեաի», ՚ի 1855 ամին: «Օււան և Փառնակ», ՚ի 1856 ամին: «Վաշտակ», արձակ և աշխարհարառ շարագրութեամբ, և «Վուսաբեր դուստր Հռաչի», ՚ի 1857 ամին: «Շաւարշ և Պարոյր», ՚ի 1858 ամին: «Մռնակ և Կարդոս», ՚ի 1852 ամին: «Մրայ գեղեցիկ», և «Մտածութիւն ՚ի վերայ Արշակունեաց», ՚ի 1860 ամին:

Բաց ՚ի վերոյգրելոց ունի այլ ևս երկասիրութիւններ, յորոց ծանուցեալներն միայն կը նշանակենք. «Մնառակ որդին», «Յեփթայէ», Միւս ևս «Վահագն», «Դաւիթ և Գողիաթ», թատերգական: «Համան և Մուրթքէ», թատերախաղ: «Մյցերութիւն գերեզմանին Օարմայրի», «Հռաչեայ»:

Կան և այլ բազում երգք և զանազան յորուածք պիտանիք և ընտիրք, յորոց մի մասն տպագրեալ են այս և այն ազգային պարբերական հանդիսից և լրագրաց միջոցաւ: Իսկ ՚ի 1870 ամէ հետէ գրած է «Փնջիկ պատմութեան», զոր հրատարակեց Մատիս: «Անասագրութիւն Ներսիսի Ն. կաթողիկոսի Հայոց», զոր կը հրատարակէ Արշալայան: Կան «Քարաձգութիւն Հ. Քերոբէի», «Փառանձեմ», «Չորս եղանակք տարւոյ», «Արդ պանդուխտ օրիորդի», «Օտերն ՚ի Մասիս», «Հեծութիւնք Ախուրեան գետոյ», «Տեսիլ Արդանայ Մամիկոնէի», «Հրածեշտ Արդանայ», «Մահ Սանատրիոյ», «Մանուկ Արտաշէս», «Ոչ գիր, ոչ Արապոս», «Սանդուխտ դշտոյի և կուսի պատարագ, կամ Շաւարշանեան Շուշան», յերիս տեսարանս: «Հայոց ազգի համար ինչ է եկեղեցին»:

Ահա որքան ինձ յայտնի էին Պատկանեան հօր գործքերն, որոց մեծագոյն մասն ՚ի բանտի յղացած, ՚ի ցաւս երկնած, և ՚ի մահիձս հիւանդութեանց է ծնած: Սման տխրակին, որ թէպէտ վարդենիէն խլուած, վանդակի մէջ

փակուած, զուարթութենէ ինկած, երկաթի մէջ կաշ-
կանդուած, և անծառ, անդալարի ու անծաղիկ՝ դէձ ու
ցուրտ վայրերը յածելով ՚ի մարդոց ձեռքէ ձեռք մատ-
նուած. նա առ ցաւս սրտին աւելի ուժղին իր վեզուակը
կը դրդրէ. իր կոկորդին և թոքին նրբաթեղ դռնակն բաց
ու խուբ կ'անէ. և կը հնչէ իւր սիրոյ սիրաղին սրինդն,
սոխակն առ իւր վարդ, Պատկանեանն՝ առ Հային, Ա-
րամ և Սահագն: Այն, նա հակառակ բնութեան, հա-
կառակ հիւսիսային սառուցեալ երկրին՝ ծաղիկ անթառամ
ծաղկեցաւ, հակառակ արկածից դաժանութեան և ամաց
ծանրութեան՝ քանի զնաց առաւել աշխոյժ դարձաւ.
քանի տառապեցաւ՝ այնքան պողաւէտ և բարգաւաճ
հանդիսացաւ ՚ի տաճարի բանին, և ՚ի պաշտօն Աստուա-
ծային և Ազգային: Վմանելով խնկենւոյն, որոյ քանի
պատառես կողերն և կեղեւներն՝ այնքան առաւել կ'ար-
տադրէ իւր երակներէն անուշահատ ծխանելիք: Վմանե-
լով երկրին՝ զոր քանի փորես և ՚ի խոր տանես, այնքան
թանգ և զուտ կու տայ արծաթոյ և ոսկոյ բովեր, ա-
դամանդ և պատուական ակունքներ: Վմանելով մեր ծեր
Մասիսին, որոյ ՚ի դազաթ քանի առաւել դիզանան
թանձրանան սառոյցք և ձիւներ, այնքան առաւել առատ
կը բաշխէ պաղորակ վտակներ, և կը գեղազարդէ իր շուրջ
դալարիս, հասկեր ու մարգեր:

Ամբողջ քսաններկու ամ է, որ Տ. Պարբիէլ
Պատկանեան ՚ի բանտս, ՚ի խոշտանդանս, և ՚ի վտարան-
դիս կայ, ընկերական ատելութեան կրից մրտկէն մրդուած,
զրպարտութեան մատնուած, ՚ի մէջ հիւսիսային դառնա-
գոյն սառնամանեաց, վիրաւորեալ ՚ի տանէ սիրելեաց . . .
Այլ հոգին Աստուած տուած է նմա հոգի տոկուն և
զուարթուն, հոգի վկայող ճշմարտութեան, հոգի շարչա-
րեալ հալածեալ՝ այլ անվեհեր և համբերատար վասն
արդարութեան, հոգի երկնից փառաբան, ազգի երդաբան:

— Իւզ թափեալ են քո կեանք, իւզ անոյշ, խուճկ և ստաշինն են քո բանք, ո՞ հայր պատուական :

Աղեռնագործաց գուպարք, շղթայից շոինդն և շարք, մահասարսուռ արդելանաց խոնաւ և խաւար նկուղներն, անսուվանից հեծեծանք, կապելոց անեծքն ու հայհոյանք, անստացելոց ցաւք, սիրելեաց յիշատակին կարօտ սիրտերու մրխամրխանք և հառաչանք . . . Այս և այսպիսիք էին մեր քերթողին կող ու կուշտ շրջապատող առարկայք, որոց ամենից մասնակից էր և ինքն ՚ի յողի ՚ի մարմին և ՚ի կիրս : Արկաթի դրանց փականաց ձայն և կապանաց ճռինչներն էին Սոսեաց քերթողին քնարն ու կիթառ, սարդի թանձր ոտայն էր անտառ, ճանձն և մուկներ՝ բիւլբիւլ ու տատրակ, պատերէն դուրս ցրցուած քարերու սուր ծայրերն՝ էին լեռն և բլուրներ, և խիճերու բացուած խորշերն՝ ծործոր և ձորեր, կաթիլ կաթիլ կը ծորային նկուղի առիքէն և որմերէն ՚ի վայր բորբոսն ու զիճաջուր, սոքա էին փոխանակ կանանչի և իբրև աղբիւր, հին ու աղտողի հողէ ճրագ՝ առկայծեալ պատրուզով կը պլպլար մէկ անկիւնը, և այն էր մեր բանաստեղծին արեգակն . . . : Ա՛հ քանիցս հիւանդացաւ և նա . քանիցս անձն ՚ի մահ՝ և մահն ՚ի մահիճս մերձեցաւ, այլ Վաբրիէլ հրեշտակն ՚ի թիկունս Տ. Վաբրիէլի հասաւ . հայրն Աստուած՝ երկնից Առափայելին միջոցաւ՝ մեր Առափայելի հօր վրան զթացաւ, զնա նախախնամեց, զնա յապահանութենէ ազատեց, և պիտի ազապէ իսպառ :

Սպանիացի Սերվանթէս քերթողին արկածները խիստ պատշաճ կը պատկանին մեր քերթող Պատկանեանին, ինչպէս և ինքն պատշաճապէս յօրինած է իւր երգոց միոյն նախերգանաց կարգին, առ իւր երգս :

“ Ա՛լ գեղե ըն՝ ի՞նչ աղբերկ արդի ներսեւ էս ծրնաժ,
Այս՝ դո՞ւ անդ էս յըլուցած, և թնտնորդոյնն էղև անդ .

Ուր զՕրն աբխազն Կանի ափս յամեցոյց զէտր Գահու-ամիր-
 Ե- Սերճանիւն զէր Տօն Բէշն, Բախժեալ զի-ցազն անդ
 Երկնեաց : ։

Իբրև զլուխ գործոց մեծ հեղինակիս՝ արժան էր նա-
 խապէս « Հայկերզն », ածել ՚ի լոյս. ապա « Արամերզն »,
 և ըստ կարգին ապա « Անուշափան », սակայն ինչ ինչ
 դժուարութեամբ հանդամանաց կը մնան նորա առ այժմ :
 Յոյսս մեծ է առ Աստուած. թէ ինչպէս յաջողեցաւ
 բազդն որոյն Անուշափանայ ՚ի գերութեան վիճակէ, ՚ի
 դբոյ և ՚ի տղմոյ ելանել յարև, երևիլ ՚ի հայս, լինելով
 գերեզարձ. նոյնպէս և յառնեն կենդանանան « Հայկն ու
 Արամ », և ամենայն զիւցազունք հեղինակին, և քեր-
 թուածք :

Արդ իբրև առհաւատչեաց ՚ի ճաշակ՝ ընդունեցէք զայս
 հաղներդ անուշահամն Անուշափան, ո՛ր բանասէր և հայ-
 րենասէր հայկազնեայք, մինչև լցուին լիուլի մեր յոյսն
 և ձեր փափաքն :

Արժանի մեծի գոհութեան էք դուք. Մեծ. Ս. էՖ.
 Տէտէեան, որ հաճեցայք զԱնուշափանն ազատագրել, Չեր
 արդիւնաւոր մամլով ՚ի լոյս հանելով : Նոյնպէս և դուք
 Մեծ. Ս. էՖ. Մամուրեան, որ Չեր իմաստութեան նը-
 վիրեալ ամենաթանգ ժամերն չը խնայեցիք, վաստակելով
 ՚ի մասին տպագրական սրբազրութեանց, զԱնուշափանն ան-
 ղալապ ՚ի հանդէս ածել : — Օրհնութիւն ձերոյն ՚ի զը-
 լուխս Չեր, յորմէ և ինձ մասն լիցի :

ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՑ

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

1875 Նոյեմբեր 7, Ա. Պօլիս :

ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂՍՈՒԹԻՒՆ ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՆՑԻ ԵՐԻՑ ԱՒՈՒՐՑ


Անուշավան էր Հայոց ազգի այն հին ժամանակաց նահապետը, որ գոլով որդի Կարդոս նահապետի, Արայ գեղեցիկի թոռն, և քաջին Արամայծոռն, Հայկէն շառաւիղեալ ուղղազիծ սերնդեան տասներորդն, չունելով արու զաւակ ժառանգ իւր աթոռոյ, միջահատ կտրեց նահապետական զահակալութեան որդւոց յորդիս յաջորդութիւնը: Երբ Արայի որդի Կարդոսը՝ Շափրամ թագուհւոյն օգնական հանդիսանալով՝ նորա հետ միասին մեռաւ Նինուա թագաւորի դէմ խմբած պատերազմի մէջ, Անուշավանտաք տարեկան ընկաւ դերի, և վաբեցաւ Ասորեստանի մայքաքաղաք Նինուէ, ուր՝ արքայական դրանք քնաց շատ տարի որպէս մէկ դերեալ պատանի: Բայց յետոյ իւր աջալըջութեամբ և խոհեմութեամբ՝ կրկին ստացաւ Նինուասէն Հայոց նահապետութիւնը, և վերագարծաւ Հայաստան, և նորագեց՝ Հայկի և Արամայ՝ կործանեալ անկախ տէրութիւնը:

Այս բանաստեղծական վիպասանութիւնը, կամ լաւ ևս ազգային պարզ վէպը, հիմնեալ միայն խորենացւոյ Հայոց պատմութեան դիւցազնական ժամանակի համառօտադիծ անցից վերայ, բաժանեցի քսան և չորս յօդուած, որ կարծազրութեան համար երգ անուանեցի, առանց պահելոյ դիւցազներգական վիպի ճշգրիտ կանոնները, ձեւքը, զարդերը, և ծաղկավիթիթ նկարները, միայն պարզութիւնը և համառօտութիւնը պաշտելով, և ահա այս քսան և չորս երգ անուանեալ յօդուածոց Ա՝ որպէս նախնական ստորագրում է համառօտ՝ Անուշավանի, այս երգոց դիւցազնի՝ արտասուելի վիճակը, և որպէս հանկոյց՝ դիւցազնուհւոյ Գերկէթ գլխոյի, որ մտացածին անձանց մէկն է, հանգիստեմ՝ և սիրահարութիւնը: Բ. որպէս և յետագայ ԺԶ. յօդուածքն պիտի համաբուին Տիշնէրէ, որոց նախընթացն է Անուշավանի ծագումն, որոյ պատմութեանն մտադիւրականը է դնում դիւցազնուհին, որպէս թէ առաջին անգամն է լսում: Գ. է շարունակութիւն նորա, և պատկեր նոցա անդրագարծ սիրոյն: Դ. որպէս յետագայքն՝ մինչև ի ԺԷ՝ որպէս Տիշնավէպէն նկարագիր մտացածին վիճակի մօրն Անուշավանայ: Ե. Ծագումն Գերկէթի: Զ. Աւանդութիւն ծագման Շափրամայ. Ը. Շարունակութիւն նորա, թէ ի՞նչ դիպուածով Շափրամ զառաւկին Նինուսի և թագուհի Ասորեստանի: Թ. Շափրամի ինքնակալութիւն, և Արային՝ միտքը բերելը, և նորան իւր սերը յայանելը: Ժ. Արայի բացասութիւնն:

ԺԱ. Շամիրամի արշաւանն 'ի Հայս : ԺԲ. Ջրադաշտը՝ որոյ անցքն չէ հիմնած
 Խորենացւոյ աւանդութեանց վրայ : ԺԳ. Հայոց և Ասորոց բանակները : ԺԴ.
 Շամիրամայ և Արայի հանդիպումն : ԺԵ. Շամիրամի՝ Արայի տանը հիւրընկա-
 ւութիւն գտանելն : ԺԶ. Արայի տան կենցաղավարութիւնը և Նուարդ աիկնոջ
 քաղցրութիւնը և անտեսութիւնը : ԺԷ. Հայկայ նեաի յափշտակութիւնը : ԺԸ.
 Ա երջին ճակատամարտը և Արայի մահը, որ էր առաջին մարտիրոս ողջախոհու-
 թեան : ԺԹ. Գերկէթի երթալն յարքունիս, Նինուասայ, և Հայկի նեաի վե-
 րադարձն : Ի. Անուշավանի քաջութիւնն 'ի մենամարտի : ԻԱ. Անուշավանի
 յաղթանակն : ԻԲ. Հայոց պատգամաւորաց դալն : ԻԳ. Գերկէթի պատգամաւո-
 րաց հետ դաշնագրութիւնը : ԻԴ. Անուշավանայ փառաւորութիւն և ազատու-
 թիւնը :

Այս՝ երգ անուանեալ յօգուածոց մէջ յիշուած շատ անցքերը՝ սնին Արա-
 մերզի մէջ պատմած անցից մէջէն իւրեանց ծագումն և բացատրութիւնը, վասն
 որոյ և շատ անգամ ակնարկութիւն է լինում նորա վերայ, ինչպէս յայտնի է
 ծանօթութիւններէն՝ որ աստղանիշերով երևում են իւրաքանչիւր երեսի ներքոյ,
 որոց մէջ խառն կան և ինչ ինչ խորհրդածութիւնք հեղինակի :

Նպատակն է ցոյց տալ թէ ամենայն վիճակի մէջ մարդ կարող է հանդիպիլ
 յաջողութեան և անյաջողութեան, և միայն առաքինութիւն կամ մասնաւորապէս
 ազդասիրութիւնն է յաջողութեան ժամանակն՝ զարդ, և անյաջողութեան մէջ
 միսիթարութիւն, և թէ մարդ անյաջողութեան մէջ չպիտի ընկճի, քաջայոյս
 լինելով՝ որ շատ անգամ զկնի անյաջողութեան գալիս է անակնկալ յաջողութիւն
 սր երբեմն լինում է արգասիք բարեբաստիկ դիպուածոց, և երբեմն պառու անձ-
 նական ջանից և ճգնութեանց : Միսիթարական է՝ երբ առաքինութիւնն հան-
 դիսանում է յաղթական, և մոլութիւնն զկնի՝ թէ և բազմաժամանակեայ և եր-
 կարատե յաջողութեանց՝ խորտակվում է առաջի առաքինութեան, և նորա ա-
 մենայն յաղթութիւնք որպէս ծուխ են ցնդվում և անհետանում :





Դու լսե՛լ ես՝ կին հրաշագեղ՝ անուն Հայկայ վեհագին :
— Ա՛յ չէ լսած, ա՛յ պատանի, համբառ մեծի դիւցազին :

Երեւ 5

Մ
Ե
Ր
Գ
Ա



ԵՐԳ Ա

ՍՐԻՆԳԴ ան՝ Յաւերժահարսն Արարատեան դաշտերու ,
Քաղցր ձայնով լից ծոցերը կանանչարօտ լեռներու ,
Թո՛ղ ծափ զարնեն հովիտք՝ բլուրք՝ Կալարագեղ՝ ծաղկածին ,
Ուրախակից լինին հոսմանց մանրակոհակ Երասխին :

Գարձեալ ուրախ՝ զուարթագէմ կ'պերճանայ Հայաստան ,
Միւսանգամ կը զարդարվի պճնեալ զարդուք հարսնութեան ,
Կարմիր կանանչ կը հանգերձէ գլխածածկոյթ քողերը ,
Ոսկեփետուր թռչնոց նման կը գեղգեղէ երգերը :

Գու երգակից այս 'եոր հարսին՝ մշտագարուն Յաւերժահարսն ,
Ե՛լ ընդ առաջ պանդուխտ մանկանց , որք բերեն քեզ զքո փառան ,
Այս գերեզարձ քաջիկ որդւոց , այս գաղթական Արամեանց ,
Պիտի նորոգ կեանք պարզեւէ բազմադարեան Հայկազանց :

Նժգեհացած այս զաւակունք լերանց դաշտաց հիւսիսի ,
Արտասուօք շատ սղտորեցին պարզ ջրերը Տիգրիսի ,
Լայնածաւալ Նինուէի մէջ վիզը ծռած ման գալիս ,
Քեզ էին միշտ միաքը բերում , և հառաչում և լալիս :

Այլ քան զամենն մէկն էր տխուր և անփոփոխ թախծաղին ,
Հօրէն մօրէն որք մնացած յիւր մանկական հասակին ,
Սպիտակ մարմինն շուշանափայլ դալիահար էր դեղնութեամբ ,
Վարդափթիթ կարմրութիւնն թառամել էր արտմութեամբ :

Ո՛չ համագամ խորտիկները արքայական սեղանոյ ,
Ո՛չ օշարակք են նմա քաղցր , ո՛չ բաժակ ինչ գինւոյ .
Հայաստանի թոնրի հացը , խորովածի անձուկը ,
Չէր կարենում մտքէն հանել այն ապարտղդ որբուկը :

Գառն էր նորա այսպէս կեանքը , օրն արևը սևորված ,
Քաղցած , ծարաւ ման էր գալիս՝ քաղաքի մէջ մոլորված ,
Մոռանում էր՝ թէ Նինուասայ ամենաճոխ խոհանոց ,
Բաց ունէր միշտ նորա հանդէսը իւրեան առատ դուռն և ծոց :

Ո՛հ , ոսկեղէն էր այս շղթայ , այլ շատ ծանր էր կրողին ,
Լայնածաւալ քաղաքն էր բանտ՝ նեղ ու մթին գերւողին .
Երբ յիշում էր Հայաստանի ձիւնապաղաթ լեռները ,
Հոգւոյ մէջը փլչում էին ուրախութեան սիւները :

Ո՛ւր գնացին այն օրերը՝ մինչ նա հեծած յիւր նժոյղ ,
Եղջերուաց գէմ իւր աղեղէն արձակում էր նետ զոյգ զոյգ ,
Բլրէ բլուր վազեցնում էր փրփրացած իւր սօս ձին ,
Որ ուլի պէս հնազանդ էր նորա բազկին և սանձին :

* Բանաստեղծական առանդու-թիւն է՝ ինչ երբ Տերաւա Աարգոս և Անուա-
շափան քերէ լարեցաւ ՚ի Նինուէ , Անուաշափանի մայրը , Աարգոսի հարան
հրաշագեղ Ասարդիէ՝ եկել էր թաթուակ Նինուէ , և Տրայն արեւոտ-թեամբ որդ-
այն էր անփոփոս : Մերջ ՚ի մահ՝ թանօթեա էտ որդաւոց և Տերաւա , որդին լեա-
ղէց զՄայրն և այս էր նորա այս վերջին արարման-թիւնն :

Որսորդները չէին հասնում վաղելով յետ այն սուին ,
 Արարացի էր նժոյզը պարզե եկած Կարգոսին ,
 Մատաղ տիովք սիրեց այն ձին , հօրէն խլեց արտասուօք ,
 Մայրն ուրախ ձի նստեցրուց իւր զաւակին իւր բաղկօք :

Բայց նա յայնժամ տաս տարեկան էր ծնողաց ձեռումը ,
 Մահը հասաւ հօրն ու մօրը , թաղուեցան մէկ օրումը ,
 Տանուհինդ ամք էին անցել , արդէն լեալ էր պատանի ,
 Գերութեան մէջ մոռացել էր վայելք կենաց ընտանի :

Նոճի նման բարձրահասակ , կաղնոյ նման հաստատուն ,
 Բազուկները են երկաթի , դիտակ տեսլեան է փայլուն ,
 Հայկն ու Արամ են երեւում նորա չքնաղ իրանում ,
 Մանկացել են Արայ , Կարգոս պայծառափայլ դիտակում :

ՀԱՆԳԻՊՈՒՄՆ ԴԵՐԿԷՔ ԴՇԽՈՅԻՆ

Մէկ օր՝ երբ որ այսպէս թախծեալ ման էր զալիս հետեակ ,
 Մէկ ձայն լսեց , որ ասում էր՝ «Ինչ ես շրջում միայնակ» ,
 Աչքը ձրդեց պատուհանի , տեսնէ մէկ կին գեղեցիկ ,
 Որ նստած էր իւր սենեկում , և սեւազդեստ իւր ձորձիկ :

Հանդիպեցան այս երկուսի կայծակնափայլ աչքերը ,
 Հուրը ցոլաց , բոց վառեցաւ , բորբոքուեցան միտքերը ,
 Պատանեակը մնացել էր պատուհանին հայելով ,
 Կինն նորա չքնաղ դէմքը լափլափում էր նայելով :

Բացուեցաւ դուռն , և պատանին մտաւ այն մեծ ապարան ,
 Ամենայն տեղ ոսկի արծաթ փայլում էին գեղազան ,
 Ծառայք , նաժիշտք , սպասահարկք և պաշտօնեայք անհամար ,
 Սենեակներում վեր վայր շրջին , շարժման մէջ են անդադար :

* Անուշազանն էր այսպէս կարծումս արտաւ , բայց իւր գերութեան վերջին օրերն իմացաւ , որ ծայրն ողջ է , և ծածուկ կենում է ի նինուէ , և երբեք աչքին չէ հեռացրնումս զորդին :

Այս ամենայն ճոխութեանց տէր կայր յանդիման պատանւոյն ,
 Զմայլած էր նորա տեսլեան՝ որպէս մեռած կենդանւոյն .
 Չեռքէն բռնեց նստեցուց մօտ , և սկսաւ խօսելու ,
 Պատանեակը ուշաբարձ էր , և չունէր ոյժ լսելու :

ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆ ՆՈՑԱ

Ո՛վ պատանի չքնադիրան , ասաց կինն հրաշագեղ ,
 Ինչի՞ համար ես սուս կեցել , քո լուութիւնն է շքեղ ,
 Ո՞րքան հզօր է այդ զրոյց , և քաջարան քո խօսքըդ ,
 Աչքդ լեզու է ճարտասան , թովչարար են հայեացքըդ :

Դու կապ դրիր լեզուիս վերայ , պատասխանեց պատանին ,
 Աչքդ ունքդ շղթայ դարձան , միտքս ու հոգիս դերեցին ,
 Ես գերի եմ՝ Նինուէի մէջ , դու ինձ առիր նոր գերի ,
 Այս կապանքէն չուզեմ փրկվիլ , զո՞հ եմ այո քո շղթայի :

— Մի՛ քեզ այդպէս նուաստացներ , դ՛ու ես հոգւոյս տիրողը .
 Երջանիկ է աշխարհի մէջ քո տարփածու սիրողը .
 Ես քեզ տեսայ , բարեբաղդ եմ , ո՛վ անձանօթ պատանի ,
 Ի՞նչ պատճառաւ պիտի լինիս գերի՝ ի մէջ Նինուէի :

Նինուէն մեծ է և բազմամարդ՝ պատասխանեց պատանին ,
 Ճաշ ու ընթրիք իմ կ'ելանեն ՚ի սեղանոյ արքային .
 Բայց ես ազատ եմ՝ ծննդեամբ՝ զաւակ Մասեաց լեռնոտեաց ,
 Արիւն է ինձ գինւոյ բաժակ , և զզուելի համ խորտկաց :

Դառն է իմ կեանք գերութեան մէջ , տարաբաստիկ իմ վիճակ ,
 Ինձ ճանաչում են միայն անբաղդ անուամբ գերի պատանեակ ,
 Բայց գերութիւն չէր իմ բաժին , ես աշխարհի տէր էի ,
 Հիւսիսայնոց հրամանահան , տիրող ազանց և ազդի :

Չէին ծառայ իմ նախորդքն , ես էլ չէի պաշտօնեայ ,
 Հազարք և բիւրք ինձ հնազանդ , կամք իմ օրէնք էր նոցա .
 Յանկարծ կորաւ ազատութիւնս , ծնողքէս որբ մնացի ,
 Գերի ընկայ յԱսորեստան , և դաղթեցայ յայս տեղի :

Ո՛րքան մեծ է նինուէ քաղաք , այնքան ծանր է իմ բաժին ,
 Ո՛րքան լայն է Ասորեստան , այնքան նեղ է իմ անձին ,
 Ես մէկ ոստ եմ ծառէն կտրած , ինձ տանում են ալիքը ,
 Չունիմ մէկ հատ ինձ օգնական՝ որ ազատէ իմ կեանքը :

Ես եմ ահա , քո օգնական , կանչեց կինն այն գեղեցիկ ,
 Քո դանկատը ինձ կայծակ է , փայլակնացայտ հուր , շանթիկ ,
 Սրտիս մէջ են այդ բոցերը բուռն սաստկութեամբ բորբոքվում ,
 Հողիս ներսս այրրվում է՝ անշէջ ցոլմամբք տոչորվում :

Ասա՛ , քաջիկ՝ թէ դու ո՞վ ես , ես յաւիտեան քո , քո եմ ,
 Գանձով , ոսկւով ու ճոխութեամբ քեզ օգնելու պատրաստ եմ ,
 Քեզ տալիս եմ սիրտ սիրավառ՝ կրակի պէս ջերմադին ,
 Չեռքս սիրտս քեզ են ձօնված , քեզ նուէր է իմ հողին :





ՊԱՏԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԾԱԳՈՒՄՆ ԻՒՐ

Գու լսել ես՝ կին հրաշագեղ՝ անուն Հայկայ վեհագին :
 — Ո՛վ չէ լսած՝ այ պատանի , համբաւ մեծի դիւցազին :
 — Թէ այն հռչակ քեզ հասել է՝ զա՛րդ Միջագետ աշխարհի ,
 Ապա ծանօթ ես իմ նախնեացս . . . նա է արմատ իմ տոհմի :

— Ո՛չ ապաքէն՝ սիրելի՛ք իմ՝ Հայկը թողեց Բարիլոն ,
 Եւ հեռացաւ Միջագետքէն դէպ ՚ի հիւսիս ըւր մղոն ,
 Մեր նախահայր Բելը գնաց՝ որ հեա քերէ այն քաջին ,
 Բայց իւր կեանքի թելը կտրեց սաստիկ հարուած մի նետին :

Հայկայ նետը երկնառաք էր , այժմ՝ Նինուէ կայ պահած ,
 Հայաստանի բաղդն ու պարծանք այն նետի հետ է կապուած ,
 Իմ հզօր մայր Շամիրամը առաջ տիրեց այն նետին ,
 Ապա կարաց տիրել Հայոց լայնածաւալ աշխարհին :

Մի՛թէ դուստր ես Շամիրամի , յանկարծ կանչեց պատանին ,
 Եւ փաթթուեց քնքոյշ դիրկը՝ որ բաց պահել էր այն կին ,
 Շրթունք շրթանց հանդիպեցան , աչքը թափեց արտասուք ,
 Տոգորուեցան երկոցունց այտք , բայց տրամուծեան չէր այս սուղ :

Գրկաց մէջը բռնած ունէր պատանւոյն այն նոր հարսը ,
 Լանջաց վերայ պինդ սեղմում էր , համբուրում էր երեսը .
 Գու Արայի շառաւիղն ես , կանչում էր ու համբուրում ,
 Մօրս անթիւ պարտուց համար՝ ես քեզ կ'անեմ հատուղում :

Գշխոյ, կանչեց պատանեակը, յինչ բաղդ ընկաւ իմ կեանքը,
Գու զիս արիւր արժան սիրոյդ, ինձ բացել ես քո զիւրկը,
Ես քո փայլուն այդ աչքերուն նուիրում եմ բիւր համբոյր,
Լուսափայլ այտքդ իմ շրթունքէս կ'առնուն սիրոյ նոր սնդոյր:

— Համբուրէ՛ զիս՝ որքան կամիս, ես էլ քեզ կու համբուրեմ,
Կէս համբուրիս է նուէր հողւոյս, կէսն էլ մօրս կը ձօնեմ.
Նորա սիրտն սերափաղաղ չը հասաւ իւր ցանկութեան,
Զքնաղ Արայն նորա սէրը շիջոյց աղբերք իւր արեան:

— Այլ ես թուն եմ այն Արայի՛ Անուշաւան իմ անուն,
Իմ հայր Կարգոս մարտի մէջը թափեց անպարտ իւր արիւն,
Համիրամի էր օղնական, նորա եղև մահակից,
Քո մայր իմ հայր ՚ի միասին անկան կործան վիրալից:

— Անուշաւան՝ քաղցրիկ անուն, իմ սէրը քեզ է ձօնված,
Ստեանցս մէջ զիւր երեսդ, աե՛ս՝ որքան է սիրտս վառված,
Քո հօր, իմ մօր արիւնները մարտի դաշտում միացան,
Մեր սէրն այսօր պիտի խառնէ այս ամայի ապարան:

Գերկէթ գշխոյս սրտիս սէրը գնում եմ քո ոտից տակ,
Անուշաւան իմ բաժին է՝ շքնաղ նախնւոյն փոխանակ,
Ես բարեբաղդ քան զիմ մայրը, Արայի տեղ քեզ գտայ,
Հողիդ մաքուր, սէրդ անարատ, արիտուր սիրոյս նա կու տայ:

— Գերկէթ գշխոյ հըրաշագեղ՝ գու զիս կ'անես բաղդաւոր,
Քո գրկաց մէջ պիտի մոռնամ հողւոյս վիշաքը բիւրաւոր.
Այլ օղնական չէ՛ ինձ պիտոյ, և ո՛չ այլ ինչ սփոփանք,
Գու ես միայն իմ ցնծութիւն, իմ զբօսանք իմ բերկրանք:

— Այն, ես եմ Անուշաւան, ես միշտ այն եմ ցանկանում,
Որ քո վշտաց և նեղութեանց տամ ես իսպառ մոռացում,
Հարստութիւն իմ անբաւ է, քեզ է ամենն նուիրում,
Սիրտս ու հողիս բոցով սիրոյ ՚ի սէր քո է բորբոքում:

— Այդքան զոհին ինչ արիտուր պիտի ես տամ Գերկէթ ջան ,
 ես մէկ անտէր որք գերի եմ , և Նինուէն իմ արգելան ,
 ես սիրում եմ քեզ ճշմարտիւ , բայց ինչ է իմ այս սէրը .
 Գին չունին քո այդ զոհերը , անգին է քո նուէրը :

— Քո այդ սէրն ինձ՝ բաւական է՝ Անուշավան սիրելի ,
 Դու ազատ ես այսօրվանէն , ես եմ եղել քո գերի ,
 Քո գրկաց մէջ է իմ հանդիստ , քո լանջք են իմ ցնծութիւն ,
 Իւրաքանչիւր համբոյր շրթանց՝ ինձ համար բիւր ճոխութիւն :

— Եթէ այդ է քո ցանկութիւն՝ իմ գեղեցիկ Գերկէթ ջան ,
 ես կ'դառնամ քեզ համար խունկ , դու իմ անձին խնկաման ,
 Քո կրակով ես կու հալվիմ , դու իմ հոտով կ'ըզմայլիս ,
 Դու ինձ համար քոյր և հարսն և գթաւոր մայր կ'ըլնիս :

— Անուշավան՝ քաղցրիկ փեսայ , դու կ'ըլնիս իմ ամուսին ,
 ես կենակից քեզ կը լինիմ , պիտի ապրինք միասին ,
 Քո հայրենիք ես կը սիրեմ , և կ'անեմ ինձ հայրենիք ,
 Նորա փուշը կը համարիմ անուշահոտ վարդենիք :

— Իմ աննման չքնաղ Գերկէթ , իրաւ դու ինձ կու օգնես ,
 Իմ հայրենեաց սէրը սրտիդ մէջ ինձ հետ կու պահես ,
 Իմ սիրական Արարատին քեզ հետ այց կու ելանենք ,
 Չիւնազաղաթ լերանց վերայ ազատութիւն կու վայելենք :

— Իմ անձկալի չքնաղ փեսայ , դու իմ սիրտս այրում ես ,
 Քո սրտի մէջ այլ սէր ունիս , դու լեռները սիրում ես .
 Իմ նախանձը դու շարժում ես , ինձ տիրում են յաչաղանք ,
 Այն լեռները դու քեզ համար պիտի անես զբօսանք :

Ո՛չ , ես չուզեմ , որ բաց յինէն՝ այլ սէր լինի սրտումըդ ,
 ես միայնակ պիտի կենամ՝ բնակուած քո հողումըդ ,
 Արարատի սէրն ուզում եմ որ իմ սրտիս մէջ լինի ,
 Որ իմ սէրս նորա սիրով՝ սիրականիդ յայանըվի :

Գու ինձ սիրէ . . . ես կը սիրեմ՝ քո անձկալի Հայաստան ,
 Գու զիս գերէ . . . ես քեզ կու տամ՝ ազատութեան նոր խիլայն ,
 Սիրոյդ կապանքն դիր իմ վերայ , զիս քեզ արա՛ ամուսին ,
 Հուտ կը տեսնենք Արարատեան դագաթունքն միասին :


— Արարատեան աշխարհի մէջ գու կը լինիս տիրուհի ,
 Տիկին կ'ըլնիս Հայոց ազգի և Հայաստան աշխարհի ,
 Համիրամայ ժառանգ կ'ըլնիս , նորա սիրով ես վառված ,
 Ես քեզ համար կ'ըլնիմ Արայ , կարդոսէն եմ ես ծնած :

— Անուշավան՝ ինձ հասկացուր , իրաւ թո՛ւն ես Արայի ,
 Այս ինչ բաղդի հանդիպեցայ , Արայ հանդէ յիմ գրկի ,
 Համիրամայ ցանկալի կապ ընկալաւ արդ մեր սիրտը ,
 Գերկէթ դառաւ հարսն Արայի . . . անչափ է այս իմ բաղդը :

— Բարեբաստիկ լեր գու Գերկէթ՝ ես միշտ այդ եմ ցանկանում
 Հողիս , սիրտս սիրով վառված՝ քեզ եմ միայն նուիրում ,
 Սրտիս մէջը այլ սէր չը կայ , միայն քո սէրն է փրուած ,
 Քեզ սիրելով զիսեմ որ ես պարտք եմ տալիս հայրենեաց :

— Քո հայրենիք՝ իմ սեպհական է այսուհետ՝ իմ փեսայ ,
 Ես հայ եմ , հայ , այն վայրկենէն՝ երբ մէկ անգամ քեզ տեսայ ,
 Նինուէն ինչպէս քեզ համար է , նոյնպէս և ինձ ատելի ,
 Ես էլ Նինուէ քաղաքի մէջ համարում եմ զիս գերի :

Փոքր ինչ հանդիր՝ Անուշավան , իմ գրկաց մէջ ա՛ռ ողի ,
 Տեսնում եմ որ իմ այս սիրոյն հաւատում է քո հողի .
 Ինձ պատմէ՛ քո նախնեաց բանը , պատմէ՛ ինձ քո անցքերը ,
 Թէ ինչպէս գու գերի ընկար՝ մեր քաջերու ձեռքերը :



ԵՐԳ Գ

ԶՐՈՅՑԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԱՅ ԵՒ ԳԵՐԵԿԻՑԻ

— Ինուաւուրց էր Շամիրամը՝ երբ Հայաստան նուաճեց ,
 Զքնաղ Արայն նուարդի հետ իւրեանց արեան մէջ թաղեց ,
 Իմ հայր Կարդոս գերի ընկաւ այս թագուհւոյ ձեռքումը ,
 Ասորեստան տիրապետեց մեր հայրենի երկրումը :

Յաղթող դշխոյն մեղիր եկաւ , խնայեց Կարդոս պատանւոյն ,
 Քառանգ առաւ Արարատայ և Արայի ամրոցն :
 Անուն տուեց ՚ի սէր իւր հօր , կոչեց Արայ Արայեան ,
 Որբ չմնաց մեր հայրենին , տէր ունեցաւ Հայաստան :

Բայց երբ նինուաւս իւր մօր դիմաց բացեց դրօշ դու մարտի ,
 Գէտ Հայաստան փախաւ զօրքով այն բազմայաղթ թագուհի .
 Ծերայել էր Շամիրամը , բայց զիւր հողւոյ մանկութիւն ,
 Չէր կարացել տկարացնել վաթսուսամեայ ծերութիւն :

Ասորանազեան քաջարի գունդք ելան ընդգէմ նինուասայ ,
 Կարդոս հայր իմ զօրագլուխ և առաջնորդ էր նոցա .
 Մարտի մէջը սրահար անկան և Շամիրամ և Կարդոս ,
 Հայաստանը միւս անգամ թափեց արիւն յորդահոս :

Մեռաւ մայրն իմ՝ երբ Ասորիք՝ մտան քաղաք Արմաւիր ,
 Հօրըս մօրըս մահուան սուգը՝ սլաօնց երկինք և երկիր ,
 Տաս տարեկան հասակիս մէջ՝ ընկայ զերի Ասորոց ,
 Նինուասը զիս իւր տանն մէջ՝ պահպանում էր ընդ որդւոց :

Ահա՛ անցին տասնուհինգ ամք՝ որ Նինուէէն չեմ ելլած ,
 Մէկ օր ուրախ չեմ անցուցած , և սիրտս չէ սփոփուած ,
 Առաջին օր իմ կենաց մէջ՝ ինձ այս օր է Վերկէթ շան ,
 Որ քո զրկաց մէջ մոռացայ իմ վիճակն թախծական :

— Անուշափան՝ այս առաջին՝ է քո կենաց ուրախ օր ,
 Այսուհետև ուրախ կ'անցնի կեանքդ զուարթ անրուր ,
 Ես քեզ համար հարսն կ'ըլնիմ , մայր կը դառնամ զթառառ ,
 Ստեանցս մէջ քեզ կը պահեմ , քեզ կու տամ սէր անարատ :

Բայց ասա ինձ՝ ո՞վ էր մայրդ , նա էլ քեզ սէս սիրուն էր ,
 Կամ Կարգոս ուր՝ նախկին նուազ նըրան տեսել , գտեր էր ,
 Բարեբաղդ է նա կանանց մէջ՝ որ սիրելոյ մահէն յետ ,
 Շուտ կու գտնէ երախտաւոր մահու ճամբան արահետ :

Ես թէ քեզ շուտ չըզանէի , իմ կեանք էր ինձ դառնութիւն ,
 Ես էլ իմ տէրս եմ կորուսել . . . հողիս լի էր տրամութիւն ,
 Երբ քեզ տեսայ շուտ իմացայ՝ որ քո ծնողք ինձ համար
 Են քեզ ծնել և զարգացրել , դու ինձ սփոփանք տրուեցար :

— Ես կը բերկրիմ՝ Վերկէթ տիկին՝ որ դու ինձմով ուրախ ես ,
 Որ ամեն վիշտ և թախիծքդ սրտիդ մէջէն կը մերծես .
 Ես քեզ այնպէս պիտի պաշտեմ՝ որ քո սրբախն տրամութիւն՝
 Միւս անգամ չը հանդիպի . . . այս է իմ միշտ ցանկութիւն :

* Անուշափանի մայրը Ասորիկը մեռած զէր Հայաստան , այլեկտեա Նինուէ ,
 և հնգէստանն ամ Ժամուսի մեալով , և իւր սրբաոյ Գերուսեանն վրայ սրա-
 ւով վերջին օրը յայտնվեց սրբաոյն և մեռաւ , և թողաւեցաւ , բայց այս ևս
 Անուշափան այս ճիշդին չյայտնեց Վերկէթին :

— Յանկութեանդ կը հասանիս՝ Անուշավան իմ շքեղ,
Առիւծի պէս Մասեաց վերայ կը լսվի քո ձայն ահեղ,
Ես քո վերայ մտիկ տալով՝ սրտիս մէջ՝ տի պարծենամ,
Թէ սա իմ է այժմ, և յասպայն պիտի լինի յարածամ:

— Այո՛, քո եմ այժմ և յասպայն, ինձ հաւատան, գեղեցիկ,
Գու իմ բաղդ ես, քեզմով պիտի միայն լինիմ երջանիկ.
Ես յօժար եմ՝ որ առանց քեզ մէկ ժամ չապրիմ յաշխարհի,
Քեզ հետ ապրիմ, քեզ հետ մեռնիմ, քեզ հետ մանիմ մէջ հողի:

— Մահ մի յիշեր՝ Անուշավան, առջևներս օրեր կան,
Ես գիտեմ որ քո գրկաց մէջ՝ կեանք կ'ունենամ պատուական,
Ես էլ կ'ապրիմ վաթսուն տարի, ինչպէս մայր իմ Շամիրամ,
Օր ըստ օրէ կը մանկանամ՝ որ քեզ ուրախ օրեր տամ:

Թէպէտ դուստր եմ Շամիրամի, այլ չեմ այնպէս վավաշու,
Քեզ մի միայն պիտի սիրեմ, սէր իմ մաքուր, ոչ պազշու,
Իմ սրտիս մէջ սիրոյ հուրը քեզ համար կայ ցուպած,
Այլոց համար զազախ էլ չէ, այլ լոկ մոխիր շիջուցած:

Հայաստանի ձիւնագաղաթ և սառնապատ լեռները,
Իմ այս կրակով շուտ կու հալվին, կ'երթան սիրոյ ուղիները,
Բայց այն աղբերք կարկաջահոս միայն քո սիրան կու ջրբն,
Միայն հոգւոյդ ծաղկեալ պարտէզն պիտի յաւերժ ուողեն:

Ես քո տաարակն եմ ողջախոհ, դու իմ հղօր վարուժան,
Քո հետ միայն՝ դալարազարդ՝ ոստ լիցի ինձ պատուանդան,
Թէ դաշտերում, թէ պարտիզում, քո ձայն դիս կու զմայլեցնէ,
Գիշեր ցերեկ քո թևի տակ՝ հանդիսան դիս կու դանէ:

— Աւրախութեան իմ շրկայ չափ, Գերկէթ գշտոյ գեղեցիկ,
Որ դու ինձմով, և ես քեզմով պիտի լինինք երջանիկ,
Գու ինձ այնքան զոհ ես տալիս, որ ես կը մնամ պարտական,
Բայց ես պարտքէս՝ չեմ վախենար, թէ քեզ լինիմ պարտապան:

— Ես պարտատէր եմ անողոք, ինձմէն չրկայ փրկութիւն,
Ամենայն օր դրկացս մէջ կը լինի քո դերութիւն.
Քո օձիքն իմ ձեռաց մէջ, քեզ չիլնիր ժամ հանգստեան,
Քո հանգիստն իմ ստեանց մէջ, նոր նոր շղթայ, արդեւան:

— Այդ կապանաց զոհ լիցին կեանքս, քո դրկաց մէջ միշտ լինիմ,
Քո շղթայքն աւելացուր, կապանքէդ ո՛չ հրաժարիմ.
Բայց ասան դու՛ չքնաղ դշխոյ, երբ ինձ այդքան կապ դնես,
Ապա ո՞րչափ՝ քո ձեռներուն՝ կապ ու շղթայ կ'աւելցնես:

Ժպտաց դշխոյն, շառագնեցաւ, պատասխան ետ պատանւոյն,
Միթէ՞ վրդիս քիչ մանեակք կան, այն էլ կ'ըլնի մի և նոյն.
Քո կապանօք, քո շղթայիւք՝ ես հարսի սէս կը պճնիմ.
Ականակուռ մանեակներէն այն գերագաս վարկանիմ:


Իմ ծայրագոյն զարդը դու ես, քո շղթայն է իմ սպրճանք,
Իմ հանգիստն՝ այդ նոր բանան է, իմ պճնութիւնն՝ այդ կապանք.
Գու իմ լանջաց քառամանեակ, դու իմ դլխոյս ապարօշ,
Գու սպրճանաց իմ յաղթանակ, և յաղթութեան իմ դրօշ:

Երբ քեզ կապեմ իմ կապանօք՝ քո կապանօք կը կասուիմ,
Եզանց ամուլք կը լինինք մենք՝ կը մըշակվի այդին իմ,
Մեղուաց նման՝ ի միասին՝ կը ժողովենք քաղցրութիւն,
Սիրոյ մթերք բջջաց նման կը ծածկեն մեր ճոխութիւն:

— Ապա եթէ մեղու ի նման սկսանիս խայթելու,
Բրէաներուն քո մեղրը տաս ինձմէն ծածուկ ուտելու:
— Ո՛չ, մի կարծեր՝ Անուշավան՝ թէ երբէք տամ ես քեզ խոց.
Տիկին մեղուաց չէ՛ թունաւոր, և լինի միշտ անխայթոց:

Մեր փեթակն միշտ մէկ կ'ընի, մենք կու ապրինք անբաժան,
Ստուերի սէս քեզ հետ կ'ընիմ, քեզ համաձայն՝ միաբան,
Մեր մէջ օտար սէր չի մանիր, օտար աղբիւր չենք երթար,
Օտար պարտէզ ոսք չենք դնիր, և չենք քաղիր վարդ օտար:

— Եթէ այդպէս լինի մեր կեանք, իրաւ կ'ըլնինք երջանիկ,
 Մեր օրերը այնպէս կ'անցնին՝ ինչպէս դարուն գեղեցիկ.
 Մեր աղագաւ կու դան թռչունք և ծաղկունքն կու ծաղկին.
 Ի մեր պարծանս երասիս կու տայ իւր հոսանքն խնդաղին:



ԵՐԳ Դ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՊԱՏՄԷ ԶԶԻԱՐԻ ՄՕՐԵ ԻԻՐՈՅ

Իմ մայր իրաւ զեղեցիկ էր , զեղեցիկ էր՝ որպէս դու ,
Աչքեր ունէր սե ու խոշոր , հայեցուածքն յոյժ ազդու ,
Հայրն իմ կարգոս էր պատանեակ՝ քրսանամեայ հասակաւ ,
Որ իմ մօրը սրղոյ մէջը Սոսեաց անտառն դիպեցաւ :

Նա իւր մեռած սիրականին վերայ լալով էր սրղում . . .
Հայրս որսի էր դուրս եկել Արմենակայ անտառում .
Այն տեղ տեսաւ և կապուեցաւ՝ ինչպէս ես քեզ՝ հրաշագեղ ,
Այրի մէջը հարսնիք արին , սէրը կազմեց այն շրքեղ :

Գերկէթ ասաց . ուրեմն մայրդ ևս ինձ նման այրի էր :
Այո՛ , ասաց Անուշավան . նա Վան փետին թաղել էր .
Երեքամսեան հարսն գողով մնացել էր նա այրի .
Այրի մէջէն՝ եղև բամբիշ՝ Հայաստանեայց աշխարհի :

Նորա մայրն զշխոյն Անոյշ՝ գուսարն Մարին Նիւքարայ ,
Հարսնացել էր Հայոց երկիր՝ Ասքանազեան Սիսակայ .
Նախանձուելով Համասփիւռին՝ քաջ Արամայ տիկնոջը ,
Անյուշ ցաւով կախարդել էր իւր հրաշագեղ տալոջը :

Երբ որ Արամ կարաց անցնել յայնկոյս գետոյն Ախուրեան ,
Մասեաց քաջքն ցուցին նորան հրնար կնոջ փրկութեան .
Արամ յարոյց Հայկայ նետով իւր Համասփիւռ զշխոյին .
Եւ Անուշին վրտարանդեց մէջ այն Սոսեաց անտառին :

* Արամի քեզի և կարգոսի պարտութեան մէջ մանրամասն պարագրաւ :

Միսակ, Անոյշ այն անտառում բնակվեցան շատ տարի,
Մէկ այրի մէջ անցին նոցա օրն ու կեանքն յանգորրի .
Այս տեղ ծընաւ իմ ծնողս և այս տեղ ևս հարսնացաւ .
Այս տեղ կորոյս իւր սիրելւոյն, փեսայն այս տեղ թաղուեցաւ :

Իմ մօրս այս՝ նախկին փեսայն՝ Ղան նահապետ Արցախայ,
Որսի համար մէկ օր մըտել՝ յանտառ Սօսեաց Արմենակայ,
Այն հրաշագեղ օրիորդին տեսաւ սիրեց իւր կամքով,
Մընաց այն տեղ փեսայացաւ, հարսն ընարել էր սուրբ սրտով :

Բայց կարճ եղև նոցա սէրը, երեք ամիս չտևեց,
Փեսայն մեռաւ հիւանդութեամբ, հարսի ծոցէն զրկուեց,
Երեք ամիս այրի նստաւ իմ ծնողս այն այրում,
Մինչև կարգոս քաջ պատանին որս կարգադրեց անտառում :

Մեռած Ղանի զերեզմանի վերայ տեսին մէկզմէկ .
Կարգոս անցոյց այն այրի մէջ շատ զիշեր ու շատ ցերեկ .
Նոքա սիրով կապակցվեցան, և այն անբաղձ տարազիր,
Փառքով, պատուով, ու բախութեամբ՝ եկաւ, մտաւ Արմաւիր :

Այս գեղեցիկ կնոջ սիրոյ ծնունդ էի ես մէնակ .
Անուշաւան զրեց անունս՝ Անոյշ, Ղանի յիշատակ .
Սօսեաց մէջը ինձ նուիրեց Մասեաց քաջաց զօրութեան,
Սօսանուէր ես կոչուեցայ ՚ի տիս մատաղ մանկութեան :

Ո՛հ, սիրելի, համարեա՛ թէ դու իմ մօրս պատկերն ես,
Նորա ժպիտն կարմիր շրթանց՝ քո շրթանց մէջ տեսայ ես .
Աչքդ, ունքդ, կերպարանքդ, և հասակդ և իրան,
Մօրս զողցես կենդանացած գնում են ինձ յանդիման :

* Անուշաւան գետ նոր էր Ռադել էր մօրը, բայց Դերիկէն շատաց
խելոյն փնջէ նոցա շատ զիպոսածը զհարկադրեց յայտնել :

Անուշավան՝ կրկնեց Գերկէթ, ձեր բաղդ ուրեմն այսպէս է,
 Որ կին առնուք չքնաղ այրի, Մասեաց Քաջաց կամքն այս է.
 Ես էլ այրի եմ քո մօր պէս, դու էլ անփորձ քո հօր պէս.
 Ես կը սիրեմ քեզ կուսի պէս, որ այրութիւնս չյիշես:

Ընդէր պիտի քո այրութիւն յիշեմ բնաւ՝ սիրելի,
 Երբ շես յիշում իմ դերութիւն մէջ քաղաքիս Նինուէի.
 Միթէ աղջկունք քիչ կան այս տեղ, ինձ ինչ օգուտ նոցամէն,
 Ես քեզ գրտայ՝ ինձ տէր գրտայ, շեմ բաժանուիր ես քեզմէն:

— Է՛, իմացա՛յ, դու ո՛չ թէ ինձ, այլ միայն քեզ ես սիրում,
 Ինձ ո՛չ թէ հարսն, այլ հալածիչ քո նեղութեան համարում.
 Ձէ՛, ես չուզեմ այդպիսի սէր, դու զիս պիտի լոկ սիրես,
 Ո՛չ թէ դանձի կամ ճոխութեան՝ համար ինձ էլ ընդունես:

— Ի՞նչ դժուարին՝ զարմանալի բնութեան տէր ես, Գերկէթ,
 Ի՞նչպէս ես քեզ հաւատցանեմ՝ թէ սիրում եմ քեզ և եթ,
 Թէ քո սիրտը իմըս լինի՝ ճոխութիւնքդ ո՛ւմ կ'ընին,
 Գանձդ չուզեմ. միայն տուր ինձ հողուոյդ դրան բանալին:

— Ես ուզում եմ՝ Անուշավան, որ երկուսիս միջոցը,
 Չըզանըլի այլ առարկայ՝ որ չըբաժնէ մեր սիրտը.
 Երբ որ ես քեզ իմըս անեմ՝ ո՛ւմ կ'ընի քո Հայաստան,
 Միթէ Գերկէթ հեռի կու մնայ չքնաղ դահէն տիկնութեան:

Բայց ես միայն քեզ եմ սիրում՝ թէկուզ լինիս մէկ աղքատ.
 Ես իմ հողուոյս մէջ կը դնեմ՝ քո այդ սէրը անարատ.
 Հարստութիւն, աղքատութիւն՝ պտուղ են մէկ դիպուածոյ,
 Մենք զիրեարս պիտի սիրենք, և ո՛չ վասն ինչ կալուածոյ:

— Յօժար եմ ես՝ այնպէս սիրել, ինչպէս կամք են քո պատի,
 ճոխութիւնքդ՝ շեմ ես հաշուած, դու կաս այժմ իմ առաջի.
 Ես հանում եմ՝ իմ սրբախցոս և յիշատակ հայրենեաց
 Թող Գերկէթը՝ միայն նստի՝ ի մէջ հողուոյս և մտայ

3290

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ
 Գ. ՄՅԱՍԻՍԿԱՆԻ
 7/11-1922

— Այ անիրաւ՝ բարկանում ես՝ որ ասում եմ՝ թէ սիրէ .
Ա՛ն ճոխութիւնս՝ թէ կամենաս , այսքան դանձա վայելէ .
Հայաստանի՝ թուխ աչքունքով՝ մէկ օրիորդ արն կին ,
Եւր այրութեան մէջ կենալու՝ թող այսուհետ Գերկէթին :

— Ես միթէ՞ մէկ աւաղակ եմ՝ որ առնում քո ճոխութիւն ,
Եւ քեզ բաժին՝ թողում միայն՝ անմխիթար այրութիւն ,
Ո՛չ ճոխութեանդ հարայ սիրով . . . ես քեզ միայն սիրեցի ,
Գու ինձ ասիր՝ թէ հարուստ եմ՝ անբաւ անհուն տէր դանձի :

— Ուրեմն դու՛ ինձ ես սիրում , Անուշաւան իմ սիրուն .
Գու մի երբէք անկաջ դնիր՝ իմ դանազան խօսքերուն .
Եթէ այսպէս չը առարկենք , սխալի՛ կարծեօք լուռ նստենք ,
Գու երկաթ ես , ես գայլախաղ , դիպչինք՝ որ կայծ , հուր ցայտենք :

— Գերկէթ՝ քեզ չեմ լուռ նստեցնուր , կը դսնեմ նիւթ խօսելու ,
Իմ հայրենի երկրի վերայ՝ շատ բան ունիմ ասելու .
Ես քեզ համար կարեմ պատմել Հայկ , Արամայ անցքերը ,
Արայ , Կարդոս , Համիրամի՛ քեզ անձանօթ բաները :

— Արի՛նայեղց պատերազմայ՝ բաներն ինձ՝ մի պատմեր ,
Հայկ՝ որ Բելին սպանել է՝ այդ ինձ անգամ՝ մի յիշեր .
Կայ՝ այնպիսի անցք ձեր մէջը , որ մեզ նման սիրահար՝
Սիրոյ մէջ կեանք անցնում լինի , դու այն պատմէ ինձ համար :

Գիտե՛ս մեր մէջ ատելութիւն՝ կայ վաղնջուց՝ աղգային ,
Համիրամը՝ Ներբողի տեղ՝ ՚ի մահ մատնեց Արային ,
Քաջ են ձեր հայք , քաջ են և իմ Միջագետաց Ասորիք ,
Տես՝ թէ՛ Նինուէ քանի՛ հազար՝ Հայկայ աղղէն կան դերիք :

* Բաց ՚ի Հայկերէն և Արամերէն իսն Արայի մահ , և Կարդոս
բանաստեղծութիւն , ուր մանրամասն պատմին գործի Համիրամայ :

— Գեղեթ՝ դու ինձ քարկացրնում ես, բայց ես քեզ չեմ ատելու,
Գրկացս մէջ քեզ կու սեղմեմ, և չեմ թողնիր խօսելու.
Քանի խօսիս՝ կու համբուրեմ. . . ինչ պատճառաւ՝ սիրական,
Ինձ չես պատմում՝ քո անցքերը, ահա քեզ նիւթ պատմութեան:



ԵՐԳ Ե

ԳԵՐԿԻԹ ՍԿՍԱՆԻ ՊԱՏՄԵԼ ԶԾՅԳՈՒՄՆ ԻԻՐ

Իմ անցքերս՝ չունին ոչինչ՝ մէկ առանձին քաղցրութիւն ,
 Ինչպէս նախնեաց Հայկազնէից՝ քո ազգային պատմութիւն .
 Ես մէկ կին եմ որք և այրի , անքոյր , անհայր և անմայր ,
 Ահա հաշուէ՛ քառսուն որ է՝ որ մնացել եմ անայր :

Յիրաւի է դանձ շատ ունիմ , բայց ինչ օղուտ այն դանձէն ,
 Իմ ծընունդըս պարականոն , հեռացրել է զիս դահէն .
 Իմ համամայր Նինուաս եղբայր՝ է իմ անձին թշնամի ,
 Գանձերուս նա է աչք գըրել , կեանք իմ կայ ՚ի վտանդի :

Բայց առ երես զիս պատուում է , քոյր է կոչում կեղծելով ,
 Այլ թէ վրտանդ ինչ պատահի՛ նա ցնծում է հաճելով ,
 Ես չեմ գընում շատ արքունիք , իմ զբօսանք իմ տունն է ,
 Իմ արտասուքն է ըսփոփանքս , զուարճութիւն իմ սուգն է :

Ձեմ կամենում չարիք խօսիլ՝ ես իմ տիկին մօր վերայ ,
 Այս վշտալի սև արևը , այսպէս կեանքը՝ ետ ինձ՝ նա ,
 Քանի՛ եղբարք , քանի՛ քոյրեր բնկան ՚ի խորս Եփրատի ,
 Ե՛ս այս վշտաց համար միայն մնացել եմ կենդանի :

Աշխարհ գիտէ՛ որ իմ մայրս՝ վարուքն չէր անարատ .
 Չորեքտասան տարեկան էր՝ որ ընկաւ սուղ անփարատ .
 Մեծն Նինոս խըլեց նըրան իւր զօրավար Մենոնէն .
 Համիրամը չէր հանդուրժեր բաժանման իւր փեսայէն :

Անուշավան միջահատեց թել պատմութեան Գերկէթի .
 Ասաց . գշխոյ՝ խնդրեմ՝ պատմէ այդ անցքերն Մենոնի ,
 Այլ ընդ այլոյ եմ ես լրսած , բայց խկապէս չըզխտեմ ,
 Ինձ մանրամասն պիտի պատմես . քեզմէն՝ չքնաղ՝ կը խնդրեմ :

— Թէ որ կ'ուզես այս պատմութիւն ըսկիղբներէն լրսելու ,
 ես կ'ըսկըսիմ սիրոյդ համար ծայրէ 'ի ծայր պատմելու .
 Թէ իմ զըրոյց պարզ անպաճոյճ քեզ չըբերէ ձանձրութիւն ,
 Մօտիկ նստիր՝ որ լաւ լսես իմ ծննդեան պատմութիւն :

— Չքնաղ Գերկէթ՝ միթէ կարէ ձանձրոյթ տալ ինձ քո խօսքը ,
 Չըզխտես որ անչափ քաղցր են իմ սըրտիս մէջ քո բանքը .
 ես քո խօսքէն կու ձանձրանամ . ո՛ր է արդ քո խղճմտանք .
 Ամեն մէկ ձայնդ ինձ ցնծութիւն է ըսփոփանք և բերկրանք :

Ճաշու արդէն հասել էր ժամ . ասաց Գերկէթ՝ քաղցած եմ .
 Արի առաջ ճաշերս ուտենք , ասլա անցքըս քեզ կ'ասեմ . . .
 Նստան սեղան . Անուշավան և իւր հարսն Գերկէթը ,
 Աերան ախորժ և խըմեցին և կշտացրին փօրերը :

Հացկերութիւն շատ սիրալիր յանաղ խօսքեր խօսեցան .
 Ամեն բաժակ ձեռն առնըլիս՝ Գերկէթ կ'ասէր՝ փեռայ ջան .
 Այս բաժակ 'տի անուշացենք , և հնարը այսպէս է ,
 Ով որ առաջ խըմել չուզէ՝ միւսին 'տի համբուրէ :

Երկարեցաւ սոցա ճաշը . սէրն արել էր սոցա՝ մի .
 Միացել էր սոցա սիրտը , պինդ կապուել էր և հողի .
 Անուշավան չէր հաւատում՝ թէ այս բաղդը է իւրը .
 Գերկէթ յայնժամ էր միամիտ՝ երբ առնում էր համբոյրը :

Քանի անգամ Անուշավան հարցմունքներ էր առարկում .
 Բայց Գերկէթը պատասխանը սիրոյ վերայ էր փոխում .
 եւ ասում էր . Անուշավան՝ զխտեմ որ զիս 'տի ատես ,
 երբ իմ նախնեաց ամեն անցքը իմ բերանէս ժողովես :

Սարսափեցաւ Անուշաւան, և հարցըրեց, ո՞վ դշխոյ,
Ի՞նչպէս հանեմ այդ կասկածը՝ որ կայ ՚ի խորս սրտի քոյ .
Միթէ՞ ես քեզ նախնեաց համար՝ հարսն իմ շքեղ սիրեցի,
Որ նախնեացդ պատմութիւնը՝ զքեզ առնէ ինձ ատելի :

— Ա՛նուշաւան՝ ես կասկածոտ եմ ամեն քո շարժմանըդ .
Կարծում եմ թէ ձեռքէս կ՛առնուն այդ դեղեցիկ իրանըդ .
Գու ինձ մտտ ես, և փոխանակ՝ ինձ քո սիրով այրելու,
Ըստիպում ես ինձ զանազան անցքեր խօսքեր պատմելու :

— Միթէ՞ խօսիլն քեզ ընդդէմէ, ինձ պարզ ասա, Գերկէթ ջան,
Այնուհետե սուս կը կենամ և չեմ բանար ես բերան .
Մի միայն այդ փայլուն զիմացդ՝ լի աչքերով կը նայիմ,
Թէ ծիծաղիս՝ կը ծիծաղիմ, և թէ տրամիս կը տրամիմ :

— Միթէ՞ միայն՝ Անուշաւան՝ երեսն ՚ի վեր նայիլ կայ .
Մէկ այլ տեսակ սիրալրական հարս ու փեսի խաղ չը կայ .
Իմ բերանըս փրփրեցաւ՝ հին ու նոր բան խօսելով,
Գու բնաւին չես ձանձրանում այնպէս բաներ լսելով :

— Հաւատա՛ ինձ՝ հարսն իմ շքնաղ, ես իմրս չեմ գլխովին,
Քեզ որ զըտայ՝ մոռացել եմ՝ թէ ո՞ր է այժմ իմ հոգին .
Կարծում եմ որ՝ քո հոգւոյ մէջ՝ է նա իրեն տեղ զըտել,
Ես լոկ մարմին՝ առանց հոգւոյ՝ ունայն դատարկ մընացել :

— Թէ քո հոգին՝ Անուշաւան՝ իմ հոգւոյ մէջ զըտնըվէր,
Քո մարմինը՝ զրկիս մէջէն հեռանալու կարող չէր .
Ես էլ ոչինչ՝ խօս աւելի՝ քեզմէն մէկ բան չեմ ուզում .
Հոգիդ՝ հոգւոյս հետ փոխելու՝ մի միայն եմ ցանկանում :

— Ուրեմըն քո պատմութիւնը՝ չես կամենում ինձ ատել .
Ապա ումմէ՛ն այդ անցքերը՝ պիտի յուսամ ես լրսել .
Չըզիտեմ թէ՛ ինչ պատճառաւ՝ չես կամենում պատմելու .
Ի՞նչ կայ նոցա՝ մէջը արդեօք՝ արժանաւոր ծածկելու :

— Նոցա մէջը Անուշավան՝ ո՛չինչ ծածուկ բան չկայ .
Միայն չուզեմ՝ որ զիս թողած՝ սիրտդ խօսքով յաղենայ .
Ես եմ այժմ՝ քո զբօսանք , իմ պատմութիւն ինչ պէտք է ,
Ահա կեցել եմ առջերդ , անցքերս ևս՝ ինձ պէս է :

Ճաշէն ելլան և գընացին պարտիզի մէջ շրջելու ,
Թոյլ չէր տալիս՝ նրբան Գերկէթ՝ միջոց գտնել տրտմելու ,
Ստէպ թանձր ծառերու տակ նստում էին միասին ,
Գերկէթ գրկում էր իւր փեսին , և համբուրում երեսին :

Միւսանգամ դարձան սենեակ և նստեցան մէկ բարձի .
Անուշավան զմայլելով բռնեց ձեռքը իւր հարսի ,
Ասաց . Գերկէթ՝ անդեօք իրաւ՝ այս քո ձեռքը՝ իմըս է .
Այս ձեռքի հետ սիրտդ ու հողիդ՝ ապաբաղդիս ձօնած է :

Կաթեց արտօսը՝ հարսի աչքէն , դեղձան մազով նա սրբեց ,
Բռնեց քնքոյշ՝ փեսի ձեռքը , և ջերմաջերմ համբուրեց .
Ասաց . ինձ ևս Անուշավան՝ այսօր օր է խնդութեան .
Թող իմ հողւոյս՝ չմերձենայ՝ էլ մէկ ստուեր տրտմութեան :

Անուշավան՝ ետ պատասխան . իմ դեղաղէշ սիրելի ,
Ես քո հողւոյն վահան կ'ըլնիմ , որ թախծանօք չարտմի .
Միթէ ինձ հետ՝ որ լինիս դու՝ կարէ՞ թախիժ մօտենալ ,
Քեզմով կարեմ՝ արամութեանըս՝ սև ստուերին դիմանալ :

Գու սիրելոյ՝ արհեստի մէջ՝ քան զիս աւել՝ հզօր ես ,
Ես աշակերտ՝ կըլինիմ քեզ , որ ինձ ևս սովբեցընես .
Հասկացել եմ՝ որ քո հողին՝ իմ հողւոյս հետ կապուած է ,
Ճրրագի պէս՝ իմ կըրակով՝ բորբոքված է , վառված է :



ԵՐԳ Զ

ԴԵՐԿԷԹ ՍԿՍԱՆԻ ՊԱՏՄԵԼ ԶԾԱԳՈՒՄՆ ՄՕՐՆ ԻՒՐՈՅ

Իմ տարիալի ազնիւ փեսայ՝ Անուշավանն Աարդոսեան ,
Թէ ես զքեզ աւելի եմ սիրում սիրով հարսնութեան ,
Մի զարմանար , դու արժանն ես ևս առաւել սիրելու ,
Ես կասկած իմ թէ չեմ կարող քեզ իմ սիրով հասնելու :

Բայց լաւ գիտեմ՝ որ այս իմ սէր տակաւին շատ տկար է ,
Ինչպէս ճրագ արեւու դէմ , անլոյս , նրսեմ , խաւար է ,
Թիթեռնակի եմ ես նման , և իմ թևերս անդօր են ,
Գու արծիւ ես՝ Փիւնիկ հզօր , նորածնեալքս զազախէն :

Ինձ երանի այն օր կըլնի , երբ քեզ տեսնեմ Հայաստան ,
Ոսկիս գանձս սանդուղք շինեմ , քեզ հանեմ ծայր բարձրութեան ,
Քեզ հետ հանդիմ այն դարպասում՝ ուր որ Արամն է ծընել ,
Ուր որ Արայ : հայր քո Աարդոս՝ մաբց զրկաց մէջ զարգացել :

Ես քեզ այն տեղ էլ կու գտնեմ , համբոյր կուսամ երեսիդ ,
Կասեմ՝ փեսայ՝ երջանկացո՛ր՝ քո սիրական հայրենիդ ,
Հայկազնէից բողոզն ու բարիք կը շինեմ իմ զբօսանք ,
Ես միայնակ կը լինիմ քեզ համ խաղալիկ , համ բերկրանք :

Սըրտիդ մէջը խոց չըմընայ՝ կասկած վերայ իմ նախնեաց ,
Այդ սրտի՛ որ պարունակ է այսքան մաքուր տարիանաց ,
Երբ տեսնում եմ թէ ինձ միայն է նուիրած քո հոգին ,
Չեմ կամենում թաղուցանել քեզմէն ծաղումն իմ աղզին :

Տուր ինձ աջրդ, և ականջ դիր, քեզ պատմեմ ես ամենը,
Թէ Շամիրամ ինչպէս դարձաւ մեծ Նինոսի տիկինը.
Ինչպէս նորա գահին տիրեց, ինչպէս եկաւ Հայաստան,
Եւ ինչ կերպով ինձ մայր եղև, և կեանք տուեց թախծական:

Գերկէթ անուն մէկ օրիորդ Միջագետաց աշխարհէն,
Գուստր հզօր կողմնակալի՝ որ ծագել էր այն երկրէն.
Յղացել էր մէկ փորձանքով, ծնողացմէն փախել էր,
Եւ անտառի մէջ ծնելով դուստր՝ այն տեղ թողել էր:

Հովիւներն այն երեխին գրտել են մէջ անտառի,
Տեսել են որ նրբան թևով ծածկում է մէկ աղաւնի,
Այն աղջրկան անուն դրին ասորերէն Շամիրամ,
Որ աղաւնէն էր սրնանում այն հասակում տարածամ:

Տասնեերկու տարին հասած՝ հարսն եղև Մենոնի,
Որ Արամայ մօտ էր եկած մերթ պաշտօնիւ դեսպանի,*
Անէնդ սիրով սիրում էին միմեանց երկու զուգակիցք,
Եւ անբաժան մէկզմէկէ՝ էին միշտ այս կենակիցք:

Նինոս արել էր արշաւան և մէկ քաղաք պաշարեց.
Այս քաղաքը գոլով ամուր՝ շատ ժամանակ դէմ դրրեց,
Չանձրացել էր Նինոս մարտէն, և նստել էր բանակով,
Հրնարք չրկայր քաղաքն առնուլ՝ ո՛չ յարձակմամբ, ո՛չ քաղցով:

Մենոն գրլուխ զօրավարաց մէջ բանակին Նինոսի,
Շամիրամին իւր մօտ ունէր՝ հաղած զդեստ առնացի.
Ո՛չ որ կարէր կասկած տանել, թէ նա կին է մանկամարդ,
Շամիրամը Մենոնի հետ էր ամեն տեղ անանջատ:

* Արամեբէի հանքոյցն է այս Մենոնի խօսակցութիւնն:

Մէկ օր Մենն Շամիրամի հետ դաշտումը ման գալիս,
 Շամիրամը մէկտեղ տեսաւ պարիսպները զննելիս .
 Ասաց . Մենն՝ եթէ այս տեղ ուղղէք զօրաց յարձակումն ,
 Յաղթութիւն շուտ մերը կ'ըլնի , քաղաք կը մնայ մեր ձեռքումն :

Մենն հասուց այս Նինոսին , Նինոս խօսքը ընդունեց .
 Զօրքը խմբեց ասած տեղը , և քաղաքին շուտ տիրեց .
 Նինոս ուրախ այն յաղթութեամբ՝ շատ մեծարեց Մեննին ,
 Քեզ ո՞վ ուսոյց այս հրնարքը հարցփորձ արաւ մըտերմին :

Մենն ծածկել թագաւորէն այս բանը ո՛չ կամեցաւ .
 Ասաց . անբայ՝ յախտեան կաց՝ քո բաղձն այսօր զօրացաւ .
 Իմ Շամիրամ ամուսինը՝ որ հետս բանակ եմ բերել ,
 Ինձ սովբեցուց այս հրնարքը , և չեմ կարող ինձ զըրել :

Թագաւորը փափաք եցոյց՝ որ այն կնոջ տեսանէ .
 Շամիրամին բերեց Մենն , ասաց . անբայ՝ այս կինն է :
 Նինոս հարաւ Շամիրամի դեղեցկափայլ երեսաց .
 Ցանկացաւ իւր կին ունենալ , և Մեննին ևս յայտնեաց :

Մեննին ցաւ եղև սրտին ապերախտ դործ արքայի ,
 Շամիրամը շուարեցաւ , չըզրտաւ ելք հրնարի ,
 Զուգեց Նինոս յիշել բընաւ Մեննի մեծ երախտիք ,
 Գալարում էր մատաղ կնոջ սիրան ու լեարդը և աղիք :

Արքայական թագ չըկարաց Շամիրամին չըլացնել ,
 Իւր ամուսնոյ գրկէն բընաւ չէր յօծար ինչ ելանել .
 Նինոս տեսաւ՝ որ այն կինը ողորբանաց չէ լըսում ,
 Եւ թագուհի Միջագետաց կամաւ լինել չէ ուզում .

* Արդեօ՛ հնար է կարծել , թէ Բերսաբէ ևս այս կրիւ՛տ որանջուէց =

Հրրամայեց՝ որ բռնութեամբ հանեն մարդու խորանէն .^{*}
 Շամիրամը ողբով կոծով ել ամուսնոյ ՚ի գրկէն .
 Նինոս բաժնեց այս երկու սիրտ սիրով ձուլված միասին ,
 Շամիրամը դառն արտասուօք բռնաւորին եղև կին :

Մենոն այս մեծ չար գրկանաց չըկարելով դիմանալ ,
 Իւր սիրական կրնոջ համար մտքին գրեց մահանալ .
 Տեսաւ յայտնի որ Նինոսէն վըրէժ առնուլ կարող չէ ,
 Իւր գըլուխը մահու մատնեց , որ ցաւ կրնոջ չըմաշէ :

Մենոնի մահ գատակնիք եղև մահուան Նինոսի ,
 Շամիրամը մտքին գրեց խնդրել արիւն Մենոնի .
 Իմացաւ որ բռնաւորին բռնի յաղթել չէ հընար ,
 Հընար նիւթեց ժամանակին հանդամանաց քաջ յարմար :

Տեսաւ գշխոյն՝ որ Նինոսը խելքը տուեց իւր ձեռքը .
 Կեղծաւորվեց՝ իբր ինքն ևս է՝ նըրան տուել իւր միտքը .
 Ողորանօք , փաղաքշելով այն յիմարին գըրաւեց ,
 Կարծեց Նինոս՝ թէ Շամիրամ իրաւ նըրան սէր տուեց :


Ո՛վ՝ թէ քանի հընարներ կան կանանց սեռի ձեռքումը ,
 Ի՞նչպէս , այլ ինչ է երեսին՝ և այլ ինչ կայ մըտքումը .
 Երբ հարկաւոր լինին նըրան կը ձեանայ պարզամիտ .
 Ողորմելի այր երբ տեսնէ՝ իսկոյն կըլնի միամիտ :

Անոյշ լեզուով շողմելով՝ օձը ծակէն կը հանէ .
 Ո՛վ է կարող որ հակառակ նորա կեղծեաց գէմ գընէ .
 Ժպիտ , ծիծաղ , և արտասուք , և բարկութիւն և սչրանք ,
 Խոնարհութիւն շատ մեղկաղէտ , տրտունջ և կոծ , պուստանք :

^{*} Այսպէս էր Աբաօթեմոն Ա+իլլեւի պուղատարին հանել քրիտիցային :

Այս ամենայն կնոջ զէնքն են, տեսնեմ ո՞վ 'տի դիմանայ .
Թէ քար լինի՝ պիտի հալի, եթէ կրրակ՝ հովանայ .
Այն անասուն էրի մարդը կընոջ վերայ նայելով,
Երբեմն էշ է փոխարկվում, երբեմն գոմէշ՝ իւր կամքով,

Հրնարազէտ է կինամարդ՝ ինչ որ ուզէ՝ կը հասնի,
Իւր տարփածուին էշ կը շինէ, և ուսերուն կը հեծնի .
Նա աւելի է միշտ խաբուած, ով որ կ'ասէ՝ իմ անձրս՝
Աին չէ կարող բնաւ դրաւել, չեմ՝ տար նրբան իմ սանձրս,



ԵՐԳ Է

ԴԵՐԿԷԹ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԶՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄՕՐՆ

Համիրամը այս արհեստին քաջավարժ էր չափանց,
Այժմեան վիճակն էր ձեռնտու իւր անսահման ցանկութեանց.
Անտառի մէջ ձրղած աղջիկն՝ արդ եղել է թաղուհի,
Չեռ.ք է բերել եւ զօրութիւն եւ սանձ կամաց արքայի :

Գու տեսնում ես Անուշափան՝ Նինուէացւոց ծէսերը,
Բազմակնութիւնն հասարակ է, ջերմ է այս մեր երկիրը.
Թէ թագաւորք, թէ մեծամեծք՝ ունին կանայք, հարձ բազում,
Այլ այս տիկնայք որպէս դերիք փակեալ տան մէջ են կենում :

Հայաստանի ծէսն այսպէս չէ, ամենքն են միակին,
Եւ նահապետք և մեծաւորք ունին միայն մէկ տիկին,
Անուշափան՝ ես էլ պիտի լինիմ քեզի կին միակ.
Այս է միայն իմ ցանկութիւն, և իմ բաղրիս յաղթանակ,

Ամուսինն իմ էր դեռաւուրց, և ես նորա մէկ հատ կին.
Ինձ սիրում էր աննենդ սիրով, ապրում էինք երկօքին,
Յանկարծ ուզեց այլ կին առնուլ, այն էր երկրի օրէնքը.
Չյաջողեց, մահը դրեց նորա կամաց կապանքը :

Այժմ դու ես իմ սիրական, պիտի լինիս միակին .
 ես քո հարսն, բամբիշ Հայոց, քեզ ամուսին և տիկին .
 Նախնիքն քո նոյնպէս էին, ինչպէս որ ես եմ ուզում,
 նոցա մէջէն ոչ ոք ունէր իրան համար կին բազում :

Ողջախոհ են ազգն Հայոց՝ ծնունդ օղոց զովութեան,
 Քաղցր է նոցա առտընին կեանք, համեստ, սլարկեշտ, բերկրական,
 Կանայք նոցա են կէս նոցա, և սլատուական ՚ի մասանց,
 Այրն սլատրաստ է կնոջ համար բերել զոհեր չափազանց :

Ձէ մտանում նոցա մէջը օտար սէրը մուլեկան,
 Իւր փեսին է հարսն տալիս անփորձ սիրտն մանկական,
 Փեսայն նորա սլահասլանն է, օղնական է իւր կինը,
 Զաւակունք որ աչքը բանան՝ կ'ճանչեն իւրեանց ծընողքը :

Քեզ օրինակ սու քո նախնեաց, Ազգապետին ձեր Հայկին,
 Նա իւր կրնոջ Լուսրնթաղին սէր էր տուել կաթողին .
 Երբ որ Ներբող կամենում էր նրբան ձրղել իւր ձեռքը,
 Հայկը թողեց Բաբիլոնը, նստաւ լերանց բարձունքը :

Միակին էր և քաջն Արամ, Համասփիւռն էր կին նորա,
 Ի սէր կնոջ ինչեր չարաւ՝ երբ որ անյուշ ընկաւ նա,
 Գնաց միայն այն գաւառը՝ ուր որ մեռեալքն են կենում,
 Սիրականին զարթեցնելու հնարք սլտրեց դժոխքում :

Ինչ եմ կարող ես ասելու այն զեղեցիկ Արային,
 Որ ՚ի սլատիւ չքնաղ հարսին անզուգական Նուարդին,
 Համիրամի սիրար մերժեց, բարուք վարկաւ մեռանել,
 Քան ողջախոհ իւրեանց սիրոյն մէկ արատիք դիպցընել :

Նոյնպէս քո հայր շքեղ Կարգոս՝ քո ծընողի հետ կապուած,
 Մինչև ՚ի մահ չը բաժնուեց իւր ամուսնէն հեռացած .
 Ի միասին կեանք անցուցին, ՚ի միասին և մեռան,
 Սիրով կապուած աշխարհի մէջ՝ սիրով մըտան գերեզման :

Ո՞րչափ մեծ է երջանկութիւն այնպէս սիրուն ամուսնաց ,
Այնքան դառն է վիճակ տանը բազմակնութեան մասնուած ,
Ի՞նչ է նոցա կանանց կեանքը , տարօրինակ դերութիւն ,
Ի՞նչ է նոցա արանց սէրը , անասնական ցանկութիւն :*

Ի՞նչպէս սիրտ է՝ սիրտ բաժնուած՝ երկու երեք սիրելեաց .
Որին աւել , որին պակաս՝ սիրով սրտին է սիրած .
Ո՛չ այրըն է կարող սիրել՝ երկու երեք միասին .
Ո՛չ կին կ'ուզէ ընկեր ճարել իւր ամուսնոյ 'ի սրտին :

Յարկ կանանւոյն որ սեփական էր արքային Նինոսի ,
Հարիւրաւոր էին տիկնայք՝ հարձք 'ի փակեալ տան զերի .
Ներբողէն էր դեռ ևս այս ծէս բազմակնութեան սկսել .
Նինոս միայն կանանց թիւն էր օր ըստ օրէ բազմացրել :

Մէկ հատ աղջիկ տեսաւ արքայն՝ իսկոյն կ'առնու ինքեան կին .
Քանի՞ անգամ տարուան մէջը կը տեսնէ իւր ամուսնին .
Երբ որ կանայք հարիւրաւոր լինին մէկին հետ կապուած :
Թշուառ կեանք է նոցա կեանքը , ամեն բերնէ անիծուած :

Բընութիւնը իւրեան պարտքը պահանջում է բռնադին ,
Թառամում են չքնաղ կանայք՝ այն կանանւոյն 'ի յարկին ,
Տե՛ս՝ թէ ո՞րքան այն դեռաւորց կանայք տի՛նին անառակ ,
Ո՞րքան մահունք տի՛ պատահին , կամ թէ ո՞ճիրք ի՞նչ տեսակ :

Այսքան կանանց հարձերի մէջ՝ քանիք կ'ըլնին անարատ .
Առաքինեաց սրտերի մէջ՝ ո՞րքան սուգ կայ անփարատ .
Այլ՝ որ բընիկ պարկեշտութիւնն կորցըրել է մէկ անգամ ,
Տե՛ս՝ թէ քանի՞ զաղրութեան մէջ է նա խրված յարածամ :

* Բազմակնութիւն (poligenia) որ հասարակեալ էր յարեւել , զէ յայտ
Եւ յայտ ազգէ է ծագեալ : Ծննդ .

Թուշունների թևերի տակ տարփածուք զաղտ պահած կան ,
Գիշեր ցերեկ որոգայթներ են հընարվում շընութեան .
Որ մէկ անգամ թագաւորի եղել էին կենակից ,
Հազար անգամ ծառաներուն են միշտ լինում մեղսակից :

Կանայք՝ արանց չեն տեսնում , ո՛չ արք կանանց երեսը ,
Թուշնոց նման վանդակի մէջ անց են կացնում օրերը ,
Երբ ամուսին հրաւիրէ՝ կու գան դիշերն անցկացնել ,
Այնուհետև տարիներով պիտին կենալ , ըսպասել :

Չանձրութիւն է նոցա բաժին , զրոյցներն են մոլութիւն .
Սրտերու մէջ սէրն է վառվում , հողոց մէջն է ցանկութիւն .
Խաղալ , խնդալ չէ բաւական այն կըրակին կերակուր .
Նոցա բոցոյն հարկաւոր է հիւթ զովարար , սառը ջուր ,

Ես քանի որ միտս եմ բերում այն թագուհեաց կեանքերը ,
Քստմնելով փուշ փուշ կանդնում են իմ զլխիս մազերը .
Որքան նուաստ ու գետնաքարշ վարուք լի են պղծութեամբ ,
Հրաշագեղ կերտարանքը զազրացնում են մոլութեամբ :

Իւրաքանչիւր այն թագուհեաց ունի իւրեան տարփածու ,
Որ կանանց մէջ ման է գալիս ըստ կանացի տարազու .
Մէկզմէկու ձեռքէն խըլում են այն չնչին ծառայից ,
Սուր , խեղդ , դարան , թունարբութիւն կան ՚ի ձեռս համայնից :

Քանի հարիւրք ամեն տարի ջուրն է տանում դիակունք .
Թէ այն անբաղդ սիրողներուն , թէ սիրածին զաւակունք ,
Տիգրիս չունի լեզու , թէ ո՛չ կ'իմանայինք բնաւին ,
Թէ ո՞ր ձուկն է ուտում նոցա ոսկորները ու մարմին :

* Այս +աջայայտ է Եսթերայ պատմութեան , որ շատ խամանակ յետոյ էր :

Համիրամին այնպէս կեանք էր ապաղային ստասում,
Ծեր էր Նինոս և քրքրուած իւր հեշտութեանց ուղխերում,
Չքնաղ մայրս շուտ հասկացաւ իւրեան թշուառ վիճակը,
Հզօր ձեռքով վեր վայր շրջեց այն բարբարոս օրէնքը :

Հողմեւ լով թաղաւորին՝ որուն քրնաւ չէր սիրում,
Մանաւանդ թէ իւր ամուսնոյ արիւնապարտ համարում,
Պատուեց այն թանձր վարադոյրը, որ ծածկում էր թաղուհեաց,
Գիշեր ցորեկ Նինոսի հետ էր անանջատ յարկ կանանց :



ԵՐԳ Ը

ՄԵՔԵՆԱՅԻ ՇԱՄԻՐԱՄԱՅ ԵՒ ՄԱՀ ՆԻՆՈՍԻ

Նինոս՝ որ իւր քաջ արութեամբ Ասորեստան նորոգեց,
 Աթուր քաղաքն մեծացնելով անուն Նինուէ փոխարկեց,
 Բաբելոնեան զօրութիւնն Նինուէի մէջ բերելով,
 Արաւ Նինուէ մայրաքաղաք տիեզերաց իւր խելքով:

Այս տանուչորս տարեկանի ձեռքին եղաւ խաղալիկ,
 Չը կարացին նորան պահել ո՛չ ծերութիւն, ո՛չ տարիք:
 Աշխարհի մեծ ինքնակալը կրնոջ ձեռին էր դերի,
 Միջագետքը չունէր արքայ, կառավարն էր թագուհի:

Այնքան տիկնայք, հարձք, թագուհիք՝ մէկ տարւոյ մէջ արձակեց.
 Այն վանդակի դուռը բացեց, թռչնոց նոր կեանք պարզեց,
 Թագուհիքը՝ ամուսնացան, և հարձերը մարդ գրտան,
 Մէկ ամսոյ մէջ հազարաւոր հարսանիքներ խմբեցան:

Համիրամը մնաց մէնակ այն կանանւոյ մէջ յարկի.
 Հաւատարիմ նաժիշտներով լից ասպարանք արքունի.
 Թագաւորին միշտ պահում էր իւր առանձին սենեկում,
 Այնտեղ էին որեարք գալիս և խորհուրդի զբաղում:

Շամիրամի սենեակն եղև խորհրդարան և դիւան ,
 Ամեն խորհուրդ կարել ջրբել՝ եթէ չըլնէր նա հաւան .
 Եօթանէորդ * խորհրդականք ընտելացան տեսանել ,
 Որ կին կարէ թաղաւորել , և աշխարհի տէր լինել :

Ո՛չ թէ միայն խորհրդոյ մէջ էր Շամիրամ խառնվում ,
 Կամ ամեն ինչ իւրեան կամքով , իւրեան խելքով կարգադրում ,
 Այլ և զօրաց , զօրապետաց և աշխարհի տիրողաց ,
 Տեղափոխելն և հաստատելն ենթարկել էր իւր կամաց :

Գիւանի մէջ՝ խորհուրդի մէջ՝ նա էր տալիս պատասխան ,
 Լեզուն ճարպիկ , ճարտարախօս , ձայնը ոսկու էր նրման .
 Գրրանորեարք բերանաբաց նայում էին երեսին .
 Տեսանելով որ թաղաւորն է հընազանդ դեղեցկին :

Եթէ մէկի հետ խօսում էր՝ խելքը այնպէս էր առնում ,
 Որ յիմարը կարծում էր թէ նա իւր համար է մեռնում .
 Աչքը ունքը խաղցընելով շատին անում էր գերի .
 Սրտերի մէջ հուր էր վառում՝ որ երբ ուզէ՝ բորբոքվի :

Շատ կուսակալք , շատ զօրապետք մտքերի մէջ դըրեցին ,
 Թէ Շամիրամ նոցա կ'ուզէ՝ երբ մահ հասնի Նինոսին .
 Ո՛չ թէ միայն երիտասարդք , այլ և հին հին ծերունիք ,
 Իրանց հոգւոց մէջ ունէին յիմարական այս կարծիք :

Շատ ձև գիտէր խաղացնելու Շամիրամը Նինոսին ,
 Հոտած ծերին պինդ էր պահում 'ի մէջ քնքոյշ իւր ծոցին .
 Հաւատում էր նորա խօսքին խելքէն պակաս Նինոսը .
 Թէ նա նրբան իրաւ տուել է իւր սէրը և սիրտը :

* Եօթն ասարք՝ խորհրդականից՝ որնորեան թեան աշխարհին , որք և յիշա-
 րակին յեւթեր :

Երբեմն դառնում էր անաչառ դաստիարակ խոր մարդուն .
Մեծամեծաց գէմ կշտամբում , և յայսնում մեծ բարկութիւն .
Այսպէս աշխարհ կառավարել կը վայելէ արքային ,
Որ տիրող է լայն դաւառաց՝ ցՏեռաւոր ծայր երկրին :

Ես կին դողով աւելի լաւ կարեմ ուղղել այս ղեակը ,
Զօրայն տալ ոյժ զօրութիւն , միշտ յաղթութեան պսակը ,
Վաճառաշահ ասուտուրը ամեն աշխարհ տարածել ,
Ժողովրդեան մէջ ճոխութիւն մթերք ոսկւոյ բազմացնել :

Բայց թէ դործը այսպէս մնայ՝ շուտ կը լինի փոփոխումն ,
Կը բրթանան սուսերք զօրաց , կ'երթայ նոցա համարումն ,
Արամի* պէս մէկ քանի հատ՝ թէ երեկն չորս կողմը ,
Նինուէի դահ կը կործանեն ինչպէս խախ մեծ հողմը :

Ա'խ , ո՛վ կու տայր՝ որ երեք օր՝ ես լինէի թաղաւոր ,
Տե՛ս՝ թէ աշխարհք ինչ օրինակ պիտի լինէր բաղդաւոր .
Տիգրիսի հեռ կու դայր Նինուէ երջանկութեան ոսկի դար ,
Ասորեստան կը ճոխանայր ոսկւոյ դանձով անհամար :

Այս խօսքերը որ խօսում էր Շամիրամը գիւանում ,
Նինոս արքայ և մեծամեծք ամենեքեան են լըսում ,
Ոմանք ծածուկ շնչելով , ոմանք ժպիտ երեսին , †
Յոյց են տալիս՝ թէ հաւան են ինչ ասում է թաղուհին :

Նինոս կարծեց արդայական խաղ խոր կնոջ ասածը ,
Կամեցաւ որ շուտ կատարուի Շամիրամի ուղածը ,
Հրովարտակ գրքեց կնքեց , և մեծամեծք ձեռք գրին ,
Որ երեք օր թաղաւոր է հըրաշաղեղ թաղուհին :

* Երբ Մենան ցնաց դեռապան ասա Արամ՝ Շամիրամ ևս նորս հեթ էր
իբրև ղեակիք :

† Շամիրամ օրնը 'ի խորին ձերութեան պահեց իւր այս հնարները :

Հրովարտակն էր հրամայում՝ որ հնազանդի ամենքը ,
 Համիրամը այն երեք օր թող կատարէ իւր կամքը .
 Ով որ նրան անհնազանդ գտնվի այն օրերը ,
 Նորա պատիժն է հուր կիզիչ՝ դահճի սրած սուսերը :

Նոր օրինակ էր այս խաղը , հանդիսագիրն էր Նինոս ,
 Չըզիտէր թէ միաքումն ինչ էր դրել այն կին բարբարոս ,
 Իւր փղոսկրեայ դահին վերայ ոսկիափայլ աթոռոյն ,
 Հանդիսաւոր փառօք պատուով բազմեցոյց իւր թագուհւոյն :

Կեցցէ արքայ՝ ասին ամենք , երեք անգամ կրկնեցին ,
 Առաջ եկաւ թագաւորը՝ երկրպագեց գեղեցկին .
 Կուրացել էր այն փաղփիւնէն՝ որով ինքն էր փաթաթել ,
 Կարծում էր թէ այնուհետեւ պիտի սիրէ առաւել :

Պատրաստ կային դահճիճները աջ ու ահեակ թագուհւոյն ,
 Գահճապետն էր երիտասարդ՝ որ ակնունէր աթոռոյն .
 Աչքով ունկով հասկացրել էր Համիրամը յիմարին ,
 Թէ երբ որ ես թագաւորեմ՝ իսկոյն կլնիմ քեզ բաժին :

Այլ այս յոյսը շատ մեծերու սրտի մէջ կայր տարրացած ,
 Ամենեքեան մտքերու մէջ էին ծածուկ թաք կացած .
 Մահ Նինոսի երևում էր ճանփայ գէպ սիրտ թագուհւոյն ,
 Ցանկանում են որ այս ճանփան շուտ բացվի գէմ աթոռոյն :

Համիրամը նստաւ դահին՝ անդին ակամբք զարդարված ,
 Մարդարտայեռ էր պատուանդան որ ոտքի տակն կայր դրուած ,
 Չեռին ունէր գայիսոնը , գլխին թագ էր ասպարօշ ,
 Հովանի էր նորա դահին արքունական մեծ դրօշ :

Ինքնակալը իւր գլուխը խոնարհեցոյց գէպ գետին ,
 Համիրամը դահճապետին նշմարք արաւ ցաւազին .
 Միտքը բերեց իւր Մենոնի գետին թափված արիւնը .
 Այս արիւնով ուղաց ջրրել՝ իւր նախանձու աճիւնը :

Գեռ չէր գրրել Նինոս գետին իւր խելազուրկ մազերը ,
 Գահճապետը իջոյց վերէն իւր երկսայրի սուսերը ,
 Թուաւ գլուխն զահին մօտիկ Շամիրամի ոտքի տակ ,
 Այս մէկ զոհ էր նոր թագուհւոյն առ Մենոնի յիշատակ :

Շիջոյց արիւնն հուր վրրիժուց մատաղ տիկնոջ սրտումը ,
 Մենոն նորոյ հանդստացաւ իւր տապանի միջումը ,
 Շամիրամին շատ հաճոյ էր այս նոր խնկոյ հոտ ու ծուխ ,
 Կեանք Նինոսի վրձարեցաւ աղբերը արեան յորդաբուղխ :



ԵՐԳԻԹ

**ԹԱԳԱՒՈՐԵԼ ՇԱՄԻՐԱՄԱՅ ԵՒ ԳԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ
ԱՌ ԱՐԱՅ**

Հուարումն պաշարել էր՝ վայրկենի չափ որերայ . . .
Յանկարծ լսուեց շաչիւն զինուց ընդ մերկանալ սուսերայ .
Գահճապետը զըլորվեցաւ վերայ անդլուխ դիակին .
Գահճապետի խողխողիչը ընկաւ անշունչ 'ի գետին :

Համիրամը հանեց սուրը , աղաղակեց բարձրաձայն ,
Ո՛վ սիրում է Համիրամին՝ թող արդ կանգնի օդնական .
Աջ ու ահեակ բաժանվեցան զըրան աւագ որեարը ,
Քաղաքական մարտ խմբեցաւ . վճիռ տի՛ տայր սուսերը :

Ո՛վ որ չուզէր Համիրամին՝ միաբերան կանչեցին ,
Ասորեստան չէ կամենում որ նուաճէ մէկ հատ կին .
Իսկ կուսակիցք Համիրամայ բարձրացուցին ձայները ,
Կեցցէ արքայ մեր Համիրամ , հատու լիցի իւր թուրը :

Սուր 'ի ձեռին Համիրամ՝ քաջ՝ վազեց յամբոխ քաղաքին ,
Հաղար ու բիւր երիտասարդք նորա յեանէն զընացին ,
Մինչև 'ի ճաշ նուաճուեցան խռովարկու հընասէլք ,
Նոցա ձեռքէն առնվեցան ամենայն զէնք և սուսերք :

Այսպէս մայրս մէկ օրվան մէջ նստաւ յաթու արքայի ,
Թաղել տուեց առանց պատուոյ անկեալ դիակ Նինոսի ,
Զօրքերուն նոր կարգեր զըրեց , առաջնորդեց քաջութեամբ ,
Հատ երկիրներ իւր ձեռաց տակ նուաճեցոյց արութեամբ :

Առիժացան նորաճորքը , անյաղթ էին ամեն տեղ ,
 Համիրամի սէրն անում էր նոցա հրղօր և ահեղ .
 Մէկ հաս ժպիտ որ արկանէր սոսկականի երեսին ,
 Անյաղթ հսկայ կրփոխարկուէր անղօր վատոյժ սլատանին :

Գեռ չէր մօրս վարքն ծոված , անարատ էր և սիրտըն ,
 Օր ըստ օրէ մուանում էր իւր Մեննի կսկիծըն ,
 Իւր աշխարհի տնտեսութիւնն չէր թողնում որ զառածվի .
 Ենթադրեւոյ բաղղն ու բարին միշտ կայր նորա ՚ի սըրտի :

Սկսեցին յամեն կողմանց դալ թաղաւորք աշխարհաց ,
 Որ Համիրամ նոցա մէջէն ընարէ փեսայ ըստ կամաց .
 Բայց թաղուհին չկամեցաւ հարսն կոչելի ոչ մէկին ,
 Որովհետեւ մանկութենէն սէր էր տուել Արային :

Միտքը բերեց Մեննի հետ իւր Հայաստան երթալը ,
 Եւ Արամին դերդաստանով Գամրաց երկրում տեսնելը ,
 Չքնաղ Արայն նորոգվեցաւ նորա մտքում նոյնութեամբ ,
 Մինչ չէր կապել իւր հոգւոյ հետ Նուարդ տիկնոջ հարսնութեամբ :

Գեսպան դրկեց Արայի մօտ , շատ պարզեներ , շատ ընծայ ,
 Որ կամենայ ամուսնանալ և անուանվիլ իւր փեսայ ,
 Միջպետաց թաղ ու աթու Հայկազանց հետ միացնէ ,
 Ասորեստան և Հայաստան հրղօր ձեռամբ փայլեցնէ :

Եկան գեսպանք Հայոց աշխարհ , և Արային սլատմեցին ,
 Ինչ որ նոցա ապսպրել էր այն բաղնայաղթ թաղուհին :
 Երբ որ Արայ լսեց այս բան , աչքէն թափեց արտասուք ,
 Գնաց Նուարդ բամբիշի մօտ՝ հոգւոյ մէջը կոծ ու սուղ :

* Արամերբի մէջ է այն միջնակայր , և այն օրէլ երևացաւ Համիրամ :

Ասաց . Տիկին՝ սկսեց իմ անբաղդութեան օրերը ,
 Հայաստանին վրնաս կու տայ Համիրամայ այս սէրը ,
 Քեզմէն բնաւ չեմ բաժանվիր , թող՝ որ մահ մեզ բաժանէ ,
 Ես չեմ կարող քեզ հետ փոխել Ասորեստան կամ Նինուէ :

Իմանում եմ որ պատերազմ պիտի բացվի մէջերըս .
 Համիրամը սմբակակոխ կարէ անել երկիրըս .
 Արիւն պիտի շատ խոխոջայ իմ ապաբաղդ Հայկազանց ,
 Չրդիտեմ՝ թէ ինձ ինչ վիճակ են պատրաստել քաջք Մասեաց :

Պատասխանեց Նուարդ տիկին . ո՞վ փառացի իմ փեսայ ,
 Գեղահարսն ինձ նահապետ արամազնեայց քաջ Արայ .
 Աղաչում եմ քեզ սիրելով իմ պատճառաւ 'ի զուր տեղ ,
 Երկրիդ վերայ չըհրաւիրես այդ դուշակած սուր ահեղ ,

Անձն իմ պատրաստ մատչիլ 'ի զոհ ազգի բարեաց և բաղդի ,
 Գո՛ւ առ յանձնդ ինչ ասում է քեզ այն հզօր թագուհի ,
 Համիրամայ դարպասի մէջ ես էլ կարեմ զետեղիլ ,
 Միօրինակ կարեմք երկուքս հողւոյդ սիրով փաղաղիլ :

Ապա թէ նա չըյօժարի ինձ հետ բաժնել քո սէրը ,
 Թող միայնակ վայելէ քեզ՝ իմ սրտեռանդ նուէրը ,
 Ես հեռուէն տեսանելով քեզ երջանիկ՝ կը ցնծամ .
 Գիտեմ որ զիս չես մոռանար , չես հեռանար յարածամ :

Արայ կրկնեց , Նուարդ տիկին՝ այդ բընաւ չէ կարելի .
 Որ Հայկազանց բամբիշ մայրը՝ նստի որբուկ և այրի .
 Քո երախտեաց , անչափ սիրոյդ՝ ինչ տրբիտուր կը լինէր .
 Թէ ես քեզմէն բաժանվէի . . . ես այդ բանը չեմ անէր :

* Արամեբէի վերջին վէպտ այս երախտիտ և սիրոյ առահաստարչեայտ էր
 պատմէն :

Ասաց . դռնէն արտաքս ելլաւ , զնաց իւր մեծ զահլիճը ,
 Ուր որ կանգնած էր զահլի մօտ՝ սուր ՚ի ձեռին զահլիճը ,
 Եւ զօրավարք և քաջ զինուորք՝ որ Արամայ հետ էին ,
 Կարգաւ շարուած սենեկուճը՝ Նահապետին մնային :

Յետոյ մտան պատգամաւորք , ատեանուճը բաղմեցան ,
 Արայ նստաւ զահաւորակ , որեարքն շուրջ շարուեցան ,
 Ծնդաց վերայ նստաւ դեսպան , ամենեքին լռեցին ,
 Բացեց բերան պատգամաբեր , սկսեց բան պատգամին :



ԵՐԳ Ժ

ԲԱՑԱՍՈՒԹԻՒՆ ԱՐԱՅԻ ԱՌ ՊԱՏԳԱՄՍ ՇԱՄԻՐԱՄԱՅ

Հատ դարեր են արդ անց կացել՝ որ երջանիկ Հայաստան ,
Բարեկամ է Միջագետաց , և երկուսն էլ խաղաղ կան .
Երբ Հայազգի վաճառականք գալիս են մեր մեծ Նինուէ՛
Նոցա սիրով Ասորեստան մեծարու հիւր կ'ընդունէ :

Նոյնպէս էլ մեր վաճառականք որ գալիս են այս երկիր ,
Մանաւանդ այս լայնածաւալ մայրաքաղաք Արմաւիր †
Լսուած չէ թէ մէկ մարդ նրանց կամ մէկ կերպով նեղացնէ ,
կամ Ասորին Հայոց մէջը իւր իրաւունք չըզտնէ : §

Նիէ Նինուսի առաջին դեպքանոթեանն հաշուենք , դեռ չկայր զի
դար ևս , քայց այս քարեկամութեանն Ասորեն պիտի սկսէ , որ Հայիկ
Զանօթն էր : Արամերք :

† Հայտ առևտուր սերելով ո՛ր թէ մայն կ'երթային Նինուէ , այլ և
արեւոյ Բաբելոն կը յաճախէին , որովհետև այն քաղաքաց զի վաճառ
կէլ վաճառաւան :

‡ Արմաւիրը շինեց Արմայիս՝ (դեռ Հայկաց օրերը) , քայց մայրաքա-
ղաք նահապետաց ինքն արաւ : Հարմայ այս քաղաքը նորոգեց կո՛վածոյ քա-
րամք : Պարս. Հայոց :

§ Հայտ չէին նեղեր օրարականաց , քայց պեանենք թէ իրանք ևս չէին
նեղուիր յօրարութեան :

Ասորեստան և Հայաստան են իրերաց հարեան ,
Միջագետքն երկուսին են , կէսն Ասորոց , կէս Հայկեան . *
Այս երկրաց մէջ չեն ճանաչվում ո՛չ Ասորին , ո՛չ հայր ,
երկու լեզուաւ քաջ են խօսում . հասարակ է այս բանը : †

Մեր Համիրամ մեծ թագուհին նոր երկիրներ շատ գրաւեց .
Եթովպիա և Հնդկաստան սպաներազմաւ նուաճեց .
Այժմ նստաւ Բաբելոնում տալ անձին գոյզն զիւրութիւն , §
Պատերազմաց արշաւանքն տուին նրբան ձանձրութիւն :

Նինոսէն մէկ որդի ունի՝ որ Նինուաս է անունը ,
Միջագետաց բարձր զահի նա է բնիկ ժառանգը .
Այլ թագուհին է գեռաուրց , ինքն ամաց քսանուվեց ,
Գեղեցկութեան չըկայ սահման . բազդը այսպէս վիճակեց :

Չենք կամում որ այրի նստի այս մեծախառ տիկինը ,
Միաբան են մեր մեծամեծք , եօթանէօրք , զիւանը .
Հատ թագաւորք՝ տիրողք ազգաց՝ Ասորեստան այժմ կան ,
Որ յոյս ունին թէ մէկ օր նրան հաճոյանալ կարենան :

Բայց իւր սիրտը՝ մաքուր հողին վեհ առարկայ կրպտրէ ,
Արայի պէս ողջախոհ այր և գեղեցիկ կ'իննդրէ :
Բազում ամօք յառաջ նորան ՚ի բանակին է տեսել ,
Եւ իւր սիրտը սիրով վառեալ նրբան նաէր է տուել :

* † Միջագետք երկու ճանն էր , Միջագետք Հայոց՝ ուր է Մծքին և
Եգիպտոս . Միջագետք Ասորոց , ուր էն Բաբելոն և Նինուսէ :

§ Նինուս Բաբելոնէն՝ Ասորաց շինած Անուր քաղաք բերեց իւր ախ-
ուանիսան և կուէց այն մայրաքաղաքը հասարակելով իւր անուամբ Նինուսէ ,
Բայց Համիրամ արելով Նինուսին՝ մայրաքաղաքը կրկին Բաբելոն փոխադրեց
և այն Ռեշայոյց և զարդարեց : Բայց Նինուաս մասանգամ ախուր բե-
րեց Նինուսէ , Տօր արելու թեամբ՝ Բաբելոնը լախելով :

Ասորեստան ըողոր յօժար է այս վսեմ միութեան ,
 Փեսայ կլնի չքնաղ Սրայ , և հարս շքեղ Համիրամ .
 Երկու ակժող կրմիանան , երկու մեծ ազգ կրլնին մի ,
 Լայնածաւալ աշխարհի մէջ կը մնան Հայ և Ասորի :

Մէկ ազգութիւն՝ թէ Բաբելոն , թէ Արմաւիր , թէ Նինուէ ,
 Հայոց ազգը Բաբելոնում բարձուպատիւ կը դանէ ,
 Սրայ կլնի համ Ասորոց , համ Արամեանց թաղաւոր ,
 Հայոց աշխարհ կրճոխանայ , Հայք կլինին բաղդաւոր : †

Դեռ ևս այս քանի՜ ամբ են՝ որ ինքնակալ Նինուոր ,
 Ասորեստան փառաւորեց , հռչակի ետ Տիգրիսը ,
 Իւր յաղթութեանց ժամանակին լսեց համբաւ Արամայ ,
 Նախանձուեցաւ նորա փառքին , վրնաս հասոյց ինչ նրմա : §

Ո՛չ : Այլ ինչպէս մեծ թաղաւոր՝ քաջ Արամին մեծարեց .
 Շինող ոսկի և ապարօշ Նահապետին շրնորհեց ,
 Ոսկի բաժակ , ոսկի զրդալ , ոսկի սպասք սեղանի
 Իւր սեղանէն նըրան զրկեց ընծայ և ձօն պարզելի :

* Հաս բարեբաղդ է Հայոց ազգը և Հայաստանը , որ՝ ով մէկ անգամ
 նորա կը ճանչնայ , կը բարեհաճի խիոյն իւր հետ մասորել և մայնել .
 Բայց մեծայն՝ դժուարութիւնն այն է , զի՝ որ ազգի հետ ևս մասորելի ,
 պիտի այն ազգի մէջ վերջացնէ իւր ազգութիւնը : Երևի թէ ազգասեր
 նախնիք այս նախագուշակելով այդպիսի սերը և մասորութիւնը կը մեր-
 ժելին : Խեղճ Հաս . Ինչ մեղք է սորա ցանկութիւնը Հայերուն կանել ,
 երբ Նինու և Համիրամ այդ բարի խորհուրդը ունեցել են . Համիրամ
 Հայաստանէն փեսայ կ'ուզէր , Հաս՝ զվեթեամբին հարան կը խնդրէ :

† Եթէ Սրայ և իւր թերք յօժարելին , Հայաստանի ճոխութիւնը և Հայ-
 ոց բաղդասորութիւնը այնպէս կլինէր , ինչպէս եղև ճարդպանաց և սու-
 րիկանաց օրերը :

§ Ողորթ Մեծանի հօր հոգուն՝ որ Նինուի հասար գլխին այնքան քարոզ
 կարգաց , մեզ և համոզեց . ապա թէ ոչ Համիրամին վեր մար գործն : Ա-
 րամերք :

Ահա այժմ ևս դուք լսեցէք մեր թաղութեան պատգամը ,
 Չէ կամենում որ բաժանուած մնան այս երկու աշխարհը .
 կամ բարեկամ պիտի լինինք այս վեհափառ հարսանեօք ,
 կամ թշնամի պիտի մտնենք այս տեղ սրբօք և բլրօք :

Մտածեցէք . քանի՞ մահուներ պիտի լինն այս պատճառաւ ,
 երկուց կողմանց ո՞րքան արիւն , հարուած անհուն և անբաւ .
 Այս ամենայն թշուառութեանց առիթ սոսկ նա կը յայտնի ,
 Ո՛վ որ մերժէ մեր թաղութեան սիրալիր բան պատգամի :

Մէկ շնչին տարածվեցաւ լայն դահլիճի միջումը ,
 Հայոց ազգին չեղև հաճոյ Համիրամի պատգամը ,
 Չըկամեցան՝ որ 'Նուարդը՝ այրի մնայ տարածամ .
 Սիրելի էր բոլոր ազգին այն ողջախոհն յարածամ :

'Նոյնպէս չէին կամենում որ այս երկու ազգ խառնուի ,
 Միջադետաց մոլութիւնը Հայոց մէջ ևս տարածվի .
 կամ թէ Արայ երթայ նստի կամ Բաբելոն , կամ Նինուէ ,
 Հայոց ազգը և աշխարհը աչքէն ձգէ կամ ատէ :

Ոմանք ասին՝ թէ թող 'Նուարդ միշտ բընակվի Արմաւիր ,
 Համիրամը՝ Բաբելոնէն՝ կառավարէ իւր երկիր .
 Չքնաղ Արայ երկու տեղ ևս թող ունենայ մէկ մէկ կին ,
 Եթէ այս մէկ բանին կապուած է բաղդ երկրի և ազգին :

Առաքինի հին ծերունիք այս խօսքին չըհաճեցան ,
 Որ սողի մէջ մտնի արատ բազմակնութեան մոլութեան ,
 Ասին՝ եթէ երկու կընիկ ունենայ մեր նահապետ ,
 Անզգամքն եօթն և ութը կին կը սրահեն այնուհետ :*

* Գլխաւորի օգնական է թէ բարեաց և թէ չարեաց ճամփայ բացողը :

Աղձնեաց երկրի կողմնակալը որ երկրորդ էր Արայի ,
Ոտքի կանգնեց և սկսաւ խօսիլ յայն մեծ ատենի .
Ասաց . լսէ՞ք՝ մեր նահապետ , և մեծարոյ դեսպաններ .
Այս պատասխան է որ կու տան Հայոց ազգի աւաղք ծեր :

Մեր ծէսերը չեն այլոց պէս , և բնաւ մեր ազգ չըկարէ ,
Որ Ասորոց հետ միանայ , կամ թէ սրտանց մեծարէ .
Չքնաղ Արայն ունի տիկին , և կարող չէ բաժանվիլ .
Նուարդ դշխոյ ուխտիւք ընտրած է միշտ ազգի մայր կոչվիլ :

Համիրամ կին մեծ ու հզօր , իւր այլ փեսայ թող ընտրէ .
Հայաստանի անդորրութիւն այդ պատճառաւ չաւերէ .
Չիւնագագաթ լեռներու մէջ ինչ կայ նորան ցանկալի ,
Գուստր է դաշտաց Սենաարայ , ափանց Տիզրիս , Եփրատի :

Հայաստանը միշտ յօժար է լինել նորան դաշնակից ,
Ցանկանում է միշտ վայելել շքնորհ նորա աթուից .
Վաճառականք թող երթան դան , ինչպէս մինչ ցարդ անում են ,
Չէ գովելի որ այս չնչին առթիւ ազդերն զրկըվին :

Մենք ձեզ ևս եմք սիրով հայցում Միջագետաց դեսպաններ ,
Որ ազգաց մէջ անքակ պահէք առևտրական կապ և սէր .
Երբէք Հայոց ազգ չունի կամք տիրապետել Ասորոց ,
Նոյնպէս պիտի և Համիրամ սիրէ խնամով ազգ Հայոց :

Երբ սուս կացաւ Աղձնեաց տէրը , դեսպանք տեղէն վեր կացան ,
Գլուխները խոնարհեցրին դէպ առ դիւցաղն քաջ Արայն .
Ասացին թէ՛ մենք չենք կամում որ մեր մէջ մարտ բորբոքվի ,
Մենք ցանկացող ենք բընաւից յաջողութեան և բաղդի :

Ասացին ու արտաքս ելլան : Արայ դնաց առ տիկին :
Նրմա պատմել էր ամեն ինչ՝ արդէն իւր մէկ աղախին :
Նուարդ յառաջ իւր փեսային եկաւ ձեով շնորհալի ,
Եւ ցաւազին ասաց նրմա . դարձան դեսպանք Ասորի :

Գու գիտես որ ես քո կենաց իմ գլուխն զո՛հ կու տամ .
Թէ կայ հրնար , դու մի՛ մերժեր՝ Համիրամի այս պատգամ :
Արայ ասաց . խորհուրդ ծերոց այդ պատգամին չէ՛ յօժար ,
Երևի որ չէ համարում թէ ազգ Հայոց է տկար :



ԵՐԳ ԺԱ

ԱՐՇԱԻԱՆ ՇԱՄԻՐԱՄԱՅ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Երկարատե ճանապարհով 'ի Բարիլոն երբ հասան ,
 Համիրամի առջև դեսպանք ասին Հայոց պատասխան ,
 Տրամութիւն մեծ տարածվեցաւ նորա շքնաղ դիտակին ,
 Բայց շուտ կարաց ծածկել , սքողել , հողւոյ կիրքն մէջ սրահն :

Ասայ , դեսպանք՝ դուք պատմեցիք միայն ձերոց ասածը ,
 Այլ թէ Արայ ինչ խօսեցաւ՝ ասայէք ձեր լսածը :
 Գեսպանք ասին , Նահապետը դեսպանաց հետ չի խօսիր .
 Այդ պաշտօն է աւագ ձերոյ՝ որ կենում է Արմաիր :

Ուրեմն՝ ասաց Համիրամը , անձամբ անձին կը խօսիմ .
 Ինչ պատասխան որ նա ինձ տայ՝ ես կ'իմանամ , կ'ուսանիմ .
 Թո՛ղ Ասորի երիտասարդք այս տեղ ցոյց տան քաջութիւն ,
 Հայաստանի կողոպուտը կու տայ նոցա զօրութիւն :*

Այնուհետեւ ամեն կողմանց գալիս էին այրուձին ,
 Սենաարայ և Գէերայ լցուեցան զօրք 'ի դաշտին ,
 Տաղաւարով , վրաններով զարդարվել էր բանակը ,
 Տարածասիւրու հովիտներու շեն երևում լայն ծոցքը :

* Մտապել էր Համիրամ որ Նինոսի բանակեան դէ՛հ եղել էր ինչի
 այրասպան :

Այս անհամար խորանայ մէջ բարձրացած էր մէկ վրրան ,
 Համիրամն էր այն կառուցել յաղագս իւր բնակութեան .
 Երբ Բաբելոն ներկանում էր , դուրս էր գալիս բանակը ,
 Եւ այս միջոց պատանեկաց զըրաւում էր հողիքը :

Թէ զօրավարք , թէ զօրապետք և թէ զինուորք սոսկական ,
 Սրտերու մէջ անկասկած յոյս չքնաղէն՝ յղացան .
 Համիրամի մէկ ժպիտը չըբացնում էր կասկածը ,
 «Թաղուհւոյ սիրտ է ինձ նուէր , ես եմ նորա սիրածը » :

Հասաւ ձմեռն , բանակի մէջ տարածուեցաւ խնդութիւն ,
 Եւ Համիրամ իւր հնարիւք ամբացոյց այս ցնծութիւն .
 Համբաւ հանեց՝ թէ Համիրամ էլ Արային չէ ուզում .
 Քաջ Ասորուոց զօրաց մէջէն փեսայ ընտրել է մտածում :

Տէս՝ թէ այն քաջք ինչ ճոխութիւն են ցոյց տալիս իրերաց .
 Բանակի մէջ և քաղաքում ոսկու գետեր են բացուած .
 Գիշեր՝ ցորեկ ուտել , խմել , խաղալ , խնդալ , կաքաւել ,
 Հազար ու բիւր կանայք աղջկունք ուրախակից դան լինել :

Խաղուց , պարուց աղաղակէն երկինք երկիր կու գնդան ,
 Դափք ու թմբուկք անլուռ հնչեն , նուազք յունկս քաղցրանան ,
 Համիրամը շատ տեղ ինքն է կառուցանում քնարքը ,
 Երիտասարդք կորցնում են միտք ու խորհուրդք ու խելքը :

Մօտ էր դարուն դալարադեղ , քարոզեցաւ արշաւան .
 Ամենքեան ցանկանում են որ թաղուհւոյ հետ մընան ,
 Այլ Համիրամ հնարքներով նախամարտիկ զօրք հանեց ,
 Յետոյ բանակն յառաջ խաղաց , և վերջապահ դունդ շարժեց :

Այս վերջապահ դումարտակի մէջ էր դշխոյն Համիրամ .
 Չէր նա անձին անձուկ տալիս՝ ձի հեծնելով յարածամ .
 Պատգարակի մէջ էր բազմած , մանաւանդ մէջ լեռներուն ,
 Պատգարակն շուրջ էր պատած շքեղ գնդով քաջերուն :

Հայոց զօրքը այն միջոցին ժողովեցան համախումբ ,
 Հինգ կամ վեց բիւր սարանազեանք կուլ շեն երթար 'ի մի ումբ .
 Բարձրագագաթ Կորդուաց անցքը բռնել էին քաջապէս ,
 Մէկ տեղ չըկայր կիրճ Ասորեաց . հընարք գիտեն Հայք սէս սէս :

Օր ըստ օրէ մօտենում են զօրք Շամիրամ թաղուհւոյ ,
 Ասպատակքն սկսել են աւար առնուլ բերք հողոյ ,
 Աշուն մօտ էր՝ երբ Ասորիք հասան Հայոց սահմանը ,
 Յարձակեցան ապականել զիւզից հունձը ու ցանը :

Այլ զիւղականք առին իւրեանց երեքժանին զերանգին ,
 Ոմանք հեծան ձեռք բռնեցին , ոմանք մաճ , խոփ՝ արօրին .
 Ասպատակաց ընդդէմ ելլան այս քաջարի Արամեանք ,
 Համ ջարդեցին , համ փշրեցին , համ յետ դարձան յաղթականք :

Լսեց Արայ այս զիւղացւոց յանկարծ արած յաղթութիւն .
 Պարզե զրկեց տանուտէրանց , գովեց հայոց քաջութիւն .
 Երբ լսեցին լեռնաբնակք թէ նոքա ձիրք ստացան ,
 Իրանք էլ շուտ գունդ կազմեցին , ընդդէմ զինիլ ըսկսան :

Ազգային էր այս պատերազմ , դեռ զօրավարք շեն հասած ,
 Արայ զրկեց զօրապետներ՝ առաջնորդել այն քաջաց .
 Վերջացել էր և սոցա հունձք , լեռնականքն սլարասլ են ,
 Շամիրամի դէմ մարանչիլ զլուինն ուռած վազում են :

Վերջապէս բուն բանակ հասաւ , իմացվեցան անցքերը ,
 Թէ ինչպէս հեշտ հնձրվեցան մանդաղներով քաջերը .
 Յառաջասլաց զօրաց դունդը նրմանել էր նախիրի ,
 Որոյ վերայ դայլեր վազած ցրուել է մէջ դաշտերի :

* Հասնելն յետ երկրագործ կսկսեն կաւերը կասել , ցորենի խոտը՝ կան
 բարդած :

Զօրազուխն հանեց հրաման որ աստատակք չըշրջին .
 Հայոց անգութ դիւղականաց մօտիկ չերթան , չըդիպչին .
 Մինչև ինքն Շամիրամը դայ այն տեղ , տայ հրրաման ,
 Կորդուաց լեռնէն զօրքին անցնել և մրտանել Հայաստան :

Շամիրամն էլ վերջապահօք եկաւ հասաւ վերջապէս ,
 Տեսաւ որ իւր զօրքն կըրել են հարուածներ սաստկապէս .
 Եւ այս դեռ սոսկ գիւղականաց՝ լեռնականաց ձեռքէն է ,
 Որոց զէնքը խոփ ու արօր , եռածանի , հեծան է :

Խորհուրդ արեց մեծ բանակը այն լեռներէն հեռացնել ,
 Խրրամներով պատնէշներ շրջապատը ամրացնել .^{*}
 Ապա հընար այն վեմերէն դանել՝ անցնել Հայաստան .
 Արմաւիրայ լայնածաւալ դաշտին մէջ տալ մարտ արեան :

Թէպէտ հրամանն տարածվեցաւ բանակին մէջ շուտ արագ .
 Եւ Շամիրամ ըսպասում էր բազմեալ յանդորր պատդարակ ,
 Որ զօրքը շուտ յայն լեռնոտեաց հեռանայ ու ամրանայ ,
 Զօրաց պաշար ժողվել տայ՝ որքան պէտք է , զօրանայ .

Այլ Ասորոց զօրք չուղեցին այն հրրաման շուտ պատուել ,
 Կամեցան անդ Շամիրամայ դալստեան տօն կատարել .
 Լերինք , հովիտք դնդում էին ձայնիւ դափոց և թմբկաց ,
 Եւ գիւղականք եկել էին տեսնել հանդէս Ասորեաց :

Ասորիքը տեսնում էին որ Հայկազեան գիւղացիք ,
 Գողի նման ման են դալիս բանակի մէջ անկարիք .
 Ոմանք իսկոյն կամեցան որ նոցա անտի հալածեն ,
 Այլք ասացին՝ ինչ երկիւղ կայ , թնղ սոքա էլ աչք ածեն :

^{*} Այսպէս էր Նեփթոս Լա կաօեցել անել , որ ըյալուղեցաւ անել : Հայ . Պատ .

Ոմանք աւել քաղցր սիրով տունն նոցա դոմէշներ ,
 Մորթել , ուտել և իրանց հետ խառնել տաղեր ու երգեր .
 Մեծ մեծ պղինձ կաթսաներով եփում էին մրսերը ,
 Գեղացիքը աղ ուզեցին , որ համ բռնեն ջրերը :

Մէկ անգղամ երիտասարդ բերեց՝ կաթսայն աղբ ձրղեց ,
 Ասաց . Հայոց աղը այս է , և մէկ հայու էլ զարկեց :
 Բռնեց Հայր՝ Ասորիին , կոխեց մէջ այն կաթսայի ,
 Ասաց , այսպէս աղջուրի մէջ պիտի եփվի Ասորի ,



ԵՐԳ ԺԲ

ՀՐՁԻԳ Ի ԲԱՆԱԿԻ ԵՒ ԳԱՒՈՒՍՑ ԶՐԱԴԱՇՑԻ

Այս ընդհանուր խռովութեան եղև նշան սոսկալի .
Գիւղական հայք մոլեղնեցան , խաղաց մանդաղ , գերանդի ,
Ամեն քարի , ամեն ծառի , ամեն վիմի յետևէն ,
Լեռնաբրնակք դուրս են թափվում զերթ երևոյթք օդեղէն :

Անձուռնի բիրտ աղաղակաւ օդն ու ձորեր գնդացրին ,
Խայեր՝ եկէք՝ առաջ երթանք , ամեն կողմից ձայնեցին .
Խայկայ որդիք , ինչ մի խողաք , խաղար բիւր են գիւղացիք .
Կը խալածենք այս կրնամարդ՝ խանած վարած ասորիք :

Գիշերն եկաւ մութ թանձրամած . բանակի մէջ հուր ընկաւ .
Բոցը վառվեց ու բարձրացաւ , դամ քան զդամ զօրացաւ .
Այն զեղեցիկ խորանները , այն նրկարէն վրրանքը ,
Անկարեկիր հուրը լափեց , խանձեց քեղիք ու սխնքը :

Անբաւ անհուն ճոխութիւնքը՝ բոցոյն եղեն կերակուր .
Ամուր փակած արկեղաց մէջ մըտաւ կրրակ , բոց և հուր .
Հարիւրամեան հարստութիւն այրում կիզում էր մէկ կայծ ,
Այս Հայկազանց քաջութեան էր երախայրիք նախախայծ :

* Կորքուտաց , Մոկաց և Խոյսա շրջանայաք երկիրները հ պատար իս պատի
նման կընենքն ժնչ այսեր . հոյ՝ իսայ . հարիւր՝ իսարիւր . հող՝ իսող .
հանքիւս՝ իսանքիւս .

Հաղիւ թէ ծայր արշալուսոյ երևում էր լեռներէն ,
 Որ հայերը քիչ հեռացան այն հըրակէզ տեղերէն .
 Երթանք սարը , ու խեռուանց խայինք սոցա խաւասար ,
 Թող Համիրամ նոր կարկրանէ իրան խանձած տաղաւար :

Այս առաջին ձախորդութիւն Համիրամին չըկտարեց .
 Բանակն փոքր ինչ այն լեռներէն դէպ Սսորիք հեռացրեց .
 Հըրամայեց որ ժողովեն դիակունքը և թաղեն ,
 Հայերն եկան՝ առատ վարձով ընկերացան որ օղնեն :

Յոյս յղացաւ Համիրամ թէ Արային մէկ կը տեսնէ .
 Իւր սրտի սէր այն չքնաղին դէմ յանդիման կը յայտնէ .
 Ամենայն ինչ խաղաղութեամբ առանց մարտի կ'աւարտվի ,
 Իւր խորհուրդը գըլուխ կ'երթայ , և Հայաստան կ'նուաճվի :

Հընարադէտ այն թաղուհին իւր հընարքը ձեռք առաւ ,
 Հրաման հանեց բանակի մէջ , և շրջակայք լաւեցաւ ,
 Որ հաց կամ միս , կամ ուտելիք , կամ խմելիք , կամ գինի ,
 Հայոց ազգի դիւղացւոցմէն կրկին գնով թող գնվի :

Մէկ էլ տեսնես՝ որ սայլերը , ջարիները , էշերը ,
 Երամ երամ ցած են դալիս բերում երկրի բերքերը .
 Ամենայն օր քանի հազար հայ գիւղացիք սարերէն ,
 Ծոցը լիքը ոսկի արծաթ յետ են դառնում բանակէն :

Բանակը մէկ մեծ քաղաք է , լայնածաւալ տարածված ,
 Ամենայն տեղ վաճառականք , վաճառք , ապրանք բաց փոված .
 Հարիւրաւոր խոհանոցներ և անհամար հիւրանոցք ,
 Ուտել խմել օրը բոլոր , և ո՛չ դիշեր յանգչին բոցք :

* Այս բացեց Համիրամի ազգը , և խմայտա ընդ որն է Հայոց յարմարեալ
 շէնք :

Հրրաշագեղ Համիրամի գեղեցկութեան համբաւը ,
Մաղնիսի պէս ձրգում քարշում էր պատանեաց երամը ,
Ամենայն օր հարիւրաւոր երիտասարդք մեծազգի ,
Գալիս էին այն բանակը , ուր կայր նստած թաղուհի :

Սոցա հետ մէկ երիտասարդ եկաւ հեռու աշխարհէն .
Գլխէն մինչև ոտից սրբունք փայլում էին սուր ու զէն .
Աչագեղ էր ու գանգրահեր , մըրայօն և թըխակնեայ ,
Բարձրահասակ և թիկնաւէտ , հաստաբազուկ և անձնեայ :

Եկաւ ուղիղ , մըտաւ տիկնոջ ոսկիափայլ խորանը .
Ուր զօրապետք ժողովված են համախմբել զիւանը .
Ամենեցուն աչք ու միտքը դարձան նորեկ այն հիւրին ,
Այլ նա իւր աչք բւեռել էր յերես չքնաղ դշխոյին :

Համիրամ շուտ գտաւ հասու նոր եկողի զգացմանց .
Մտքի մէջ փոքր ծիծաղեցաւ , բայց շտուեց թոյլ իւր շարժմանց .
Բարեաւ եկիր՝ ասաց հիւրին , և հրամայեց որ բարձ տան ,
Նորեկ պանդուխտ նստաւ տեղը , դշխոյն կրկնեց զիւրն բան :

--Ո՞ր երկրէն ես , և ի՞նչ ազգէ , կամ ովքեր են քո նախնիք :
— Հորմուզէն եմ , անուն հօր իմ է Բիւրասպի , եմ Պարսիկ .
Ձրադաշտ կ'ասեն ինձ ճանաչողք , աստղահրմայ և մող եմ ,
Ուր սուր և զէն կը բըթանան , ես ըզձութեամբ իմ կ'օգնեմ :

Համիրամ շուտ սթափեցաւ , հրամայեց այն հիւրին՝
Թողուլ միայն լըբանի մէջ , իսկ միւս օրեարք թող ցրուին :
Երբ Համիրամ և Ձրադաշտ առանձնացան երկուքը ,
Չքնաղ տիկինն կարեկցութեամբ բացեց նորան իւր միտքը .

Ես Արային տեսել եմ վաղ , ասաց դշխոյն գեղեցիկ ,
Եւ յոյս ունիմ որ նորա հետ պիտի լինիմ երջանիկ .
Գու ի՞նչ հընար գործ կը դընես , որ ինձ մընայ այն քաջը ,
Հայաստանին ես աչք չունիմ , Արայն է իմ խնդրածը :

Ջրրադաշտ մէկ շառագնեցաւ, ընկղմեցաւ մրտածմունք .
 Չեռքը տարաւ դէպ 'ի ճակատ, շրփեց ընչացք, աչք և ունք .
 Ասաց, դշխոյ՝ կեաց յաւիտեան . Արայն քո ափ չի ընկնիր,
 Մինչ քո զօրքը սարը շանցնեն՝ չպաշարեն Արմաւիր .

Այնուհետև դարձեալ այս կայ, որ մէկ հընար տի՛ դանես,
 Հայկայ նետը որ Արմաւիր թանգարան է՝ ձեռք ձգես .
 Հայաստանի ազատութեան դրաւական այն նետն է,
 Եւ Արամայ այնքան փառքն լոկ այն նետի պտուղն է :

Ջրրադաշտ իւր սրտի տաղնապ՝ Շամիրամի սիրտն անցոյց,†
 Հընարագէտ այն թագուհւոյն մէկ ասպարէս նոր եցոյց :
 Հրաման տուեց Շամիրամը՝ որ Ջրադաշտին տան խորան,
 Կերած խմածն իւր սեղանէն, ծառայք նաժիշտք բաւական :

Ջորապետաց ծածուկ պատղամ տրուեցաւ իսկ նոյն օրը .
 Ով որ կարէ գիւղացոյց հետ, թող անց կենայ այն սարը .
 Ամենքեան թող ժողովին՝ Մասեաց լեռին դաշտերը,
 Գիւղից, շինից և աւանաց պատսպարվին խորշերը :

Ամենայն օր հարիւրաորք, հազարաորք են դընում,
 Գիւղացւոց հետ խառնրվելով Կորդուաց լերինք անց կենում .
 Մինչ մէկ մասը սարն է մտնում, միւսին ճանփան բացվում է,
 Գիւղականաց առատ առատ ոսկի արծաթ հասնում է :


* Արամ երբ պարտեց Մենանին այս նետի բանը՝ Շամիրամ զկայր այն
 փեղ : Արամերբ :

† Ջրադաշտ լեւ էր նախնեաց գոշակուսեանը՝ թէ Միջագետքի հասր
 կին, այնքան փառաց պիտի հասնի, որ ծածկէ լոյս արևին, (Արամերբ 39)
 և այն ևս քիտեր՝ որ Արային կ'իջէին Արևոս որդի և Արև, կասկածի
 ձեւ ընկաւ, թէ թէ գոցե այս Շամիրամ այն կինն է, և Արայն Արևը,
 թեպէտ այն թիւոց բան շատաց, քայց երբ Արայ զոր գնաց՝ այն շամանա-
 կը յեշեց :

Մէկ ամսի մէջ հարիւր հազար քաջ նահատակք անց կացան ,
 Ոսկին գտնում է ամեն տեղ՝ թէ կացարան , թէ սեղան ,
 Բանակումն կան բացօթեայ այն երկրացի հայազգիք ,
 Նոցա տանը ծածուկ կենում են ճոխ հարուստ ասորիք :

Համբաւ հանեց Շամիրամ թէ կուղէ գտնալ իւր տեղը .
 Բանակն իսկոյն տեղէն շարժեց , անհետ եղեն վրրանքը .
 Այն ոսկեմոլ պարզամիտքը կասկած չունին դշխոյէն ,
 Շամիրամի պատգարակը ուսով անցրին սարերէն :

Հիւանդ աղջիկ է՝ ասացին , պիտի երթայ Արմաւիր ,
 Արմենակայ Սուեայ ներքոյ թողուլ զցաւ իւր զազիր .
 Յիսուն հայկազն առիւծատիպ սպառազէն ձիաւոր ,
 Շամիրամին բերին Մասիս , վարձ ստացան փառաւոր :



ԵՐԳ ԺԳ

ԲԱՆԱԿԻ ԱՍՈՐԻՈՅ ԵՒ ՀԱՅՈՑ

Փոյթ չհամրեց Շամիրամ թէ ցուրտ ձմեռն էր վերահաս,
 Հրրամայեց բանակ կազմել՝ երբ որ Մասեաց դաշտն եհաս.
 Հայաստանի այլ հովտաց մէջ քիչ կան այնպէս լայն դաշտեր,
 Ուր Շամիրամ կարող լինէր տարածանել իւր գունդեր:

Երևի թէ Ջրադաշտ էր շրջագայած Հայաստան,
 Եւ տեղեակ էր երկրի դրրից և կանոնաց մարտական.
 Հազար ու բիւր այն զօրքերուն լայնարձակ տեղ էր պիտոյ:
 Որ անխափան շարժիլ շրջիլ կարենան զօրք թշնամոյ:

Ըսեց Արայ՝ որ Շամիրամ միջամուխ է իւր երկիր,
 Գարձաւ զօրքով Կորդուաց լեռնէն և մօտեցաւ Արմաւիր.
 Աներկեան իւր քաջութեամբ ընկաւ ՚ի մէջ բանակին,
 Աջ ու՛ ահեակ ցրիւ գալով ճանփայ տուեց ասորին:

Թէ Շամիրամ, թէ Ջրադաշտ, թէ քաջարի պատանիք,
 Որ թիկնապահք էին նոցա և մրցակիրթ արք մարտիկք,
 Արայի հետ էին ուզում միայն կռուել՝ որ բռնեն,
 Պատերազմը առանց արեան և հարուածի վերջացնեն:

Բայց այս միայն Շամիրամի էր սիրատարի խորհուրդը,
 Սէր էր տուել նա Արային, կաշառել էր իւր զօրքը,
 Որ՝ Արային գտնեն հրնար՝ ձեռք քերելու կենդանի,
 Խոստացել էր և մրցանակ, քաղաք, կանայք և ոսկի:

Այլ զօրապետք, զօրաղլուխք, քաջ պատանիք յաղթական,
 Արայի մէջ տեսնում էին միայն իւրեանց ախոյեան.
 Համիրամի սիրտըն Արայ էր նոցամէն զողացել,
 Մահ Արայի կարէր այն խոչ նոցա անձնէն հեռացնել:*

Ինչի՞ համար այս լաւ թիբան մենք Արային պիտի տանք,
 Մի՞թէ փակուած է մեր կոկորդ, որ այս պատառ կուլ չտանք,
 Երբ Արային ասորեաց սուր հասնի՝ ի մէջ այս մարտի,
 Համիրամը փոքր ինչ կ'ողբայ, փետայ կ'ընտրէ ասորի:

Այլ առաւել Ջրադաշտն էր՝ որ կ'արձարծէր այս հուրը,
 Ամենեցուն խոստանում էր Համիրամի վառ սէրը.
 Ասում էր. դու ինչ պակաս ես քան այն լերանց զազանը,
 Իրաւ մէ քիչ մարդու նման ունի քինթն ու բերանը:

Համիրամը չէր իմանում որ բիւրաւոր իւր զօրքը,
 Իրանց համար նշան են դրել Արայի օրն ու կեանքը.
 Ամենայն օր աղաչում էր զօրապետաց և զօրաց,
 Որ Արային կենդան բռնեն, և աւանդեն իւր ձեռաց:

Լաւ երազ է՝ թէ կատարվի՝ ասում էին զօրքերը.
 Գու Արային կ'ամուսնանաս, նըրան կուտաս քո սէրը.
 Մենք ինչ անենք այնուհետեւ, բերաններս բաց մնան,
 Մէկ հատ է մեր այծմիկ տիրող, կ'աւելանայ և Արայն:

Չէ՞ թագուհի՞ դու մի կարծեր, այդ խոստմունքէն թէ խաբուինք,
 Քո տեղ քաղաք՝ կանայք՝ ոսկի՝ վարձատրութիւն ընդունինք.
 Երբ դու ընկնիս մեր ձեռքերը՝ ամենայն ինչ այն տեղ է,
 Մեզ բաւական վարձատրութիւն այդ գերապանծ քո գեղ է:

* Այս խորհուրդը յղացաւ Ջրադաշտ նոյն ժամայն՝ երբ առաջին նուաճ
 իօսեցաւ Համիրամի հետ որսանչին, և այս քաղաքաբն թաշուկ պարաջեց
 ասորոց մէջ:

Ինչպէս արել ենք մենք խորհուրդ՝ այնպէս էլ վերջն կու լինի .
 Արայն իրան արեան մէջը պիտի միայն ընկղմի .
 Քեզ Արայի միայն անշունչ մեռած դիակ ցոյց կու տանք .
 Քեզ հետ մէքիչ սուտ արտասուք կը թափթըփենք , կը ողբանք :

Այսպէս չքնաղ սիրուն մայրս վառված սիրով Արայի ,
 Ձեր հասկանում թէ ինչ խորհուրդ ունի վավաշ ասորի .
 Օր ըստ օրէ թանձրայնում էր իրայ զօրաց գունդերը ,
 Չըզիտէր թէ այն Արայի պիտի կտրէ օրերը :

Արայ տեսաւ որ Շամիրամ կ'ուզէ քաղաք պաշարել ,
 Արմաւիրը քաղցած ծարաւ պինդ պահելով նեղացնել ,
 Հրամայեց որ որքան կան քաղաքի մէջ ասորիք ,
 Ամենեցուն հանեն , վարեն , դէպ ՚ի բանակ տան տեղիք :

Երբ որ այսպէս ապահովեց իւր քաղաքը ներքեւն ,
 Հրաման տուեց զօրաց կազմիլ , որ դուրս վազեն քաղաքէն .
 Այն գիշերին յանկարծ բացին քաղաքին չորս դռները ,
 Եւ հայք կատղած դուրս թափուեցան՝ ձեռին բռնած թըրերը :

Չարհուրելի մէկ տեսարան երևեցաւ այն գիշեր ,
 Հուրն ու սուրը շէր գաղարում , ամեն խոշ խութ լափում էր .
 Ծայրէ ի ծայր տարածվել էր ամենածախ կըրակը ,
 Մէկ մեծ խարոյկ էր նըմանում այն գեղեցիկ բանակը :

Գեռ քանի՞ ժամք են անց կացել՝ որ Շամիրամ և սպայք ,
 Ուրախ խորհուրդ էին անում որ առնեն նոր արշաւանք ,
 Գեռ Շիրակայ պարարտ երկիր՝ հաց , կերակուր ճաշելու ,
 Արցախ , Սիւնիք , Տայք ու Գուգարք ասպատակօք ծածկելու :

* Այս ըստ Տեճի Տասին այն ասորիքն էին՝ որ շաճուհի եկել բնակուել էին : Երբ ժի :

Բերին նորա օգապարիկ սօս ամեհի նժոյգ ձին ,
 Որ ո՛չ մէկին մօտ չէր թողնում բացի չքնաղ թաղուհին .
 Ասիայի խոր աշխարհներ նուաճելիս էր զըտէր ,
 Միշտ դշտոյի հըլու շրթանց՝ երբ նորա քաղցր ձայն լսէր :

Սերունդ ձիոյն քաջ Բարշամին՝ հինգ տարեկան շատ առոյգ ,
 Ոսկեղօծեալ էին զրահք որ հազած էր այն նրժոյգ ,
 Ոսկու տակը էր վառապան պողովատիկ և մրխած .
 Անգրծելի զըրահները աննրման գործ ճարտարաց :

Ինքն տիկինն հազին ունէր անդամանդեայ վառապան .
 Ո՛չ սուր , ո՛չ նետ և ո՛չ նիզակ կարեն լինել ազդական .
 Չեռին վահան ունէր ոսկի անգիւտ քարամբք զարդարած ,
 Սուսեր արծնած և երկսայրի իւր ազդերէն կայր կախուած :

Գլխին ունէր մէկ սաղաւարտ դոհար ակամբք սլճնազարդ ,
 Անխղելի սուր սուսերաց՝ յեռեալ խոշոր անդամանդ ,
 Այս ամենայն նորատեսիլ զէնքը , սուրը , զըրահը ,
 Հնդկաց երկրէն աւարել՝ երջանիկ այս չքնաղը :


Հըրամայեց՝ որ զօրավարք իւրաքանչիւր քաջերով ,
 Իւր յետեից չըհեռանան , և հետեին գնդերով ,
 Յոյս ունէր որ մէկ էլ տեսնէ՝ իւր ցանկալի Արային ,
 Երբ հայ զօրաց առաջնորդէ՝ լինի քաջաց առաջին :

Այս իւր խորհուրդ՝ Չըրազաշտին միայն ծածուկ էր յայտնել ,
 Եւ Չըրազաշտ զօրաց մէջ էր համբար զաղտ տարածել ,
 Ամենեքեան միտք ունէին որ այս զիշեր սպաննեն .
 Այլ Չըրազաշտ ասաց նոցա՝ որ այդ անել կարող չեն :

* Բարշամի և Արամի «- երեւար+ էին Ռերյա-որ ազգակից+ = Արամերք =

Քաջ թագուհին չըվախցաւ յանկարծահաս վրտանդէն՝
 «Ո՛վ որ՝ ասաց ինձ սիրում է՝ թող առնու իւր սուր և զէն .
 Զըրագաշտը էր առաջին որ դշխոյին մօտ եկաւ .
 Գամ քան զգամ ահեղ գնդեր կազմըվեցան զնովաւ :

Բայց չըյայտնեց թէ այդ դրան քաջ ապահով բանալին ,
 Հայկայ նետն է՝ որովհետեւ ինքն էր ուզում խղճալին ,
 Շամիրամի ձեռքով տիրել և իւր ձեռքըն անցունել ,
 Հայկայ նետով Հայկայ գահը հեշտ ու դիւրին գրաւել :



ԵՐԳ ԺԴ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ԱՆՁՆԱՏՈՒՐ ԼԻՆԻԼ
ՇԱՄԻՐԱՄԱՅ

Շամիրամը այսպէս կազմած առաջ տարաւ իւր զօրքը .
Թէպէտ սուրբ բռնած ունէր , բայց չէր շարժում բազուկը .
Իւր հրափայլ երկու աչքը կը յածեցնէր ամեն տեղ ,
Որ կարենայ տեսանել իւր փափաքելին հրաշագեղ :

Այս միջոցին քաջիկ Արայն իւր թիկնապահ պատանեօք ,
Արծիւի պէս պատառում էր զօրեղ մաղլօք , ճիրանօք .
Մահ զուգընթաց նորա սրբոյն , սարսափ՝ երկիւղ՝ նախընթաց
խոխոջալով արիւն կերթաց նման ուղխից վըտակաց :

Փախչողները հանդիպելով Շամիրամին դուժեցին ,
Թէ Արայն է գալիս դիմաց և սուր և հուր ՚ի ձեռին .
Շամիրամ իւր ձին վաղեցրուց՝ որ շուտ հասնի անձկալուոյն ,
Գէթ մէկ անգամ էլ կարենայ տեսնել երես սիրելուոյն :

Մէկ էլ անսնես՝ որ երկուսը մէկգմէկու դէմ եկան .
Միջոցները պատերազմողք տեղ բաց արին բաւական
Շամիրամը տեսաւ յայտնի , ձեռքով ոտքով թուլացաւ ,
Ձին կանգնեցրուց տեղն ՚ի անդը , և ո՛չ մէկ կողմը շարժեցաւ :

Յառաջ վաղեց նախ Զրրադաշտ , զգիմի հարաւ Արային ,
Արայ իջոյց իւր սուրերը , և կործանեց ՚ի դետին .
Ընկաւ մոզը ձիերուն տակ՝ վիրաւորաց հետ մընաց ,
Մինչև հասան իւր թիկնապահք՝ բարձին վերայ վահանաց :

Ջրադաշտի նրման բազումք իւրեանց բազզը փորձեցին .
 Ոմանց՝ խոցուած , ոմանց՝ անշունչ՝ դլորեց նորա գերանդին ,
 Մէկ էր հարուած բազկի նորա , երկու անգամ չէր կրկնում ,
 կամ մէկ անգամն էր խեղացնում , կամ թէ իսպառ կէս անում :

Իսկ Համիրամ իւր սրտին մէջ դամ քան զգամ աճում էր .
 Արայի այս արիութիւն կանացի սէրն վառում էր .

Այսքան չըքնաղ սլատիերի մէջ՝ այս ինչ հզօր զօրութիւն ,
 Այս ինչ շքեղ զարմանալի գործ է գործել բընութիւն :

Գիտեմ որ շատ քաջ էր Արամ , Համափիւռն էլ աննման ,
 Սա քաջութեան նոր Արամ է , գեղեցկութեամբ մօր նրման .
 Ձեռին սուր չէ , այլ լուկ հարուած , ամենածախ մէկ շանթիկ ,
 Խոցէն առաջ մահն է հասնում՝ ինչպէս ամպէն կայծակիկ :

Ապա ուրեմն իմ բնտրութիւն ամենեին չէ սրխալ ,
 Սա է միայն արժանաւոր Համիրամին տիրանալ ,
 Ողորանայ՝ թէ չըլլսէ , կենդան կենդան կու բռնեմ ,
 Չիւնաղաղաթ լերանց նրման սրտի սառը կը հալեմ :

Նուարդին էլ ինձ քոյր կանեմ , նա իւր ձեռամբ ինձ կուտայ ,
 Ես նորամէն չեմ արդիւլեր , նրան էլ սիրէ թո՛ղ Արայ ,
 Յոյս ունիմ որ՝ ո՛չ թէ մէկ հատ , այլ քառասուն Նուարդներ ,
 Չը կարենան ինձ հետ վէգ գալ՝ երբ որ մէկին ես տամ սէր :

Այն լեռնական օրիորդը , այն Նուարդը բազդաւոր ,
 Չը կարծեմ թէ կերպարանօք քան դիս լինի գեղաւոր ,
 Այն ծակամուտ կնամարդիկ ինչո՞վ կարէ գրաւել
 Իւրեան մարդու սիրան ու հողին , և իւր անձն էլ սիրեցնել :

* Համիրամ իւր մանկութեան հասակումս պետել էր Երկուսին ևս : Արամերէ : (Այլ այս մեջոցին Համափիւռ կենում էր 'ի դամբարանս՝ ուր լեռնազած էր Արամ , և Համիրամի հետ պետակցութեան շանեցում՝ որպէս պատասխանէին , որ չի կատենար մարտազարդս արիւնայ ծանրութեան դարանալ :)

Ո՛ր կու մնայ մեր Ասորոց կանանց սեռի սրնունդը ,
 Համիրամը մոռացել է իւրեան մօրէն ծրնունդը ,
 Մայր իմ՝ Գերկէթ , աստուածութեան կը կարգադրեմ քեզ պաշտօն ,
 Ո՛ր օր հասնիմ փափաքանացս՝ կը լինի քո փառաց տօն :

Մինչ Համիրամ զմայլելով կեցել նայէր Արային ,
 Արայ կիզող բոցին նման ճարակում էր յասորին .
 Աջ ու ահեակ հարիւրաւորք տերեւի պէս թօթափած ,
 Ինքն հաստատ կաղնոյ նրման անշարժ ամուր էր կանգնած :

Աչքը մէ քիչ վեր բարձրացուց , հեռուանց տեսաւ դշխոյին ,
 Չը ճանաչեց թէ ո՛վ է այն . զնալ մօտիկ քրշեց ձին ,
 Եւ 'ի հեռուստ աղաղակեց . մերոնցմէ՞ն ես՝ թէ օտար՝
 Քո այդ սուսեր որ կայ ձեռիդ՝ մերկացրել ես ո՛ւմ համար :

— Ո՛վ է քան զիս աւել քոյին՝ չքնաղիւրան իմ Արայ ,
 Ես չեմ օտար , ես միշտ քո եմ , դու իմ ընտրած իմ փեսայ ,
 Տե՛ս՝ թէ ինչպէս Համիրամը քեզ իւր անձրն է նուիրում ,
 Հողւոյ մէջը քո միայն սէր անշէջ հըրով է վառվում :

Ոսկի զանգակ էր դողանջում Համիրամի խօսքերը ,
 Արայ ամօթ վարկաւ ընդգէմ նորա շարժել սուրերը .
 Ասաց . դշխոյ՝ ինչո՞ւ համար վրտանգաւոր այս միջոց ,
 Պատերազմի մէջ ես մըտել , քիչ են խումբեր մարտկաց քոց :

— Մի՞թէ դու ինձ խնայում ես , ցանկալի է քեզ կեանքս ,
 Հաւատա ինձ՝ չքնաղ Արայ , որ քո դէմ չեն իմ զէնքս .
 Լապտերներով ճրրաղներով երբ որ ելան քաղաքէդ ,
 Ես կարծեցի՝ թէ այն ինձ է հրաւեր հանած բանակէդ :

* Արայ այս հարցմանէր արաւ հայերէն և ասորերէն համանքամայն :

Մտքումս ասի ճրրադալոյց և լուսափայլ այս դիշեր ,
 Ինձ ցոյց կուտայ այն չքնադին՝ որին ընծայ է իմ սէր .
 Տեսնում ես որ պատերազմի զըրահներ չեն հագումըս ,
 Հարսի նման ել ընդ առաջ՝ ասաց յոյսս հոգումըս :

Գշխոյ՝ դարձիր քո բանակեսող , այս տեղ մահ է և արիւն .
 Տեսնում ես թէ ինչպէս կարմիր է ներկրված սիպտակ ձիւն .
 Ամենայն տեղ են դիակունք , խառն են հայք և ասորիք ,
 Քանի՞ պատկեր ունի մահը , քանի՞ կերպեր ճապաղիք :

— Արայ՝ այսքան շատ դիակունք՝ որ շուրջ զքե անկեալ կան ,
 Գափնեայ պսակ են իմ գլխոյս և զարդարանք հարսնութեան .
 Սանդուղք պիտի սատարեն ինձ՝ որ հասանեմ քո սրբոխն ,
 Այս ողջակէզ խաղաղական , և զոհ հզօր քո բաղկին :

Միթէ Հայոց ազգի մէջը՝ չըկայ օրէնք մարդկութեան ,
 Ես մոլորված եմ քո սիրով լայն դաշտերում՝ մէջ արեան .
 Չեռքէս բռնէ՛ տար իմ խորան , ինձ մօտ կ'ընիս յերաշխի ,
 Երբ առաւօտ արև ծագէ՛ դարձիր յայց քո քաղաքի :

Արայ ասաց , ես չեմ այդքան անպարագիծ յինքնութեան ,
 Որ կարենամ ինքնազլուխ գալ դշխոյիդ՝ ի խորան .
 Թէպէտ օրէնք ազգաց ազանց ինձ ապահով կրպահեն ,
 Բայց ես առանց իմ ձերերուն չեմ հեռանար քաղաքէն :

— Լաւ է՝ Արայ , ընդունում եմ այդ քո ասած պատրուակ .
 Չեմ հարկադրեր՝ որ այս դիշեր դաս յիմ խորան և բանակ ,
 Բայց դիտես որ առիւծ քո հայք բանակատեղս էրել են ,
 Իմ խորանի անկողինը աւար առել կապտել են :

Քեզ չեմ կարող հիւրընկալել իմ տաղաւարս՝ քան Սրայ ,
 Ես էլ պիտի ձիւնի վերայ դիշեր անցնում բացօթեայ .
 Լաւ է որ դու ընդունիս զիս , և տանիս քո քաղաքը ,
 Մէկ քանի օր հիւր քեզ լինիմ , մինչ կարկատիլի բանակը :

Արայ ընկաւ շուարման մէջ . վերջը բռնեց ձախ ձեռնէն ,
 Ասաց , դու իմ հիւր ես անդին , երթանք զազիր այս տեղէն ,
 Թող փողք հնչեն , զօրքն դառնան , զինուց լինի լուծիւն ,
 Մինչև 'ի տանն բերան բերան հասալի յարմար հաշտութիւն :



ԵՐԳ ԺԵ

ՇԱՄԻՐԱՄ Ի ՏԱՆ ԱՐԱԹԻ

Մտան ուրախ նախնեաց դարպաս , և Շամիրամ վեր վազեց ,
 Նուարդ իսկոյն ել ընդ առաջ , և դշխոյին փաթաթվեց .
 Իմ քոյր՝ ասաց Շամիրամը , Հայաստանեայց մեծ տիկին ,
 Ես այս գիշեր քո երդի տակ հիւր եմ եկել խնդաղին :

— Բարեաւ եկիր՝ յաղթող դշխոյ , իմ տանն ես դու տիրուհի ,
 Ես աղախին քո և նածիշտ , հիւլէ մէջ քո արևի .
 Իմ տունն միշտ կայ քեզ համար՝ պատրաստ փռած , հանգերձած ,
 Ո՛չ թէ մէկ օր , այլ տարիով կարես կենալ ըստ կամաց :

Հանգիր դշխոյ՝ ուր և կամիս՝ ճանապարհէ ես դալիս ,
 Քո կեանքն միշտ մարտից մէջ է , ես գողում եմ լրսելիս .
 Ինձ պէս անզօր կանայք շատ կան , քեզ պէս այր մարդ ել քիչ կայ ,
 Ասաց , վազեց դահլիճի դուռն , մնացին դշխոյն և Սրայ :

Շամիրամը ասաց մտքում . կակո՞ղ փուշ է այս կինը .
 Սա ինձ չի տար ոչինչ պատճառ՝ որ ես հանեմ իմ ձայնը .
 Գեղեցկութեամբ ել չէ պակաս . բայց է քիչ մը ամօթխած .
 Սոցա երկրի ծէսն էլ այս է , կանանց պարկեշտն է գոված :

* Մեր նախնեաց աստիճանից իրանց զաւակաց զինաստրական վարժից հետ պատ-
 լիս էին և շրջակայ հոգի ազգաց լեզուաց հմտութիւնն :

Բայց ի՞նչ անեմ՝ որ հանդամանք ինձմէն զոհ եմ պահանջում .
 Ես Արայէն չեմ անջատուիր , հոգիս է այն միշտ տենչում ,
 Նուարդը ինձ չէ՛ ակոյեան , գեղոյն դիմաց զէն ունիմ .
 Քաղցր բարքը , համեստ վարքը , ահա՛ այս է երկիրդն իմ :

Իմ արարմունքս՝ Ասորեստան կ'հաշուէ դործ դիւցազանց ,
 Բայց սոցա մէջ մեծ ամօթ է կանանց նախատ չափազանց ,
 Ես քանի որ աստ կը կենամ՝ մինչ ամեն ինչ լաւ հողամ .
 Յետոյ յարմար հանդամանաց բերան շարժել կարենամ :

Դարձաւ ապա դէպ առ Արայ , և ասաց՝ թէ հընար չէ՞ .
 Որ մարդ ղրկես՝ որ նաժշտացս մէկ քանիսին թող կանչէ :
 Արայ ասաց ո՛չ թէ նաժիշտք , այլ և ծառայք կարեն դալ ,
 Սուրհանդակը իսկոյն կերթայ . արդեւք չըկան սահմանեալ :

Մինչ նոքա այս խօսում էին՝ Նուարդ մըտաւ դահլիճը ,
 Մէկ ձեռումը կայր լականը և միւսում ջրըկիճը .
 Եկաւ չոքեց գշխոյի դէմ , խրացները քակում էր ,
 Մէկ հատ նաժիշտ թաց ոտնամանք թոնրի բերնին շարում էր :

— Ի՞նչ ես ուզում դու իմ ոտքէս՝ Նուարդ տիկին սիրելի :
 — Թաց ոտներդ՝ շուտ այս ջրըով՝ կոնքում պիտի լուայվի :
 — Թող աղախին գայ լուանայ , և ո՛չ թէ դու՝ մեծ տիկին :
 — Թէ ինձ չըտաս՝ որ լուանամ , ամօթ կլնի իմ երդին :*

Մանր ու փափուկ և անարատ այն գշխոյի ոտները ,
 Որով Մասեաց յաւերժհարսունք՝ երբ կոխում են դաշտերը ,
 Նախանձելով կ'հառաչեն , ձեռքով գըրեց լականը ,
 Զուրը ամեց բարեխառնած , կատարեց իւր պաշտօնը :

* Այս սովորութիւնը շատ արդիաց Տեղիայ , Աբրահամ շլուանց զտրս հիւրեց :

Իսկոյն սուփրայ տարածվեցաւ, շարվեցան շատ խորտիկներ,
Գառան միսը և ձրկները, նորանշան թռչնակներ,
Երէվայրիք ամեն կողմանց բերվում են այն դարպասը,
Հայկայ օրէն էր մնացած պարզ անպաճոյճ այս ծէսը:

Գինիներն կարմիր կանանչ բրտի բանած անօթով,
Բաժակները են եղջիւրներ, դդուճք՝ երկար կօթերով,
Միայն դշխոյն իւր առջևը տեսաւ ոսկի ըսպասը,
Որն որ բազում տարի առաջ ընծայել էր Նինոսը:

Այս Նուարդի էր նոր հընար՝ որ բանեցուց այն զիշեր,
Չուզեց ոսկով ու արծաթով որ գայլոց սիրտ գրգռէր.
Արայ իսկոյն հասկացաւ որ խոհեմութեամբ էր անում.
Աչքով, ունքով, նշմարքներով իրերաց միտք են յայտնում:

Չուարձալի երիկնահաց մինչև 'ի լոյս երկարեց,
Ամեն ձկանց, ամեն թռչնոց համար դշխոյն հարցրեց.
Նուարդը միշտ հնարում էր՝ որ Արայ տայ պատասխան,
Շամիրամը ասաց նըրան ճղու չէս խօսում, Նուարդ ջան:

Նուարդ տուեց պատասխանի, կէս բերանին ծածկելով,
Քեզ հետ պիտի ես չխօսիմ՝ իմ թագուհի քաջագով.
Մեր մէջ այս մէկ ծիսի պէս է՝ որ երբ այրն կայ ներկայ,
Կինը չունի շատ իրաւունք՝ որ պատասխան հարցմանց տայ:

Մանաւանդ ես լաւ չըզիտեմ այն աշխարհաց անունը,
Ուստի առ մեզ միշտ դալիս են ձուկ ու երէ, թռչունը.
Թէ կամենաս ես կը պատմեմ՝ ինչպէս կ'եփվին խորտիկքը,
Այն դործէն մարդս մասն չունի, ինձ է յանձնել օրէնքը:

Ժպտաց չքնաղ Շամիրամը, և սրտումը այս ասաց,
Տեսնում ես այս վայրի կնկան, ինչ հնարներ է սովրած,
Այսօրինակ հնազանդութիւն՝ ուր միայն մէկ է կինը,
Չարմանալի երեոյթ է, չեմ հասկանում այս բանը:

Ասորեստան քաղմակնութեամբ կանանց սեռը են սանձում,
Եթէ մէկ կին քիչ նազ ծախեց՝ միւսք զլուխ են պատում,
Այս տեղ կանայք իսկ կանանց հետ չեն խառնվում խօսելիս,
Մինչև մարդը չը ակնարկէ՝ իբր իսկի չեն լրսելիս:

Տեսնեմ սոքա՝ որ թուշուններ ու երէներ են ուտում,
Մէջերը կայ՝ զուարճութիւն, կամ յանաղ են հասկանում,
Թէ այրը միշտ բռնաւոր է, կինը միայն աղախին,
Մէկ խօսք զլորեմ, տեսնեմ ինչ կայ սոցա խելքի քամակին:

— Արայ պիտի քաջ իմանայ լաւ խորտիկներ պատրաստել:
Արայ՝ Նուարդ զուարթերես միմեանց սկսան աչք անել:
Հա՛ իմացայ, ասաց դշխոյն, ձեր միջումը բաներ կան,
Ապա՝ դու ինձ պիտի պատմես՝ մարդուդ բանը Նուարդ ջան:

— Գշխոյ փառաց, ես իմ մարդու ո՞ր մէկ բանը քեզ ասեմ,
Չուկ եփածը, եթէ թուշուն խտրկածը քեզ պատմեմ.
Մէկ օր ասաց, երթանք Նուարդ ձիով շրջինք սարերը,
Գընացինք կէս օրվան ճանփայ, քաղցեցան մեր փորերը:

Ասաց Արայ, դու Նուարդ ջան արա՛ նետով մէկ որսիկ.
Ես փէտ* ժողվեմ, կըրակ վառեմ, ու խորովեմ հանդարտիկ:
Մէկ եղջերու ըսպաննեցի, տուի մարդուս՝ որ խորվէ,
Խորվեց, բերեց իմ առջևս, որ դաշնակով կտրտէ:

Երբ որ կերանք ու կշտացանք, յետոյ հաղիւ իմացանք,
Որ եղջերուն ո՛չ քերթած էր, և ո՛չ հանած էր թափանք,
Հատ ժամանակ ծիծաղեցանք այս իմ մարդու արածին,
Մինչև միւս նրովին նրման արժանացանք դիպուածին:

* Գրաբար այ յայնք աշխարհաբարաւ ՁԷԸ է են փոխել. այրել, երել.
փայտ, փէտ. հայր՝ հէր. մայր՝ մեր, այծ՝ էծ. Գայլ՝ քէլ. մայրէ՛՛ մե-
րէ՛՛ Լայլն: Յայգոսայ՝ յեգոսայ, կամ էգոսայ. այրի՛՛ էգի. այլ՝ էլ.

Մէկ օր ասաց . երթանք Սեան՝ Գեղամայ ծովն տեսանենք .
Յետոյ կ'երթանք ու Բղնունեաց ծովակին այց կ'ելանենք .
Եկանք Սեան , ծովակի ափն ձկնորսք ուռկան են ձրգում ,
Ձկներն կայտուում ծովափումը , կանանչի մէջ ոստոստում :

Մարդրս ուզաց մէկ ձուկ խորվել , կըրակ վառեց բաւական ,
Չուկը խորվեց . բերեց , կերանք , վերջը գաղտնիք յայտնեցան ,
Գեղարբունոյ փոր չէր բացած , ցուղա՛ փորոտիք եփվել էր ,
Այս էլ գառաւ նիւթ յանաղի՛ ինչպէս նախկին դիպուածն էր :



ԵՐԳ ՓՉ

ՆԱՌԻՄՈՒՏ ՏԱՆ ԱՐԱՅԻ

Երբ անկողինք պատրաստուեցան՝ Արայ դնաց այլ սենեակ ,
 Նուարդ մնաց դշխոյի մօտ , ուղեց ուրոյն անկողնակ .
 Համիրամը զարմանալով հարցընում էր գեղեցկին ,
 Թէ ինչի չես մարդուդ կշտին քընում 'ի մէջ քո մահճին :

Նուարդ տիկին պատկառանօք ետ դշխոյին պատասխան ,
 Քեզ չեմ կարող մէնակ թողուլ , դու իմ հիւրն ես պատուական ,
 Յէգուց կու գան քո մեծուհիք , ես էլ մարդուս մօտ կ'երթամ .
 Բայց այս գիշեր ես քո անձին համար զգոյշ տի՛ կենամ :

Այնուհետև սենեակումը թագաւորեց լուսթիւն ,
 Թոնրի մէջը վառած կրրակ տարածում էր ջերմութիւն .
 Համիրամ էր միշտ մըտայոյց , շատ խորհուրդներ էր անում ,
 Բայց Արայի սէր զըրաւել մէկ հընար չէր զըտանում :

Քանի անգամ կարծելով թէ Նուարդ խորին քնած է ,
 Տեղէն շարժեց որ սենեկում մէ քիչ շըջի , աչք ածէ ,
 Նուարդ իսկոյն իւր անկողնում զուարթերես նստում էր ,
 Ինչ հըրաման , ինչ է կամքդ , իմ թաղուհի ասում էր :

Չարմանալով Համիրամը մատաղ կընօջ արթնութեան ,
 Դեռ չես քընած , հարցանում էր փաղաքշախառն՝ Նուարդ ջան .
 Նուարդ նոյնպէս քաղցր և ամօք պատասխանը տալիս էր ,
 Քեզ պէս հիւրին խիստ մեծ զոհ չէ զարթուն կենալ մէկ գիշեր :

Լուսադէմին երկու չքնադք էլ քաղցր քնով ննջեցին ,
 Լուռ , անշունչ նաժիշտները եկան թոնիրն վառեցին ,
 երբ Համիրամ աչքը բացեց , տեսաւ որ Նուարդ նստած էր ,
 Նուարդ ասաց . դշխոյ՝ կամիս , եկել են քո նաժիշտներ :

Մտան սենեակ նաժիշտները և սկսան ծառայել ,
 Իւրեանց բընիկ թաղուհին սըճնազարդել և սլաշտել ,
 Պատերազմի դրահները ժողովեցին սլահեցին ,
 Թեթև զգեստ ականակուռ արքայուհոյն հագցուցին :

Նուարդ վաղ էր իւր դեղեցիկ անձն ձորձով զարդարել ,
 Այն սենեկէն՝ ուր Համիրամ կայր նաժշտօք՝ հեռացել .
 երբ Համիրամ զարդարվեցաւ՝ եկաւ Նուարդ հրախրեց .
 Ի միասին մտան դահլիճ այցելութեան լայն ու մեծ :

Արայ այս տեղ էր բնդունում իւր պատուական հիւրերուն ,
 երեք շրքեղ դահաւորակք պատրաստած կան վեհերուն ,
 Համիրամին բազմեցուցին այն դահերի մէկումը ,
 Արայ , Նուարդ էլ նստեցան մէկը աջ , մէկ ձախ կողմը :

Եկան Հայոց ազգի աւագք , պատիւ տուին դշխոյին ,
 Համիրամը ամեն մէկին բան խօսեցաւ ըստ անձին ,
 Ոմանց՝ անուն , այլոց՝ նախնիք , կիսոց՝ կալուածք կամ գործը ,
 Ամենեցուն էլ լսում էր , չէր մոռանում լրսածը :

Զինի նոցա և մեծուհիք եկան ՚ի տես թաղուհոյն ,
 Համիրամը Նուարդի հետ ելլան իւրեանց աթոռոյն ,
 Եւ սկսաւ տիկնաց մէջը շրջիլ նայիլ դեղեցկաց ,
 Զարմանում էր նոցա սպիտակ այտից , կրծոց , դաստակաց :

* Այս այն դրահներն էին՝ որ երեկ հարսնութեան զգեստ կոչեց հեթ-
 նութեամբ :

Հայոց ծերքըն որ դահլիճէն մտել էին յայլ սենեակ ,
 Խօսում էին իւրեանց մէջը՝ թէ սա շէ մէկ լուսնիակ ,
 Որ Նուարդին թողու Արայ , և սրբան իւր կին անէ ,
 Սա Նուարդէն ինչո՞վ է լաւ , կամ ի՞նչ բանով աւել է :

Նոյնպէս տիկնայք Հայաստանի բաղդաստելով երկուսին ,
 Որովհետեւ միշտ նոցա մէջ ման են դալիս միասին ,
 Ասում էին՝ թէպէտ իրաւ այս ասորին շքեղ է ,
 Բայց Նուարդն էլ ամեն կողմանց զեղեցիկ և չքնաղ է :

Ելին նոյնպէս մեծ մեծ տիկնայք , Նուարդ պահեց երեսնին ,
 Որք ամեն օր դարպասումն են իւր արանց հետ միասին .
 Այն ժամանակ սկսում էր ընտանեկան կեցութիւն ,
 Արայ , Նուարդ , և այն վաթսուներկազմում էին զետ մէկ տուն :

Սոցա ազատ կենակցութիւն Համիրամին զիւր եկաւ ,
 Ամեն մէկ այր՝ էր մէկ Արայ , ամեն կին էլ Նուարդ եղաւ ,
 Մէջերն ընկաւ մէկ սքանչելի միօրինակ պարզութիւն ,
 Քաղցր անպաճոյճ խօսակցութիւն , սիրայարդար միութիւն :

Համիրամը հարցուց , Նուարդ՝ սոքա քո քորք եղբարք են :
 Նուարդ ասաց , այն դշխոյ , ամենեքեան ընկերք են .
 Թէպէտ մարմնով այլ ծընողաց , այլ հօր ու մօր զաւակ եմք ,
 Բայց այս տան մէջ միմեանց քոյր , մայր , ընկերք , եղբարք , դստերք եմք :

Սոցա մարդիկն էլ այս տեղ են , ամենայն օր միասին ,
 Արք՝ Արային են զործակիցք , կանայք ընկեր ինձ՝ տիկին .
 Առաւօտէն մինչ յերեկոյ ենք յիրերաց անբաժանք ,
 Երբ երեկոյ կը հասանէ , սոքա կերթան , մենք կը մնանք :

Համիրամի խոհարարքը պատրաստեցին ուտելիք .
 Սուփրայ փովեց երկայն երկայն , ու շարեցին շատ խորտիկք .
 Համիրամը նստաւ զըլուխ , աջ կողմ առաւ Նուարդին ,
 Եւ ահեակ կողմ նստաւ Արայ , որեարք , տիկնայք ըստ կարդին :

Իրաւի որ արժանաւոր էր դարպասին այն ճաշը ,
 Յնժութեան մէջ էր այն օրը նահապետաց դարպասը .
 Միջագետաց ինքնակալը՝ այն չքնաղ մեծ թաղուհին ,
 Ճաշ էր ուտում Հայկայ տանը , այս մեծ պարծանք էր աղզին : *

Բայց այս միջոց կարծիք կանէր մէկ մարդ բոլոր այն աղզէն ,
 Թէ այն չքնաղ մատաղաւորաց աղջկայ նրման կին անղէն ,
 Պիտի բոլոր աղզին խարէ , պիտի նորէն բռնանայ ,
 Պիտի արիւն խոխոջեցնէ , ու ամենուն սրգալ տայ :

Ճաշէն յետոյ Շամիրամ շատ ականակուռ զգեստներ ,
 Ընծայ մատոյց Նուարդ տիկնոջ , և այլ անղիւտ գոհարներ ,
 Անդամանդեայ իւր զրրահներ բերեց հազցուց Նուարդին ,
 Քրտակներով ոսկի արծաթ թափեց նորա առաջին :


Ապա ասաց՝ որ դարպասի պահարանքը ցուցանեն ,
 Մըտաւ ամեն մէկ ծակուծուկ , մառանք , մըթերք հրնաշէն ,
 Տնտղեց , տեսաւ և իմացաւ՝ ուր է պահած նետ Հայկայ ,
 Գարձաւ ուրախ մտաւ գահլիճ ուր կզբօսնոյր միշտ Արայ :

Հրաման առեց Շամիրամը՝ որ գան իւրեան երգարանք .
 Հնչեցին երգք , նուագարանք , սըրինք՝ տաւիղ քաղցրաձայնք .
 Նորոզվեցաւ ուսել խրմել , զինին բղխեց տիկերէն ,
 Հայք , ասորիք միօրինակ ուրախ էին սրտերէն :

Երբ որ հասաւ կէս գիշերը Շամիրամ սուտ քրնեցաւ ,
 Նոյնպէս ամենք էլ պառկեցան , քունն ամեն տեղ բռնացաւ ,
 Շամիրամ իւր նաժիշաներուն ձեռամբ զըտաւ հրնարը ,
 Որ գողացաւ Հայկայ նետը , և գրրեց իւր սընարը :

* Որքան կեղծասորութիւն և շողոթութեան կ'զօրէն արտաստասոր ,
 այնքան անախարհութիւնն կ'ճարնէ՝ ի ներքոստար , Հայոց մէջ անախարհութիւնն
 ժարածգահան լեւրութիւնն է , իսկ լեւնասեաց յեւթն կեղծասորութիւնն պա-
 րասարտիան զէն :

Ապա հանդիստ տուեց անձին, մինչև 'ի լոյս քրնեցաւ,
 Առաւօտուն զուաթաղին 'ի ննջմանէ զարթեցաւ.
 Իւր աւարը լաւ խրնամով իւր զարդուց մէջ պարտակեց,
 Եւ միամիտ լուրջ և ուրախ այցելութիւն ըսպասեց:



ԵՐԳ ՓԷ

ՅԱՓՇՏԱԿՈՒԹԻՒՆ ՆԵՏԻՆ ՀԱՅԿԱՅ՝

Արայ և Նուարդ մտան սենեակ և բարի լոյս ասացին ,
 Երբ դշխոյին տեսան զուարթ , և ողջոյնը առեցին ,
 Փոքր ինչ զրոյց անելէն յետ՝ Շամիրամ ետ սլատասխան ,
 Որ երբ կուտեն նախաճաշիկ , դէպ իւր բանակ ճամբայ տան :

Իսկոյն եկան աւազանին՝ ամենայն ինչ կարգեցին ,
 Զօրապետքն իւրեանց զօրքը կաճառ կաճառ շարեցին .
 Արբ և կանայք , ծերք և սղայք , երիտասարդ և կոյսը ,
 Տըներէն դէպ դուրս վազեցին որ տեսնեն այն հանդէսը :

Նախաճաշիկն վայելեցին , խսկոյն վսեմ՝ այն դշխոյն ,
 Փաթաթվեցաւ Նուարդ տիկնոջ , հրաժարական ետ ողջոյն .
 Ելաւ ուրախ դարպասէն դուրս , բերին իւրեան նրժոյգ ձին ,
 Հեծաւ ձիոյն հսկայի պէս , և գնաց հետ Արային :

* Զարմանալի է՝ որ ոչ ոք չտանկցաւ կապիւժ դասաւճանոսիւնն :

Հարաւային դռնէն ելան, դնում էին մէջ դաշտի,
Արայի հետ ուղեկից են հաղարաւոր այրուծի:
Ճանապարհին ասաց դշտոյ. Արայ՝ դու ինձ արա՛ կին,
Ես ինչպէս քոյր կը պահպանեմ քո սիրական Նուարդին:

Մի թողուր որ մուսանդամ մէջերս սուր, հուր խաղան,
Ամեն անգամ չի յաջողիր, ձախորդ դիպուածք էլ շատ կան,
Քեզ կենախոյզ նախանձընդդէմք բիւրաւոր քաջք կան՝ Արայ
Քո փրկութեան չունիմ հընար, ես մէկ հատ եմ, բիւր՝ նոքա:

Ես քո սիրոյն չեմ դիմանում, քեզմէն ձեռք չեմ վեր առնիր,
Կերթամ բանակ, խնայն դեսպան կուղարկեմ քեզ Արմաւիր,
Լաւ է քեզ որ ունենաս ինձ և Նուարդին երկու կին,
Քան թէ առոյգ այդ հասակաւ թաղվիս խոնար ՚ի դետին:

Արայ՝ ինքդ քեզ մեղկըցիր, այս տեղ սխտի բաժանվինք,
Միւս անգամ ճակատամարտ սուր ՚ի ձեռին հանդիպինք,
Այն տեղ չիլնիր էլ մեզ խօսիլ, այս տեղ կտրենք մեր խօսքը,
Մի հասցընէր բանը այն տեղ, որ մերկանան մեր սուրբը:

Արայ միայն լուռ դընում էր. բայց բանակը երբ տեսաւ,
Քաշեց ձիու դանգանաւանդ, և այն տեղը կանգնեցաւ,
Ասաց՝ դշտոյ՝ բարեաւ երթաս, ես կը դառնամ այս տեղէն,
Ահա դալիս են ընդ առաջ քեզ ասորիք բանակէն:

Համիրամն իւր ստրիօք և նաժշտօք հեռացաւ,
Նորա վըտառ թիկնապահաց բաց դրօշուք մօտեցաւ.
Արայ տեսաւ ինչպէս ուրախ իւրեանց տիկնոջ ընկալան,
Գարձոյց երեսն և խնդաղին դարձաւ քաղաք պարկեշան այն:

Երբ դրանորեարք ժողովեցան՝ պատմեց նոցա բոլորին,
Ամենայն ինչ որ այն ճանփին խօսել էին առանձին,
Ծերբըն դարձեալ միաբերան առաջվան պէս խօսեցան,
Եւ աղղին մէջ բազմակնութիւն մուծանել ո՛չ հաճեցան:

Բայց երբ Նուարդ լսեց ասոնք՝ սկսաւ լալ, արտասուել,
եւ Արային քաղցր լեզուաւ ողորբել և աղերսել,
Որ նա յանձն առնուլ լինել երկոցունց էլ ամուսին,*
եւ չթողու այն պատճառաւ որ մարտ բացվի վերստին:

Համիրամը ոչ ուշացուց դեսպան զրկել Արմաւիր:
Գեսպան եկաւ, կանգնեց ատեան, ասաց. լսէ թող երկիր.
Գշխոյն և զօրքն միաբերան այս են ուղում Արայէն,
կամ գշխոյին փեսայանալ, կամ մարտ դուրս գալ քաղաքէն:

Ծերքրն տուին պատասխանի, վաղն առաւօտ դաշտերը,
Իւրեանց զօրքով մարտիկներով կու լքցրնեն հայերը.
Այլ Արային փեսայանալ գշխոյին չէ կարելի,
Երկու կանանց մէկ այր լինել կարէ միայն ասորի:

Առաւօտը վաղ զարթեցաւ Արայ քրնէն խնդաղին,
վարասպանակք հազաւ իսպառ, սաղաւարտը եղ գլխին,
Սուրը կախեց ձախ ազդերէն, վահան ահեակ ձեռումը,
Երկայն նիզակ լայնասրլաք բրունել էր աջ բազկումը:

Նուարդ կանգնած էր առջևը՝ բռնած ձեռքէն Աարգոսի,
Արայ ուզեց որ համբուրէ երես միակ զաւակի.
Նուարդ ասաց. Արայ՝ զընում ես 'ի մարտ՝ ինձ ում թողնում,
Ինձ տարածամ այրիացնում, սրբան անհայր որբացնում.

Գու չըզիտես որ բաց 'ի քէն ես օգնական մարդ շունիմ.
Հայրս, մայրս՝ հողի մէջ են, չեն մօտիկ և եղբարքն իմ,
Իմ հայր, իմ մայր դու ինքն էիր, քեզմով էի ես կենդան.
Գու էլ հիմի ինձ թողնում ես, ինձ մատնում ես կեր մահուան:

* Եթէ լսէր Արայ աղաւանաց Նոստրիցայ, այժմ Հայոց անուն ևս չէր
լինէր:

— Թէ ես քեզ մօտ մնամ նստած՝ հայոց քաջաց ո՞վ հովուէ ,
 Զօրք կու մնան անառաջնորդ , և թշնամին կու վանէ .
 Բայց եթէ ես լինիմ մէջը՝ դունդերս կու զօրանան ,
 Կու մարտնչին դէմ թշնամեաց և երկիւղ կու մոռանան :

— Գիտե՛ս՝ Արայ՝ որ բիւրաւոր՝ դէմ քո կենաց դարանք կան ,
 Շամիրամայ առիւծները և Զրադաշտ դաւաճան .^{*}
 Գոքա ամենք քեզ են ուզում միայն սրբով տապալել ,
 Որ թաղուհին չը կարենայ իւր բաղձանքին հասանել :

Թէ Մասեաց Քաջք ինձ կու օգնեն , ո՛չ Զրադաշտ , ոչ այլ ոք ,
 Կարէ ինձ մէկ վընաս գործել , և յաղթութիւն մէկ նորոգ՝
 Զօրէ ազգին տալ փրկութիւն , քեզ էլ կրկին կը տեսնեմ ,
 Եւ որդեկիս ուրախութեամբ քո դրկաց մէջ կը պագնեմ :

— Թո՛ղ երկինք մեզ գըթած լինին , Արայ ինչպէս ասում ես .
 Բայց իմ հողին ինձ ասում է՝ այս է որ այժմ տեսնում ես ,
 Միւսանգամ եթէ տեսնես արիւնշաղախ մարմինը ,
 Պատգարակաւ քեզ կու բերեն դորա անշունչ դիակը :

Քեզ կու մնայ դառը կսկիծ , անմխիթար գերութեան ,
 Որդիդ կ'երթայ Ասորեստան ծառայ կ'ընի խեղճութեան ,
 Պայծառ դահլըդ կը կործանվի , անունդ էլ կու մոռացվի ,
 Հայաստանի աշխարհի մէջ որ այնուհետ չը յիշվի :


Բայց թէ կենաս դու այսօր աստ և պատերազմ չելանես ,
 Ես ինքն կ'երթամ դշխոյի մօտ , որ հաշտութիւն տայ նա մեզ .
 Գու դշխոյի կամքը պիտի կատարես ինձ զոհելով ,
 Ես եմ զոհը , ես յօժար եմ՝ որ քեզ փրկեմ իմ գլխով :

^{*} Կանայի բնազդոս-իւեամբ շուր էր հասկացել 'սուարդ' իւր ուստի է
 վրանքն :

— Ինձ ի՞նչ կ'ասեն ասքանազեան օրիորդք և աղջրկուներ ,
 Թէ Արամի որդին երկեալ՝ երբ պատեցին մեզ երկուներ .
 Մէկ օր հայրս չէ թաք կացել , միշտ թշնամեաց առջևն էր ,
 Ինձ Համասիխու չքնաղ մայրս՝ երկիւղ սրաի չէ տուեր :

— Ապա ինձ ի՞նչ սուգ պիտի լան ասքանազեան աղջրկուներ ,
 երբ քեզ բերեն մեռած առջևս լալով Մասեաց զաւակուներ .
 երբ քեզ վերայ կականելով ընկնիմ՝ անշունչ դըլորվիմ ,
 Յետին շունչս անշունչ մարմնոյդ խունկ ծխելով նուազիմ :

— Ինչպէս կամք է ճակատադրի՝ այնպէս պիտի կատարվի .
 Թէ ինձ մահ է այս մարտի մէջ , անհնար է որ փոխվի .
 Գու քեզ պահէ չքնաղ Նուարդ , պահպանէ իմ Աարդոսին ,
 Փողը փրչեց զօրաց մէջը , պիտի ելնեմ առաջին :



ԵՐԳ ԺԸ

ՎԵՐՋԻՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ ԵՒ ՄԱՀ ԱՐԱՅԻ

Արեղակն ծայրակարմիր լերանց յեանէն ծաղեցաւ ,
 Չիւնադազաթ բարձրաւանդակ դիտակներում երեցաւ .
 Այն գեղեցիկ փայլատակունք ընկան վերայ շէնքերու ,
 Բանակների մէջ երեցան ճրրազալոյցք կրակներու :

Փչեց հիւսիս Արագածէն արծաթափայլ ամպիկներ ,
 Մասիս նորէն ոսկեզօծեց շողիներով մազն ու հեր .
 Առաւօտեան նախողջոյնը առին տուին սարերը ,
 Այս նշան էր Հայոց զօրաց որ մերկացնեն սուրերը :

Հայկ-Արամի դրօշները՝ Մասիսք Վիշապք բացվեցան ,
 Արամազնեայ երիտասարդք իւրեանց տեղաց շարժեցան .
 Արայ առաջ ամենեցուն թիկնապահօք էր պընում ,
 Մտքով կարդոս ու Նուարդին էր արտասուօք ողջունում :

Բայց Նուարդը շատ հեռու չէր , թիկնապահաց ՚ի իրուան ,
 կարմիր ձիով պատանեկի առել էր նոր կերպարան .
 Նախամարտիկ նահատակք երբ մէկ մէկի դէմ վաղեցան ,
 Սարսափելի սրտմտութեամբ արիւն թափել ըսկըսան :

* Արամերէի վերջի հայտնածների ձև է այս կարծիք ձեռք պատանեկի
 պատմութիւններն առանդա՞ծ : Հայ. Տարի .

Աղեղնաւորք հեռու կեցած նշաններով զարնում են ,
 Պարսաւորքն էլ բարձր տեղաց քար ու վիրդը թափում են ,
 Վիրաւորք շատ են գլորվում , կարեւէր խոցք մեռանում ,
 Աներկիւղք միշտ յառաջ խաղում , և քաջք անդուլ խիզախում :

Աղաղակի շրոինդք շաչիւնք բարձրանում են մինչ երկինք .
 Գրրընդիւնքն և դոփիւնքըն փրովում հովիտք և լերինք .
 Նիզակները ճօճեցնում են , և աղեղունք ճարձատում ,
 Մահը կատղած ճակատու մէջ անսանձ դափր է հարկանում :

Ո՛չ թէ մէնակ սպիտակ ձիւն կարմիր արեամբ է ներկած ,
 Այլ և վըտակք ձիւնի տակէն են անցանում խոխոջած .
 Գիակունքը բլրաց նրման ամենայն տեղ բարդած կան ,
 Հայք ասորիք միմեանց վերայ խոց վիրաւոր ընկած կան :

Քանի արևն բարձրանում է՝ այնքան մարան է սաստկանում ,
 Արայ՝ կրրակ էր բովանդակ՝ եղեգնաց մէջ ճարակում .
 Ո՛ր կողմ դառնում էր իւր սուտեր՝ այն կողմ վազում էր մահը ,
 Իւր առջևէն արծուեաց պէս՝ թռչում երկիւղ և ահը :

Համիրամբ՝ առաջն եկաւ՝ պատգարակով էր գալիս ,
 Ինչի՛ , Արայ՝ այսքան արիւն ՚ի զուր թափել ես տալիս ,
 Կամ ինչի՛ չես քեզ խնայում , չես խնայում Նուարդին :
 Թո՛ղ նա լինի քո թաղուհի , ես կըլինիմ աղախին :

Արի՛ , Արայ՝ իմ սիրական՝ սուրբդ գարձուր ՚ի պատեան .
 Ես ասորեաց յես կը տանեմ , դու քաջերուդ հայկազեան .
 Գաշն դընենք խաղաղութեան , դու իմ սէրը պըսակէ ,
 Համ Ասորուոց լեր միապետ , համ քո Հայոց ազգ հովուէ :

Մի՛թէ այսքան անարդ եմ ես , որ քո սիրոյն չեմ արժան ,
 Լաւ մըտածէ թէ քո վերջինք ինչպէս կըլնին՝ Արայ ջան ,
 Յօժար եմ որ այս մարտի մէջ ես մեռանիմ ու հանգչիմ ,
 Բայց վախում եմ՝ որ քո կենաց մէկ վատ պատճառ չըլինիմ :

Հայկայ նետը՝ չքնաղ Արայ՝ իմացիր որ ինձ մօտ է,*
 քո բաժինը կամ գերութիւն կամ տարածամ շար մահ,
 Ա՛խ, սիրական՝ կոտորէ սիրտդ, թո՛ղ այս շարը անցանէ,
 Ինձ շնորհ արա՛, քեզ մեղկըցի՛ր, քո Նուարդին խնայէ։

—Թէ վրտանդ ինձ պիտի հասնի՝ ես չեմ կարող դարձնել,
 Ինձ արժան է միայն շարեաց ու փորձանաց դէմ դրնել,
 Մահը պատրաստ կայ ամեն տեղ, նորա ուժն է մէկ վայրկեան,
 Եկաւ զարկեց ու կործանեց, աչքըդ խրփէ յաւիտեան։

Հօրս ու մօրս մօտը կ'երթամ՝ ուր ո՛չ վիշտ, ցաւ կը հասնի,
 Ախուրեան գետն երբ որ անցնիմ՝ կըլնիմ քաջաց ՚ի խրմբի.
 Մըշտագարուն զուարճութեան և անըստուեր խնդութեան,
 Իմ նախնիքս կան այն հովտում՝ անտիրական ցնծութեան։

—Քո նախնեաց գիրկ դընա՛, Արայ՝ հարիւր յիսուն տարեկան,
 Քառասնամեայ ծաղկեալ հասակդ թո՛ղ չըտեսնէ Ախուրեան,
 Հայրդ, մայրդ շատ չեն ցնծար՝ երբ որ տեսնեն թէ մէկ կին,
 Գառն ողբով է աշխարում արիւնաշաղախ քո մարմին։†

Արայ ձիուն առաջ քրշեց՝, մըտաւ խրուան ասորեաց,
 Համիրամի կարկաչիւնը դեռ լսվում էր հեռուանց.
 Զըրադաշտը իւր ըսպայիւք պտրտում էր Արային,
 Նորա յետնէն անանջատ էր կարմիր ձիով պատանին։

Ամեն կողմանց նետ ու նիզակ վէր են դալիս տարափով,
 Արայ անձին պաշտպանում էր աներկեան՝ ասպարով,
 Աջ ու ահեակ իւր սուսերաւ դիակունքն գըլորում,
 Քաջերի հետ գեղարդ սըրով մարտնչում ու մաքառում։

* Եթէ Համիրամ ցոյց որայր Հայկայ նետը՝ արդեօք Արայ կ'համոզվէր։
 † Այս հիշ գուշակութեան էր իւր սգաարութեան և ո՛չ Նուարդին։

Յանկարծ հասաւ Ջրադաշտը և յետևէն յարձակեց,
 Սընակուշտին իւր գեղարդով մէկ կարեվեր խոց դըրեց,
 Արայ արեամբ շողախվեցաւ, աչաց լոյսը նուազեց,
 Կարմիր ձիով պատանուոյ գիրկ հողին զուարթ աւանդեց:

Չըկարացին քաջ թիկնապահք դիակը տուն հասցընել,
 Ասորիքը անշունչ մարմինն ջանք դըրեցին ձեռք անցնել,
 Գընաց համբաւն ճակատու մէջ՝ թէ Արային ըսպանին,
 Հայքը թողին պատերազմը, լալով դարձան ցաւազին:

Նուարդ տեսաւ այն դառն մահ, ընկաւ դետին շնչասպառ,
 Քո հայր կարդոս մընաց որբուկ յետ ծնողաց մինչ իսպառ,
 Շամիրամը տեսաւ աչօք արիւնաներկ դիակքը,*
 Աչէն լոյսը պակասեցաւ, դլխէն դընաց իւր խելքը:


Փողք հնչեցին որ վերջանայ մահաշշուկ այն հարուած,
 Հայք կորակոր դարձան քաղաք, նոցա կուտրեց այս գիպուած.
 Կարդոս դերի էր գնացել, տեսաւ ինչպէս Շամիրամ,
 Յուսահատուած դիշեր ցորեկ մահ էր կանչում յարածամ:

Բայց վերջապէս Հայաստանին տիրող կարդեց Կարդոսին,
 Ինքն առաւ արիւնշաղախն դիակ չքնաղ Արային,
 Ջրադաշտ միշտ խոտտանում էր նըրան կեանք տալ դիւթաւթեամբ,
 Անտի կեանքէն յետս կոչել՝ յարուցանել ողջութեամբ:

Ունայն անցան ամեն ճրդունք և Շամիրամ շատ ողբաց,
 Ամենայն օր սուղ և կոծ էր, թաղուած էր մէջ արտասուաց.
 Հայաստանը աչքէն ընկաւ, չը կայր Արայն գեղեցիկ,
 Ասորեստան վերադարձաւ՝ սրտին թախիծ վիշտ սասախիկ:

* Կենը ճաշկեց Արևի լոյսը՝ ըստ վաղնջաց գուշակութեան (Արատերգ
 39 և 295:)

Այսպէս իմ մօր առաջին սէր իւր կոկոնում թառամեց,
 Այն սիրալիր սիրտն ու հոգին ապակեոյ պէս փշրվեց.
 Չըկարացին երիտասարդք նորա սիրտը գըրաւել,
 Մեռաւ Արայ, մերժուեցան Համիրամէն առաւել:



ԵՐԳ ԺԹ

ՀՐԱԻԷՐ ԳՆՐԿԷԹԱՅ ՅԱՐԳՈՒՆԻՍ

Տեսա՛ր չքնաղ Անուշավան՝ իմ գեռաւուրց սիրուն մայր ,
 Քսան և ութ ամի կենաց մնացեալ այրի և անայր ,
 Մասնուեցաւ իւրեան խաբուած և անգոսնած կիրքերուն ,
 Ինքն իրան՝ էր բարկացած , նեղացած էր իւր սիրոյն :

Հուսկ ուրեմն կամենալով սրտին փոքր ինչ զիւր առնել ,
 Ու Արայի սիրոյն անձուկ հոգւոյ մէջէն հեռացնել ,
 Ծածուկ մէկին տուեց սիրտը , և սկսեց սիրելու ,
 Կամենալով որ նա զաղանի դուն զորձէ այն սլահելու :

Բայց երբ տեսաւ որ ծածուկը յայտնի եղաւ ամենուն ,
 Իւր ապերախտ սիրականին մասնեց գետոյ խորերուն .
 Որ անհամեստ լեզու բերան փակեն ալիք Եփրատի ,
 Տանին անգարձ յորձանքները զաղանի խորհուրդ սև սրտի :

Յետոյ այլ որ եղև նորա ծածուկ սիրոյն առարկայ ,
 Շատ չըտեց այս շողկապն էլ , մէկն էլ չեղաւ յարակայ ,
 Տարին քանիսն էին զընում Եփրատայ խոր հուները ,
 Համիրամի սրտի մէջ նոր էր վառում սէր իւր հուրը :

Քանի անգամ եկաւ շրջեց ծայրէ 'ի ծայր Հայաստան ,
 Այն ժամանակ քո հայր Կարդոս կոչուեց Արայ Արայեան .
 Աղթամարայ ծովին ափը մէկ գեղ շինեց վիմարդի .
 Կարդոսի հետ սէր վայելեց յայս գաստակերտ քարափի :

Յետոյ կրկին 'ի Բարիլոն դարձաւ հանդիլ 'ի խոնջմանց ,
 Բարձրադիտակ աշտարակօք արաւ քաղաքն դերասպանձ ,
 Կախաղանեայ պարտէզ տնկեց , շինեց կերտուածք հրաշալիք ,
 Ընկել էին արդէն աչքէն հին տարփածուք պատանիք :

Մահուն մէկ ամ էր մնացել , Ջրադաշտին մատն եղաւ ,
 Քառասուն ամ այս կախարդ զուր՝ մօրս յետեէն ման եկաւ .
 Վերջապէս մայրս իւր ատերւոյն յանձնեց ցաւած իւր սիրար ,
 Ջրադաշտը խոհեմութեամբ տնօրինեց խորհուրդը :*

Այս շողկապէն ես եմ ծընած պտուղ սիրոյն պառաւի .
 Մայրն իմ սիրեց ծընողբար , և պահեց զիս կենդանի ,
 Իւր մօր անուամբ յորջորջեց զիս , ժառանգ կարգեց իւր գանձուց ,
 Հաւատարիմ իւր մեծուհեայ ձեռօք սրնոյց զարգացոյց :

Երբ որ Նինուաս իւր մօր ընդդէմ ապստամբեց , սուր հանեց ,
 Շամիրամին , Ջրադաշտին՝ դէպ Հայաստան փախցրրեց ,
 Կարգոս առաւ Հայոց զօրքը և զընաց դէմ Նինուասի ,
 Շամիրամը , Ջրադաշտը , Կարգոս անկան 'ի մարտի :

Ես միամեայ որբ մնացի իմ դայեկաց ձեռքումը .
 Նինուաս արքայ զիս ատուժ էր , փուշ եմ նորա աչքումը .
 Հնդետասան ամաց հասայ , մէկ պատանի մեծատուն ,
 Սիրով վառուած զիս հրաւիրեց յօժարիլ յիւր հարսնութիւն :

Ծնողացս անբաւ հարստութիւն , անթիւ , անհուն գանձերը ,
 Չեռքս առի արիաբար , ազգն էր պահել մթերը .
 Կարճ օրվան էր իմ հարսնութիւն , շուտով այրի մնացի ,
 Եւ այսօր քեզ հանդիպեցայ , և ամեն ինչ պատմեցի :

* Նինուասի դարձանակալութեանը Շամիրամին սպիպեց որ Ջրադաշտի
 օգնութեան կարօտի :

Անուշավան՝ որ մինչև ցարդ լսում էր այս պատմութեան ,
 Ջարմանալով ասաց . այսպէս չէի լրսած Գերկէթ ջան .
 Ես Արայի մահու դէպքը համարեա՛ նոր սովրեցայ ,
 Իրաւ պարկեշտ և ողջախոհ լինել նորա իմացայ :

Յետոյ նայեց պատուհանէն և հասկացուց Գերկէթին ,
 Որ արեղակն մերձ է ՚ի մուտս , ժամանակ է իւր դարձին ,
 Ասաց՝ զիս արդ կու պարտեն արքունական դարպասում ,
 Առաւօտէն մինչ երեկոյ չեմ երեցած իմ տեղում :

Գերկէթ ասաց . Սօսանուէր՝ միթէ այս տեղ քեզ նեղ է ,
 Կամ իմ խօսքն քեզ ձանձրութիւն տուեց , ասա՛ դանկատէ ,
 Կ՛ուտենք մէկտեղ երիկնահաց , կու հասանի զիշերը ,
 Ի միասին հանգիստ կ՛առնունք , կու պսակենք մեր սէրը :

Գեռ չէր Գերկէթ խօսքն աւարտել՝ ներս մտաւ մէկ անղախին ,
 Ասաց տիկնոջ՝ թէ մեծ ժողովք կայ և քեզ էլ կոչեցին :
 Գերկէթ ասաց . Ա՛նուշավան՝ ես շատ շուտով կը դառնամ ,
 Երեի թէ մեծ դիպուած կայ , կ՛երթամ բոլոր կ՛իմանամ :

Ասաց , առաւ իւր ծածկոյթը , որ շուտ երթայ ասպարան ,
 Ծառաները պատգարակաւ նրբան բարձին և տարան .
 Հազիւ թէ մէկ ժամ էր անցել , ահա Գերկէթ յետ դարձաւ ,
 Պատգարակէն մէկ դաւազան հանեց , ձեռին ներս մտաւ :

Այս ժողովը մեզ համար էր՝ ասաց Գերկէթ խնդալով ,
 Հայկայ նետը յետ գողացայ , ահա պատած է ձորձով .
 Մէկ հսկայ է եկել Նինուէ , և կոչում է ախոյեան ,
 Էզուց կ՛երթաս նորա դիմաց և կը դնես ՚ի կործան :

* Երևի թէ Սարիտ ևս այնտե՛ս գիտէին նորա յարքը , որտե՛ն և հայտը :

Եկան նաժիշտք և աղախնայք, դրրին սեղան ընթրելու,
 Նստան Գերկէթ, Անուշավան երկոքին հաց ուտելու,
 Բայց ինչպէս ճաշ, նոյնպէս ընթրիքն՝ անցուցին յոյժ զուարճալի,
 Չէին ուտում մէկ կըտոր հաց՝ առանց սիրոյ համբուրի:

Երբ որ կերան և յաղեցան և դինիով զուարթացան,
 Ապա ասաց տանուտէրը, այժմ հանդէսնք փեսայ ջան,
 Առաւօտէն մինչ երեկոյ զուր վշտացաւ մեր սէրը,
 Հուտով մտնենք մեր պաղպաջունք, որ մեզ չայրէ մեր սէրը:

Ինքն հանեց իւր զգեստը՝ մինչ ՚ի շապիկ մերկացաւ,
 Անուշավան նոյնպէս հանուեց, և առազաստ պառկեցաւ,
 Աղախինը ճրրագն առաւ, ծածկեց գուռն սենեկի,
 Անուշավան Գերկէթ հարսին քնքոյշ սեղմեց ՚ի դրկի:

Գիշերն անցաւ արագապէս, սէրն արաւ այն կարճառօտ,
 Թէպէտ սիրոյ ծովումն էին, բայց թուեցաւ համառօտ,
 Առաւօտուն վաղ զարթեցան. Գերկէթ՝ փեսին զարգարեց,
 Առաջակայ մենամարտին քաջ ախոյեան պատրաստեց:

Անուշավան իւր սիրական հարսի գրկում նազելով,
 Նոր ոյժ զպաց իւր անձին մէջ այս նոր սիրով վառվելով,
 Բռնեց հարսի քնքոյշ ձեռնէն և համբուրեց սիրով լի,
 Ասաց, Գերկէթ ինձ զօրացուր՝ որ ես յաղթեմ ՚ի մարտի:

Գերկէթ ասաց, իմ սէրը քեզ պիտի դառնայ մէկ նոր զէն,
 Պիտի յաղթես ախոյենիդ, ձրգես անսուր և անզէն,
 Քեզ համար լայն ճանփայ բանաս գէպ ՚ի Հայոց աշխարհը,
 Քեզ յաղթութեան առհաւատչեայ նախնւոյդ Հայկայ է նետը:

— Ես այս նետը այժմ ձեռքս բազմութեան մէջ չեմ առնիր,
 Գուր քո կշտին պատգարակում նստած տեղի պահպանիր.
 Նորա ոյժը կը հասնի ինձ, որովհետև արդ իմն ես,
 Եւ այն ձեռիդ որ ունենաս, իմ աղաղաւ կը պահես:

Նախաճաշիկ արին երկուսն . Անուշաւան ձի ուղեց ,
 Իւր սօս նրժոյգ . Հանել տեղէն Գերկէթ տիկին Հրամայեց .
 Ինքն նստաւ սպտղարակում , ծառայք բարձին ուսերը ,
 Եւ գրնացին զէս արքունիք՝ ուր խմել էր Հանդէսը :



ԵՐԳ Ի

ՄԵՆԱՄԱՐՏ ԵՒ ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ԱՆՈՒՇԱՎԱՆՍԵ

Հնչում էին փողք և նուազք թաղաւորի դրրանը ,
 Ծովացրել էր լայն որդոստայն արանց կանանց խուանը .
 Հաղարաւոր տիկնայք կային սլատդարակօք հաւաքված ,
 Գեղեցկութիւն և մանկութիւն փարթամութեամբ զարդարված :

Թաղաւորը դերդաստանով նստած էր լայն տանիքը ,
 Որոց վերայ ծածանէին արքունական դրօշքը .
 Վրանաձև ծածկոյթք սլարդած արևէն են հովանի ,
 Զբօսնում են անդ արքունիք՝ օրիորդք և կանանի :

Արքունական սպասաւորք ձեռին մտրակ խարազան ,
 Որդոստայի մէջ բազմութեան տեղ բացարին բաւական .
 Քար կամ խրճեր ոտքի տակէն մէկ մէկ ձեռքով քաղեցին ,
 Բոլորաձև ծիր բունեցին ակմբելոց 'ի զնին :

Յանկարծ եկաւ և կանդնեցաւ այն բազմամարդ հանդիսին ,
 Մէկ հատ հսկայ յաղթահասակ կաշեայ դիմակ երեսին .
 Գլխին ունէր մեծ պղնձի երկաթապատ սաղաւարտ ,
 Որ արծնած էր բոլորովին , և կատարքն էր փետրազարդ :

* Տանեաց շարժական ցաղաւարի յողէրը հաստատելոց համար պեղի+ կան :

Հազին ունէր երկաթակուռ սեւադեղած վառապանք ,
 Ազդերք և ոտք զրահազարդ , ձեռաց վերայ կան բազարանք ,
 Տախտակ պղինձ կրծոց վերայ , լանջապանակ առջևէն ,
 Նոյնօրինակ կշտապանակ թիկնոց երկաթ յետևէն :

Սուր երկսայրի կողէն կախած՝ պողովատիկ յեսանած ,
 Վահան կաշեայ քեմխտապատ երկաթապատ բեւուած .
 Գեղարդ ծանր աջու ձեռին , ճօճացնելով կը շրջէր ,
 Եւ ախոյեան ՚ի մենամարտ ստէպ ստէպ կը կանչէր :

Սասան սասան բազմութեան մէջ թաք են կենում քաջերը ,
 Ինչպէս ճնճղուկք երբ տեսնում են պասկուճների ճանկերը ,
 Առիւծի պէս ման է գալիս այս անհետեթ Վիթխարին ,
 Ծակ են պտրում որ պահոտվին երկչոտ վախկոտ ասորին :

Թաղաւորը հրրամայեց և կանգնեցաւ մունետիկ ,
 Բարձր ձայնով քարոզ կարդաց . ահանջ դրոէք՝ ո՛վ մարդիկ ,
 Արքունական հրաման է , ո՛վ որ յաղթէ այս քաջին ,
 Պարգև կ'առնու թաղաւորէն դահ աւաղաց առաջին :

Թաղաւորը կու տայ իւր գուստր այն յաղթողին կնութեան ,
 Եւ դշխոյին բաժին պրւոյզ մինչև ՚ի կէս տէրութեան .
 Գանձ և ոսկի , գոհար ախունք , այլ ճոխութիւն անհամար ,
 Ծառայք , նաժիշտք , չքնաղ կանայք և օրիորդք սպասահար :

Սպայք , զինուորք ծունկ են չոքում՝ որ նոցա մարդ չտեսնէ ,
 Մեծամեծքն հեռանում են՝ որ հսկայն մարտ չձայնէ .
 Ամենեքեան գիրուդող են , ասում էին այս նոր Բե՛լ՝
 Մեր օրերում որ վիրապէն է շղթայէն դուրս փախել :

Երբ որ այսպէս ամենեքեան կային սարսած սասանած ,
 Գերկէթ գնաց Նինուստի դէմ պատղարակում իւր բազմած .
 Ասաց . արքայ՝ յառիտեան կեաց , ես ունիմ մէկ ախոյեան ,
 Որ կարող է այս հսկային յաղթել , դընել ՚ի կործան :

Նինուաս կանչեց, հապա քուրիկ՝ ո՞ր օրվան ես սպասում,
Թող ելանէ քո ախոյեան, խօ լավեցաւ իմ խոստում,
Մինչև 'ի կէս արքայութեանս, և դատրերէս որն ընտրէ,
Յաղթանակը անօրինակ, մրցանակը այսպէս է:

Այն ժամանակ Գերկէթ կանչեց. Անուշավան ե՛լ հանդէս,
Քո քաջութեան քաջքն Մասեաց բացին փառաց ասպարէս.
Յոյց տուր այսօր քո երակաց բարեսօհմիկ արիւնը,
Գլխոյդ բոլոր սրակ կաղմէ կանանչ սարդ ու շուշանը:

Անուշավան պատասխանեց. ինձ զօրավիդ՝ Գերկէթ ջան,
Ի՞նչ ես տալիս այս ժամուս մէջ, որ բաղուկքս զօրանան.
Թէ մէկ համբոյր նուիրէիր՝ քաջալերուած կ'երթայի,
Բայց ի՞նչ անեմ այս բաղմութիւն համբիր հազար աչք ունի:*

Գերկէթ ասաց. հազար համբոյր և բիւր զգուանք իմ զրկաց,
Քեզ կ'սպասեն՝ Սօսանուէր՝ ձօն իմ շրթանց և լանջաց,
Զօրավիդ է քեզ իմ սէրը և իմ սիրած Հայաստան,
Նեան Հայկայ յիմում ձեռին՝ առհաւատչեաց յաղթութեան:

Խրախուսեց Անուշավան, ելաւ քաջին յանդիման,
Ինչպէս ճնճղուկ փոքրամարմին հզօր արծուոյն ախոյեան,
Նա աշտարակ է երկնաբերձ, սա փոքրիկ հիւղ թիւրաթեք,
Նա կաղնի է հատուտարմատ, սա եղէգն է գիւրարեկ:

Ամենեքեան զարմացել են անհաւատար այս մարտի:
Մէկը փիղ է սպառազէն, միւսը մրջիւն չքոտի.
Ահա՛ ի մի ումպ կուլ կուտայ պատանուոյն այս վիշապը,
Մէկ հարուածով կու վերջանայ ծիծաղաշարժ այս մարտը:

* Համբիր, որ է հարեար բիր, կամ թլիոն՝ ծնայել է Նախիջևանոց
Բարբառոց ձեռ:

Բայց՝ ո՛չ քացուեց սարսափելի ճակատամարտ այն տեղում,
 Անուշավան զհակառակորդն՝ ի մենամարտ էր կանչում.
 Սրտմտեցաւ սոսկավիթխարն և սկսեց սուր հանել,
 Անուշավան սրոյն դիմաց իւր ասպարով էր կանգնել:

Հսկայն քանի անդամ սրբով հայկազնէին դողացոյց,
 Անուշավան սրբոյն թափը վահան առաւ ու շիջոյց.
 Ապա այնքան մօտիկ գընաց՝ որ սուսերը հասանի,
 Ամենքեան զարհուրեցան թէ՛ ահա՛ կու մեռանի:

Այլ երբ հսկայն սուրը ձգեց անդձելի զրահից,
 Սուրը դիպաւ զըրահներուն, կտորվեցաւ մէջ տեղից,
 Մէկ աղաղակ վեր բարձրացաւ, հսկայն մնաց առանց թուր,
 Անուշավան՝ ի պատենէն հանեց ձգեց և իւր սուր:

Այնուհետև նոր խմբեցաւ մենամարտն ահաւոր,
 Հսկայն գեղարդն առաւ ձեռը, յարձակեցաւ զօրաւոր,
 Գեղարդի դէմ գեղարդ հանեց Անուշավան քաջաբար,
 Հարուածի դէմ հարուածները թօթափում էր անդադար:


Քանի հարուած որ դիպչում էր մէկզմ, կու վահանին,
 Գըրնդիւնը օդոյ մէջը ձայն էր հանում ահագին.
 Անուշավան հաստատ կանգնած էր և անշարժ իւր տեղում,
 Հսկայն պտոյտ էր գալիս միշտ ահեղ գեղարդն էլ ձեռում:

Գերկէթ կանգնեց պատդարակում՝ որ իւր փեսայն տեսանէ.
 Անուշավան աչքը ձգեց, ասաց. հարսն իմ՝ արդ ժամ է.
 Ես քո կամքը կը կատարեմ՝ որ նոր Բէլըս կը ընկնի,
 Իմ ոտքիս տակ կը կործանվի կամ մեռած կամ կենդանի:

* Մենամարտի +աղաղարժ+ և հրցակիւթ+ զինուոյ հաստատութեանը էր
 պատրաստէն:

Այս որ ասաց՝ իւր դեղարդով յարձակեցաւ սաստկապէս,
 Կրժապանակ հաստ տախտակին հարուած տուեց, շանթի պէս
 Խորտակեցաւ այն պղնձի երկաթակապ տախտակը,
 Գեղարդ հասաւ մինչև ՚ի լեարդ, արիւն ժայթքեց խոր վերքը:

Սասանեցաւ հզօր հսկայն, շրջապատը մութ կելսեց,
 Քարշեց դեղարդն Անուշավան, և լերդախառն դուրս կորդեց.
 Արիւն բղխեց խոր խոցուածէն, և լճացաւ գետնումը,
 Իւր արեան մէջ թաւալ անկաւ կարեմէր այն վիրապը:



ԵՐԳ ԻԱ

ՏԱՂԹԱՆԱԿ ԱՆՈՒՇԱՎԱՆԱՅ ԵՒ ԴՐԱՆՈՐԵՍԱՐԻ

Թագաւորը ծափ էր տալիս, այնքան ուրախ էր հոգւով,
 Բազմութիւնը ճիչ բարձրացնում, երկինք թնդում էր ձայնով,
 Ոմանք դիակն են վեր առնում՝ որ պարտակեն արիւնը,
 Ոմանք կոտրած սուրն են նայում՝ մեռած քաջի հին ղէնը:

Գերկէթ բռնեց փեսի ձեռնէն՝ տարաւ հանդէպ արքայի,
 Ասաց. արքայ՝ յաւիտեան կեաց՝ օա է փեսայն Գերկէթի.
 Գու քո գուտարն պիտի սայիր, գստերըդ տեղ քոյրդ է,
 Տեսնենք ինչ է քո պարզեր, պաշտատականն իմ ինչ է:

Թագաւորը փաղաքշելով ասաց, պարզե իմ՝ սիրուն՝
 է իմ առատ գանձըն ոսկւոյ և իմ սրտի գոհութիւն.
 Անուշափան քո նոր փեսայն՝ է փեսայ տան արքայի,
 Բարեբաստիկ և երջանիկ նորա կեանքը կը լինի:

Իմ առաջին աւագաց մէջ այսուհետե է տեղը,
 Երկրորդական բարձիս վերայ փառազարգած իւր գահը.
 Արքայութեան կիսոյ վերայ հրրամայող տիրական,
 Միջազետաց և Ասորոց ժառանգ քաջիկ քո փեսայն:

Ես ուրախ եմ՝ քոյր իմ Գերկէթ՝ որ այգալիսի այր ունիս ,
 Քաջ , գեղեցիկ և դեռաւուրց , յընտրութեան քաջ զըտանիս .
 Ես նորան ինձ որդի կ'անեմ , հաղորդակից սեղանոյ ,
 Օրը կ'անցնի ուրախութեամբ 'ի մէջ փառաց և պատուոյ :

Երբ թաղաւոր այս խօսում էր՝ նստած էր ինքն տանիքը ,
 Գերկէթ բազմած պատգարակում , Անուշավան նրժոյզը ,
 Թաղաւորի այս խօստմունքը ամենեքեան լսեցին ,
 Անուշավան և Գերկէթը ամենեցուն աչքն էին :

Արքայն ասաց , զընացէք այժմ , հանդստացէք ձեր տանը ,
 Երեկոյին արքունիքն է ուրախութեան խրախճանը .
 Գերկէթ փեսայդ պիտի այսօր իւր փառաց մէջ մըտանէ ,
 Իւր քաջութեանց արժանաւոր պատուոյ պսակ զըտանէ :

Երբ որ դարձաւ իւր ապարան Գերկէթ դշխոյն պանծաղին ,
 Գրկախառնած իւր փեսային համբուրում էր խնդաղին .
 — Անուշավան՝ այս համբոյրը քո քաջութեամբ ստացար ,
 Պարտական եմ քեզ բազում ինչ , ահա՛ սիրոյս պարտքդ առ :

Սօսանուէր , ամենայն ինչ մեր խորհուրդոյն օգնում է ,
 Այսօրվան զոհ յաջողութեան մեր առաջին սանդուղքն է ,
 Չէ՛ հարկաւոր այն հնարներ՝ որ մեր ձեռքն են՝ բաց թողնենք ,
 Մենք անձար չենք , մեր դանձն այսօր ուրախութեամբ գործ դնենք : *

Այս որ ասաց՝ ծառաներուն ժողովեց ու պատուիրեց ,
 Երթալ կոչել աւագորեարք՝ որոց որ ինքն անուանեց .
 Գնացին ծառայք , հրաւիրեցին . մեծամեծքն մօտ եղան .
 Թաղաւորի խորհրդականք և գործակալք տէրութեան :

* Բաց ի Համբարամայ քանչէրեն՝ Գերկէթ սրացել էր Զրադաշտի և Տե-
 րապետանոց Հարանեբոսթեան անբաւ ճոխութիւնն :

Մեծ դահլիճում այս կառավարք բազմել էին բարձերով ,
Գերկէթ նոցա ճաշ պատրաստեց առատ զինով , կերակրով ,
Անուշաւան՝ մեծամեծաց հետը նստած ճաշում էր ,
Ամենեցուն խօսակցութեան առարկայն մէկ նա ինքն էր :

Երբ ճաշեցին՝ ասաց Գերկէթ , կառավարիչք աշխարհի ,
Ես մէկ խնդիր ունիմ ձեզմէն՝ ընդունելի թող լինի ,
Տասնուհինգ ամբ անց են կացել այն օրէն որ Հայաստան ,
Միջագետաց ձեռքն է ընկել , հայք են 'ի մէջ գերութեան :

Ինչ օգուտ ձեզ այն աշխարհէն , երկիրը զուր կորչում է ,
Նինուաս նոցա թշուառութեան ծայրիւ մատին օգնում չէ ,
Շրջակայ ազգք գազանացած գիշատում են խեղճ ազգին ,
Լոկ մէկ խօսքով չէ ուզում որ պաշտպան կանգնի ասորին :

Ինչ կու լինի սորա վերջը , դուրս կուգայ մէկն այն ազգէն ,
Որ Հայաստան կու աղատէ կու պրծեցնէ մեր ձեռքէն ,
Ապա երբ որ կը զօրանայ՝ կու գայ Նինուէն էլ կ'առնու ,
Այն ժամանակ մենք կը մընանք գերի 'ի ձեռս Հայերու ,

Եթէ աշխարհ անիւի սլէս փոփոխական չըլինէր ,
Իմ ասածս էլ մէկ աւելորդ կասկածելի կ'երևէր ,
Բայց փորձերը հաւատարիմ կարեն լինել մեզ վրկայ ,
Որ ամենայն յաջողութեանց , ձախորդութեանց վախճան կայ :

Ո՛վ էր յաջող քան մեր Ներբող , ինչպէս եղև իւր վախճան ,
Բիւրաւոր զօրք առաւ հետը՝ որ նուաճէ Հայաստան .
Հայկին ձեռով կորոյս կեանքը , իւր մարմինն էլ անդ մընաց ,
Քանի հոգիք դարձան ողջամբ անթիւ անհուն յայն զօրաց :

Ո՛վ էր արի քան զՆինոս , կարաց յաղթել Արամին ,
Շարժեց քաջը իւրեան սուրը , դողը բռնեց Նինուէին .
Պարզեներով ընծայներով կարաց Նինոս հանգարտել ,
Չրի շարժած բարկութիւն ոսկու զընով ամօքել :

Յաջողակ էր Համիրամը , բաղդով յաղթեց Արային ,
Հայոց ազգը ձանձրացել էր , ու զոհ տուեց Վարդոսին ,
Կը ձանձրանայ այս վիճակէն , մէկ էլ տեսնես կը զարթի ,
Աւիւծն էլի նոյն աւիւծն է՝ թէպէտ այժմ 'ի դառազդի :

Անուշավան տասնուհինգ ամ ձեր առջևը կայր զերի ,
Այսօր ինչպէս կործանեց այն ախոյեանին վիթխարի .
Նորա այնքան մեծ քաջութեան ինչպէս պարզե է արժան .
Իմ կարծեօքս պիտի առնու իւր հայրենին Հայաստան :

Թագաւորի խորհրդակիցք և մերձաւորք լոկ դուք էք ,
Նրբան բարի խորհուրդներ տալ ու հաճեցնել կարող էք ,
Որ նա պարզե այս պատանւոյն տայ իւր բընիկ հայրենին ,
Ղրկէ սրբան Հայոց աշխարհ խընամել իւր խեղճ ազգին :

Այս ևս ձեզ յայտնի լինի՝ որ սա ինձ այժմ է փեսայ ,
Երեկեան օրն բարի ժամու այս պատանւոյն ես տեսայ ,
Սիրտս հոգիս սորա տուի՝ եղէ սորա ամուսին ,
Այսուհետև մեր օրերը պիտի անցնին միասին :


Արդ մեծաւորք դուք դատեցէք , միթէ չունիմ իրաւունք ,
Հայաստանը պահանջելու . ո՛չ մօրրս իմ քաջութիւնք ,
Այն երկիրը ժառանգեցին , և ես ժառանգ եմ մօրրս ,
Օրինաւոր բաժինըս է , ժառանգակից եղբօրրս :

Ահա ձեզ էլ ամեն մէկիդ մէկ բիւր ոսկի դահեկան ,
Եթէ խընդիրս գըլուխ բերել դուք գտնվիք բաւական .
Չեր երախտիք իմ մտքումս ես անմոռաց կը պահեմ ,
Եւ պարտաւոր ձեր շընորհաց ինձ մինչ 'ի մահ կու համրեմ :

* Արայի որդւոյն անարժան համարեցան հայերը Համիրամի հետ սիրակ-
ցո-լի-նը , լան օրոյ և չիտեցան օգնել :

Մանաւանդ որ դուք լրտեցիք այսօր խոստմունք արքային ,
 Մինչև 'ի կէս արքայութեան նա պիտի տայր յաղթողին .
 Աւաղանոյ մէջ առաջին՝ պիտի նստի նա վերը ,
 Երկրորդ զկնի թագաւորի՝ զլուխ ամենու իւր դահը :

Ամենեքեան ետուն նմա միաբերան պատասխան ,
 Մենք արքային կ'առաջադէնք՝ որ տայ սըրան Հայաստան .
 Անուշաւան արծանի է , վիպ է իւր քաջութիւն ,
 Ասորեստան չէ պատահած այսպէս յաջող յաղթութիւն :



ԵՐԳ ԻԲ



ԳԱԼՈՒՍՏ ՊԱՏԳԱՄԻՈՐԱՅ ՀԱՅՈՑ

Երբ մեծաւորք ցրբիւ ընկան, իմաց արին ծառայքը,
Եթէ օտար հիւրք են եկել, անձանօթ են տարազքը.
Գերկէթ դշխոյն հըրամայեց որ ներս բերեն հիւրերուն,
Օտարականք մըտան դահլիճ, ողջունեցին տէրերուն:

Գերկէթ ասաց. բարի եկիք դուք պատուական մեր հիւրեր.
Ո՞ր աշխարհէն էք դուք եկել, ո՞ր հայրենի երկիր ձեր,
Վաճառական էք հեռաւոր, թէ ունիք գործ դանդասի,
Կամ թէ հայցուած ինչ խնդրանայ ՚ի դըրանէ արքայի:

Հիւրից մէջէն մէկ ալևոր պատրաստուեցաւ խօսելու,
Ասաց. տիկին՝ ունի՞ս պարապ մեր խօսքերը լրսելու:
Գերկէթ ասաց. ցանկանում եմ՝ որ իմանամ ամեն բան,
Վասնորոյ ինձ քաղցր կլնի՞ քո՞ իմ հարցման՝ պատասխան:

Հիւրը կրկնեց. մենք հայկազն ենք՝ եկած հայոց աշխարհէն:
Անուշաւան առաջ գնաց ու խօսեցաւ հայերէն:
Խեղճ հայերու երեսներին ծագեցաւ մէկ խնդութիւն,
Երբ ասորւոց դարպասի մէջ հնչեց քնքոյշ հայ լեզուն:

Գերկէթ ասաց. սիրուն փեսայ՝ ձեր խօսած չեմ հասկանում,
Ասորերէն խօսակցեցէք, ես էլ լրսել եմ կամում:
Հայն ըսկաւ միւսանդամ ասորերէն ասելու,
Անուշաւան և Գերկէթը ականջ բացին լրսելու:

Հայրն ասաց . պատգամաւորք ենք Հայաստան աշխարհեն ,
Քառսուն հազար երիտասարդք ձեռքերըն են առել զէն ,
Հայկայ աթոռն՝ որ այս ահա տասնեհինգ ամ կայ աւեր ,
Ազգը նորոգ ոտքի կանգնել հաստատ մըտքին է դըրեր :

Անուշավան՝ մեր հայրենեաց՝ թէ չի լինիր օգնական ,
Մեզ էլ դրսէն հասնելու չէ ո՛չ զօրավիզ , ո՛չ պաշտպան ,
Օր ըստ օրէ Հայոց ազգը նուազելով կը պակսի ,
Հովիւ չը կայ , ողորմելի հօտը տակաւ կը ցրուի :

Հայոց աւաղք այս օրերս ժողովեցան Արմաւիր ,
Մարդ զրկեցին և շարժեցին բոլոր նահանգք և երկիր ,
Մեզ ընտրեցին՝ որ մենք Նինուէ դանք առաջի արքայի ,
Եւ պահանջենք որ նա տայ մեզ թոռն և ժառանգ Արայի :

Լըսեցինք թէ մեր նահապետ Անուշավան կայ կենդան .
Ի՞նչ է նստել այն օրհնածը՝ ի մէջ ծանր դերութեան ,
Անտէր ազգը առանց մեծի՝ դազաններէն զիշատովում ,
Ինքը այս տեղ ախով վախով կեանքն ու արևն է մաշում :

Մենք եկել ենք որ արքայէն մեր նահապետն ուզենանք .
Եթէ ոսկով կամ արծաթով կայ մէկ հընար , տանք փրկանք ,
Ապա եթէ խնդիրք աղերս մեր անպտուղ անցանեն ,
Այնուհետեւ պիտի բռնի մեր քաջերը ազատեն :

Քառսուն հազար սպառազէնք կանք Նինուէի այգիքը ,
Սպասում են որ մենք յայանենք թաղաւորին՝ պատգամքը
Ի՞նչ արել են Արմաւիրին՝ մենք էլ կ'անենք Նինուէին ,
Մենք էլ մարդ ենք այլոց նրման և սուր ունինք ՚ի ձեռին :

* Երանի շէր լինէր՝ ըէ հայերը իմանային փող մտնելու յարմար ազգ-
բուստ տեղը :

Գերկէթ ասաց . ո՞վ ծերք Հայոց , ես էլ կի՛ն եմ ասորի ,
Գուք ինչ խելքով էք պարծենում զոլով օտար յայս երկրի ,
Ըսպառնալիք ձեր կը հասնին թաղաւորի ականջը ,
Եւ չէք կարող ըստանալու ձեր ազգայնոց պահանջը :

— Ո՛չ , դեղեցիկ՝ մեր տանտիկին՝ օտարի չենք պարծենում ,
Միայն քեզ ենք պատմում բանը , քեզ մեր խորհուրդն ենք յայտնում ,
Մենք որ եկանք Նինուէ քաղաք՝ Նահապետին պտրեցինք ,
Ամենայն տեղ քեզ ցոյց տուին , մենք էլ քո աուն դիմեցինք :*

Ասացին թէ՛ չքնաղ տիկին , դու ես նորա պաշտպանը ,
Գու ես այսօր ասպարիսէն առել բերել քո տունը ,
Ասացին թէ՛ սուսերամարտ է պատահել քաղաքում .
Անուշաւան գետնին տուել իւր ախոյեանն այն կուլում :

Կուլէն յետոյ թաղաւորը քեզ է յանձնել այն քաջին ,
Մենք նըրան շատ պտրեցինք այսօր առ դուան արքային .
Իմացանք որ մինչ երեկոյ քո տան պիտի նա կենայ ,
Երեկոյին արքայական խրախճանում պերճանայ :

Այն պատճառաւ այս տեղ եկանք՝ որ մեր տէրը զըտանենք ,
Գու բարեկամ ես մեր տիրոջ՝ քեզմէն ինչի՞ թաքցընենք ,
Մանաւանդ որ մենք հայկազն ենք , ինչ որ սրտում , այն լեզվում .
Գործ ու խորհուրդ մեր մէկ տեղ է , և շատ չենք էլ պարծենում :

Գերկէթ ասաց . պատուական հայք՝ դուք ձեր տիրոջ կը ճանչնա՞ք ,
Թէ որ տեսնէք այն պատանւոյն , կամ ձեր մօտը ունենաք :
Հայք ասացին՝ թէ որ մեզ մէկ ցուցնող լինի մեր տէրը ,
Ի հարկէ որ պիտի ճանչնանք . . . մեզ լոյս կու տայ մեր սէրը :

* Մեծ Բաղճու-Ռեան առջև Էղաճ Բանի համբաւը առնն որեւ կը Ռուէր
Խակոյն :

Գերկէթ կրկնեց, իրան այգփան ձեր տիրոջը սիրում էք .
 Որ այսքան երկար ճանապարհը պանդխտութեամբ եկել էք :
 Հայք ասացին . ո՞վ իւր հօրը, իւր ծննդին չի սիրիր,
 Անուշաւան է մեր հայրն, որք է մայր մեր Արամաիր :

Գերկէթ ասաց, ապա եթէ Անուշաւան իւր սէրը,
 Տուած լինի օտարազգւոյ, ինչ տի՛ առնէ հայ սեռը :
 Հայք ասացին . եթէ մեր տէր քեզ է յանձնել իւր հողին,
 Մենք քեզ էլ մեզ մայր կ'ընդունինք, բամբիշ կ'ասենք ու տիկին :

Գերկէթ ասաց . միթէ՞ ձեր ազգ շքեղ շքնաղ կին չունի,
 Որ ինձ իւր մայր, տիկին, բամբիշ և տիրուհի ընդունի,
 Հայք ասացին . կանայք շատ կան մեր երջանիկ Հայաստան,
 Բայց ո՛չ ամենք լինել տիկին նահապետի են արժան :


Եթէ մեր տէրն քեզ անուանէ իրան ընկեր և տիկին,
 Քեզ հայ ազգը մայր կ'ընդունի, քեզ կու գրկէ պանծազին,
 Երանի՛ թէ այգպէս լինէր, դու Հայաստան սիրէիր,
 Մեր տիրոջ հետ մեր աշխարհը բարեբաստիկ կ'անէիր :

Գարձաւ Գերկէթ, ասաց ուրախ . Անուշաւան ուրախ ես,
 Որ քո ազգը ցանկանում է՝ որ քո կինը լինիմ ես .
 Պատուական ծերք երէկվանէն եմ ես սորա ամուսին,
 Երդումն արինք որ Հայաստան պիտի դայինք միասին :

Բայց մէկ պայման ունինք մէջերըս և պիտի այն սուրբ մընայ,
 Նա պիտի ինձ մէնակ սիրէ, սիրտն իմ ազգին նուէր տայ .
 Երէկվանէն ես էլ հայ եմ, դանձս ու հողիս ազգինն է,
 Գերկէթ հարսն է տանն Արամայ՝ ըսկեսրայրն իմ Արայն է :

Փութացիր դու Անուշաւան, քո ծերունեաց երեխր,
 Նոճի նրման շքնաղ հասակդ քո ազգայնոց առաջ դիր,
 Տոյց քո ազգին՝ թէ այգ արիւն՝ որ կայ մէջ քո երակաց,
 Արիւն Հայկայ և Արամայ, արիւն անյաղթ է նախնեաց :

Խառնէ իմ սէրն ազգի սիրոյն՝ քո արութեան մրցանակ ,
 Հայաստանը թող նոր տօնէ իւր խնդութեան յաղթանակ ,
 Այսօր ինձմէն էիր ուզում տրկար սիրոյ մէկ համբոյր ,
 Տես Հայաստան քեզ ձօնում է համբոյր , ողջոյն՝ քանի՞ բիւր :



ԵՐԳ ԻԳ

ՊԱՏԳԱՄՒՈՐՔ ՀԱՅՈՑ ԵՒ ԳԵՐԿԷԹ

Երբ Հայք տեսին իւրեանց տիրոջ ընկան ոտքը դետինը,*
Գառնադոչում վեր հանեցին, լցին կոծով այն տունը.
Մեր կարօտեալ Անուշավան, մեր բընիկ տէր օգնական,
Գարձիր շուտով, ուրախացուր որբուկ այրի Հայաստան:

Բաւական է պանդխտութիւնդ, տանուհինդ ամբ արդ եղեն,
Թշնամիքը պատառում են քո հայրենին ապազէն.
Գարձուր ազգի ցնծութիւնը, մտիթարէ քո ազգին,
Քեզ պիտի տանք Հայաստանին, այս են ազգի պատգամքն:

Այս ասելով ոտքի տակը՝ արտասուքը թափում են,
Միաբերան՝ Անուշավան՝ դուզուալով կանչում են.
Այս տեսարան նորօրինակ երևեցաւ Գերկէթին,
Արտասուքը աչքէն թափեց, ցօղեց չքնաղ երեսին:

* Չարժան է՝ որ Հայերը երբ որեւան Ասորաց քանը հայախօս պա-
րանին, իսկոյն չիճացան՝ որ նա պիտի լինի Անուշավան. ինչէ՛ր նոցա
աչքը փակուէ, արաջ:

Ասաց . ծերեր՝ մի լայք այսօր , որ ինձ օր է ցնծութեան ,
 Անուշավանն իմ յաղթական՝ կործան եղ իւր ախոյեան ,
 Իւր սէրն ինձ ետ և ողջունեաց ինձ հարսըն տան Արամայ ,
 Իմ գրկաց մէջ հանդստացաւ , կենդանացաւ ինձ Արայ :

Ծերքն ասացին . քեզ՝ տիրուհի՝ պահպանել էր մեծ նինուէ ,
 Որ Հայաստան՝ մըխիթարիչ և ըսփօփիչ գրտանէ .
 Թէ որ քեզի Անուշավան հարսըն կոչեց , կին արար ,
 Հայաստանը քեզ կ'ընդունի ինչպէս մէկ վարդ զուարթարար :

— Ես Հայաստան աւանց տեսնել հողւով սրտով եմ սիրում ,
 Անուշավան փեսայիս հետ միշտ նորա բանն ենք խօսում .
 Թէ որ նորա սիրտն ու հողին Հայաստանէն խըլել եմ ,
 Նորա տեղը սիրտս ու հողիս՝ իմ Հայ ազգին ձօնել եմ :

— Մենք յօժար ենք՝ Գերկէթ դշխոյ՝ որ այդ վաճառ կատարվի :
 Քո սիրտը մենք ընդունում ենք փոխան նորա իսկ սըրտի .
 Մեր տէրը մեզ միշտ կու սիրէ , մեզ քո սէրըն է պիտոյ ,
 Ազգի համար չը կայ այլ ինչ՝ որ լինի քան զայդ հաճոյ :

Գարձաւ դշխոյն առ իւր փեսայ , ասաց . չքնաղ՝ տեսնում ես ,
 որ Հայոց ազգ ցանկանում է՝ որ քո սըրտին տիրեմ ես .
 Ուրեմըն ես օրինաւոր պիտի կապուիմ քո հետը ,
 Քեզ նուիրեմ հողւոյս սէրը՝ ազգին տալով իմ սիրտը :

Հաւատա՛ ինձ Անուշավան , որ Մասեաց Քաջք այս ժամուս ,
 Հայաստանին երջանկութեան տան աւետիս լիայոյս ,
 Եւ բերկրալիք յաւերժահարսն սըրինգ ձեռին է հնչում ,
 Հայկ-Արամայ տապանի մէջ ուրախութիւն տարածում :

Ծերքն ասացին . Հայկ-Արամայ այն բազմամեայ տապանքը
 Պիտի խըզեն իւրեանց տխուր և թախծագին կապանքը .
 Աներևոյթ ոտքի կանգնին , պիտի ոյժ տան հայերուն ,
 Պիտի ոյժ տան բազուկներուն , պիտի լոյս տան աչքերուն :

Անուշավան ասաց . Հայկեանք՝ իմ բաղդը այս տիկինն է ,
 Ես դերի եմ Նինուէի մէջ , աղատողս այս կինն է .
 Թէ ինձ հօրըս տեղ ընդունիք , սրբան էլ մայր ասացէք ,
 Սրբան պատուէք՝ ինձ կու պատուէք , սրբամով ինձ սիրեցէք :

— Մեր Նահապետ Անուշավան՝ մենք խօ առաջ ասացինք .
 Քո սիրելին մեր մայր կ'ըլնի , նրբան տիկին կ'ընդունինք ,
 Կորուսել ենք մենք մեր տէրը , Կարգոսի հետ որբացանք ,
 Որբան եմք մենք բարեբաստիկ՝ որ ձեզ հայր ու մայր գրտանք :

Գերկէթ ասաց . Ես Հայաստան պիտի անեմ հայրենի ,
 Գուտոր պիտի ասվիմ Հայկայ , Արամ ինձի հայր լինի .
 Եթէ լեզուս հեշտ չը փոխվի՝ սիրտս ու հոգիս փոխված է ,
 Թէպէտ մարմնով Նինուէումն եմ , միտքս ՚ի ծաղ Մասեաց է :

Ծերքն ասին . Գերկէթ գշխոյ՝ դու Համասիւռ կ'անուանվիս ,
 Նուարդ տիկնոջ նրման ազգին պաշտելի մայր կը լինիս ,
 Քո զաւակունք Հայկայ գահը որդւոց յորդիս կը բազմեն ,
 Ազգի սանձը իւրեանց ձեռին երջանկութեամբ կը բռնեն :

— Թէ ես զաւակ էլ չունենամ՝ այդ պատճառաւ չեմ հողար .
 Հայոց ազգի լաւ զաւակը՝ զաւակ կ'առնում ինձ համար ,
 Ես այն ազգին այն պատճառաւ չը սիրեցի՝ որ իշխեմ ,
 Այլ սիրեցի որ մէկ բաղդի կամ մէկ բարեաց հասցընեմ :

— Երբ որ այդ է քո բաղձաւքը՝ Գերկէթ գշխոյ մեր տիկին ,
 Կը հասանիս քո ցանկութեան՝ մայր կը դառնաս մեր ազգին ,
 Բարի առնել դժբաղդ ազգին՝ մեծ երախտիք է անչափ ,
 Քո քաղցր անուն բոլոր աշխարհ կը բարձրանայ երկնաչափ :

* Համասիւռ Արաօերքի դիւցազնուհին է , Կարգոսի մէջ ևս յիշուած .
 Իսկ Նուարդ Արաօերքի վերջն է :

— Ես փառամոլ չեմ՝ ծերունիք, և ո՛չ բընաւ շահասէր,
Ինձ տրիտուր պիտի լինի իմ ամուսնոյ սրբոյ սէր,
Փառք ու համբաւ Նինուէի մէջ էլ կարէի դըտանել,
Ամեն պատիւ ես թողնում եմ՝ մէնակ մէկ սիրտ մըտանել:

— Նորա սրբոյն ազգը բոլոր կարէ լինել յերաշխի,
Անուշափան քեզ կը սիրէ՝ վասն սիրոյ իւր ազգի,
Քեզ պէս տիկին երբ կու ճարենք, դու մէկ պարծանք ես կանանց,
Քեզմով մեր ազգ կու պարծենայ, դու փառք կլնիս հայկազանց:

— Եթէ ազգ ինձ չարհամարհէ՝ չասէ սա է ասորի,
Ազգի համար չեմ խընայիր՝ ճոխութիւն իմ մթերի.
Ձեր ծերացած Արմաւիրը՝ ի հիմանց կու նորոգեմ,
Քան զՆինուէ՝ գեղեցկազարդ շինուածներով կը պճնեմ:

— Հաւատում ենք Գերկէթ դշտոյ՝ որ Արմաւիր կը շինես,
Ո՛չ թէ մէնակ Նինուէի պէս, այլ առաւել մեծ կանես,*
Բայց մեզ ասա ի՞նչ հընարիւք պիտի դառնանք Հայաստան,
Ի՞նչպէս մեր տէր Անուշափան կը խըզէ կապ գերութեան:

Գերկէթ ասաց, ծերունիք՝ այդ ես առաջ եմ մըտածել,
Իմ սիրական փեսիս համար ճանփան վաղ եմ հանդերձել,
Ես այս գիշեր թագաւորի բերնէն կ'առնում հըրաման,
Որ Արայի թողին լինի իւր հայրենիք՝ Հայաստան:

Գուք այս գիշեր կարէք դրկել աւետաւորք Հայ ազգին,
Որ ընդ առաջ մեզ ելանեն մինչև ՚ի ծայր նահանգին,
Քառասուն հազար ըսպառազէնք թող լինին մեզ աղեկից,
Երբ Հայաստան հասնին մեր ոտք այս ատելի Նինուէից:

* Պարէտի մահի մէջ կայ հրաժ Գերկէթի հայրենասիրական գործերը:

Էզուց ճամբայ կը ելանենք՝ իմ սայլերս պատրաստ են ,
Միայն ձեզմէն մարդիկ կ'ուզեմ՝ որ դանձերըս պահպանեն ,
Մեծ կարաւան պիտի լինինք , իմ մըթերքը են բազում ,
Գուք հետըս կաք , այսուհետև յուղկահարաց չեմ վախում :

— Բո գանձերդ՝ Գերկէթ գշխոյ՝ մեր աչքի պէս կուպահենք ,
Մինչ Արմաիր ողջ անարատ մըթերքըդ կու հասցընենք ,
Գիշեր ցորեկ ձեզ և գանձուց մենք կը լինինք պահապան ,
Պարծենալով կը մըտանենք մեր սիրելի Հայաստան :

— Միամիտ եմ՝ սիրական ծերք՝ որ դուք ողջամբ կը տանիք ,
Եւ ձեր տիրոջ հաւատարիմ ճանփու ընկեր կըլինիք ,
Ես էլ նորա թեատակում յուսամ լինել ապահով ,
Ես ինձ այժմէն պարարում եմ անխաբ անկեղծ այս յուսով :

* Այս նոսաբին յայտնեց Անուշավան Գերկէթին՝ ի լաւ հայ դեռուածաց , որ Ասորիի յետ հնգերորտան ամ Ժաժուի բնակութեան ի Նիճուէ՝ Ժանճու է գտնել իւր որդաւոյն , և նորա գրկաց մեջ հոգին իջէլ , և որդին նրան Ժաժուի թաղէլ . և Գերկէթ հանել գալով Ասորիիի դիակը զճաւելով յանձնեց Հայերին , որ գարան Հայաստան , և Ասորիոսի մարմինը վանի կողմեն բերելով ժաւին թաղեցին Արաօի և Արայի շիրմայ մօտ :



ԵՐԳ ԻԳ

ՓՍՌԱԻՌՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԱՆՈՒՇԱՎԱՆԱՅ

Թագաւորի ապարանից ճրրագները վառվեցան ,
 Լայնածաւալ արքունիքն էր՝ ճրրագալոյց խրրախճան ,
 Յամեն կողմանց ժողովվում են աւագորեաբք , մեծուհիք ,
 Զբօսասէր զննողներով լի են պարիսպք և տանիք :

Արքունական նուագերգուք քնարները հնչում են ,
 Թեթևաշարժ կաքաւողքըն դահլիճի մէջ պարում են ,
 Հրաւիրեալք հետ զհետէ գալիս են այն ապարան ,
 Ուրախութիւն տարածվում է յարքայական խրրախճան :

Թագաւորի գերդաստանը գահոյքներով նստած են ,
 Յիկնայք և հարձք և օրիորդք ոսկի բարձի բազմած են ,
 Յնծութիւն է ամենայն տեղ , չքնաղ է այս տեսարան ,
 Նինուաս ուրախ էր և զուարթ՝ առաւօտեան յաղթութեան :

Հրամայեց թագաւորը և իւր նրժոյգ ձին բերին ,
 Ոսկեճամուկ թամբը դրրին , ոսկի սանձով սանձեցին ,
 Քառասուն հատ երևելի յաւագանուոյն ընտրեցին .
 Որ երթան ու խնջոյք բերեն Անուշավան յաղթողին :

Նոյնպէս շքեղ գահաւորակ և պատդարակ արքենի ,
Մեծուհեաց հետ առաքեցին զհետ Գերկէթ դշխոյի ,
Երեք հազար ջահ ու լապտեր հրամայեց որ վառվին ,
Այնպէս լուսով Անուշավան ու Գերկէթը թող բերվին :

Առաջներէն գրնում էին թմբուկ , շեփոր , արապան ,
Գափ ու նուազ փողերու հետ հնչում էին դնդաձայն ,
Հասան մինչև Գերկէթի տուն , և յայտնեցին հըրաւէր ,
Որն որ արքայն մեծամեծաց դեսպանութեամբ արել էր :

Առաջ նստաւ Գերկէթ դշխոյն արքունական պատդարակ ,
Յետոյ հեծաւ Անուշավան նժոյգ ձիոյն 'ի դաւակ ,
Ջահ ու լապտերք շուրջ պատեցին դիշեր՝ տիւ էր լուսաւոր ,
Նուազարան հնչեց ուժգին , շարժեց այն չուն փառաւոր :

Երբ որ հասին այս հանդիսով մինչև 'ի դուռն արքունեաց ,
Ել ընդ առաջ մեծ բազմութիւն մեծամեծաց , մեծուհեաց ,
Անուշավան մտաւ փառօք , նստաւ ոսկի բարձերուն ,
Գերկէթ դշխոյն մեծուհեաց մէջ փայլեց գեղով իւր սիրուն :

Օշարակքն և համադամք սրփուած կան 'ի սուփրայի ,
Ուտել խըմել զուարճանալ , անգուլ շրջէր և դինի ,
Ջուարթացան ամենեքեան և յագեցան կերակրօք ,
Յետոյ եկան միրզք և պտուղք քաղցրաւենիք շաքարօք :

Թագաւորը որ նստած էր ոսկեճամուկ 'ի գահին ,
Բարբառեցաւ առ բազմականն , ամենեքեան լուեցին ,
Ասաց զիտէք՝ աւագորեալք Միջագետաց տէրութեան ,
Թէ վասն էր է այս ցնծութիւն , վասն էր այս նոր խըրախճան :

Այսօր հայհաղն Անուշավան մեծ երախտիք ինձ եցոյց ,
Նինուէի քաջ մեծ անունը իւր արութեամբ բարձրացոյց ,
Սոսկալիթխար այն հսկային անվեհեր ել ախոյեան ,
Անշունչ և խոց և կարեւիւր ձրգեց յոտս իմ 'ի կործան :

Ես խոստացայ զանձ և ոսկի և մինչ 'ի կէս տէրութեան ,
 Որ նա լինի աւաղանւոյդ զըլուխ և տէր պետութեան : *
 Բայց դուք կարէք ինձ խորհուրդ տալ , թէ այլ ինչ մեծ պարգև տանք ,
 Որ առաւել փառաւորվի , կամիմ լսել և ձեր բանք :

Ոտքի կանգնեց երկրորդագահն՝ որ կերել էր բիւր ոսկի ,
 Ասաց , արքայ՝ յաւիտեան կեանց յուրախութիւն աշխարհի ,
 Վարձատրութիւն տալ արժանեաց զորժ է արդար իրաւանց ,
 Անուշավան արժան վարձուց է վասն իւրոց յաղթութեանց :

Տասնուհինգ ամ է աւասիկ՝ որ կայ 'ի մէջ գերութեան ,
 Չէ լրսած ոք իւր բերնէն մէկ զանգատանք տրտնջման ,
 Երկայնամիտ համբերութեամբ տէրութեանդ էր ծառայում ,
 Հաւատարիմ մտերմութեամբ ողորմութեանդ ըսպասում :

Եկաւ հասաւ ժամանակն էլ՝ որ իւր ճրգանց առնու վարձ ,
 Ծառայութիւն քաղցր է մարդոյ՝ երբ ունենայ փոխադարձ ,
 Գու արև ես քո աշխարհի , քեզմէն ամենք լոյս կ'առնուն ,
 Քեզմէն բնաւից է ցնծութիւն , դու ես երկրի բերկրութիւն :

Անուշավան գերութեան մէջ չէ կարող կեանք վայելել ,
 Բարձ ու գահեր և գերութիւն չեն կարող մէկ տեղ լինել ,
 Եթէ կամիս՝ արքայ հրգօր , որ ծառայքդ զօրանան ,
 Ազատութիւն տուր այս գերւոյդ , զրկէ յերկիր հայրենեան :

Ո՛չ թէ միայն դու թագաւոր երախտապարտ ես քաջին ,
 Այլ և ամենքս եմք պարտապան նորա հրգօր զեղարդին ,
 Այն փառաւոր յաղթութիւնը մեզ է այնքան պատուական ,
 Որպէս թէ ձիր է պարգևել մեզ բիւր , ոսկի դահեկան :

* Հասարակաց եր ասորոց պետանէլ՝ որ մէկ բերի հայ նոցա գլուխ նստի :
 Եւ այդ իսկ ակնարկեց Բերկէն , թէ ես նորա կինն եմ , և նա կ'լինի յեր
 Բահերէց , ապա պետանեմ ինչպէս այժմ իմ կամէս չէ՛ կարարեր , որ յետոյ
 եւ յեղ շիւղդոստեմ :

Գու ողորմած մեր թագաւոր՝ մեր աղերսից անկաջ դիր ,
 Անուշաւան պատանեկին դարձուր բընիկ իւր երկիր ,
 Այն անտէրունջ Հայաստանին դու այս քաջին տէր արա ,
 Հայաստանը թող նորոզվի՝ առաջիկան պէս բարձրանայ :

Ուրախացաւ թագաւորը իւր երկրորդի ասածին ,
 Սոաց . ես էլ յօժար եմ յոյժ ինչ քո շրթունք բղխեցին ,
 Բերէք այս անդ իմ սլճնութեան ականակուռ պատմութեան ,
 Թող պերճանայ Անուշաւան փառօք պատուով մեծութեան :

Բերէք մանեակն իմ ոսկեղէն և տարօշ մեծաղին ,
 Շինող ոսկի , քառամանեակ դոհարաշարդ մատանին ,
 Զարդարեցէք իմ առջև , և պճնեցէք փառաւոր ,
 Թողէք գունէս ուրախ երթայ և լինի միշտ բաղդաւոր :

Տասն հազար զօրք ասորոց թող Խրթան մինչ Հայաստան ,
 Անուշաւան և Գնրկեթին զբնն յաթու հայկազեան ,
 Բարձրաբարբառ թող քարոզեն թէ այս սրդի կարգոսի ,
 Եհաս փառաց և հեծութեան վանս արութեան իւր բաղկի :

Հայոց երկրին շնորձնայ մշկ ասորի հարկահան ,
 Ազդըն ազատ պիտի լինի այժմ և յաւէժ յախտեան ,
 Գանձարանէս թող այժմ առնուն՝ ողբան ոսկի կամիցին ,
 Պարտական եմ վարձատրել այս իմ դեռաւուրջ դիւցաղին :

Գերկէթ դշտոյ դու սիրել ես այս բարձրաստ պատանուոյն ,
 Արժանի ես որ մասնակից լինիս փառաց և պատուոյն ,
 Գու իմ քոյր ես , ես տալիս եմ քեզ տիկնութիւն Արամեանց ,
 Անուշաւան՝ սա թող լինի միշտ առաջին քո կանանց :

* Նախնեաց օրերը այս էր Տեժ պատիւ , որ Ռաքաւորը իւր զարբերը պար-
 դեւեր : Ինչպէս Նիհոս՝ Արամի . և Արգաշտա՝ Մուրթիկին . և Փարսաւոն՝
 Յովսէփին , և Սասաուղ և Յովնաթան՝ Դաւիթին :

— Ո՛չ, իմ եղբայր և թագաւոր, աղաղակեց Գերկէթը,
 Անուշաւան ո՛չ է կարող վերաւորել իմ սիրտը,
 Ես միայնակ պիտի լինիմ տիկին Հայոց աշխարհին,
 Անուշաւան մինչ իմ մահը պիտի լինի միակին :

— Լա՛ւ է, լա՛ւ է՝ Գերկէթ դշտոյ, դու միայնակ հարսնացիր,
 Տիրէ որպէս միահեծան ազգին Հայոց և երկիր .
 Քո ճոխութիւն քեզ է բաժին, բայց է և իմ գանձարան,
 Ա՛ռ քեզ ոսկի՝ որչափ կամիս, ծաղկեցո՛ք քո Հայաստան :



Ծ Ա Ն Օ Թ Ո Ի Թ Ի Ի Ն

Ասելի պարզ և հասկանալի անելու համար գործ է՝ ասել Տեղի Կանի սասկա-
հան Բարեր . ինչպէս՝ անկաջ, իօ, շար, աղէլ, զրիէլ, իսրակ, սիպ-
րակ, ավոր, ուր որ, երբ որ, անոր համար, էլ, էլի, Տեղի, պէս,
Տեղ, ասին Տեղ, ներս բերել, դուրս ցանել, ու, զանաւ, ևայն .
և սասկահան կամ Տանտար գաւառական վերջաւորութիւններ Բարեց, որ-
պէս՝ Գալիս էն, լոսմ էն, զանամ է, Տեղի՛ն, Տեղ Տեղու, ասելու,
պիանելու, սրամն, սրանից, ինչնից . այն պարտաւասա՝ որ շար հայաբնակ
Գաղաթաց, զորքի՛նակ Տիբիսաց, Երևանաց, Ասորբախանաց, Նախիջևանաց,
Էջեփանի, և Պարսկահայոց, որք այս քեղ, որք այն քեղ հասարակեալ
էն, և այն Բարերը և վերջաւորութիւնները, զորքի՛նակ ն քառի քեղ լ
դնելն, ի գրոց լեզու կամ ՚ի Տիբիսակ գործածութիւն քարչոյանելով կա-
րելի էր Տիայն Բնաբանը խրճնացնել :

Գարշեալ անուանց և գերանուանց հոլովներն և Բայից խոնարհմանովն
խառն գործածութեամբ է՝ յարազ քարել, զորքի՛նակ՝ Գաղաթաց, լեռ-
նէրի, Կու, ինչ՛ն, Կեղնից, նորանի, կամ Գոխանակ զնա Գրելոյ՝ նորա,
նրա, նրան, նորան . Գոխանակ նմա՝ Գարշեալ նորան, նրան Գրելով . Գո-
խանակ՝ զնա ասելոյ՝ ինչ, Գոխանակ՝ զԿեղ՝ Կեղ, Կեղի, ևայն . և պար-
ճարան այն է, որ ցոյց զքամ՝ իւր լոսր Կամո՝ լեզուի Կերականութիւն է՝
Տարածել, և Տիայն Տեղ Բարբարոյն է՝ հեղեղել, որովհետև ասինայն հնչմանով
ունին խորեանց ակնական աղբիւր և Գործածութեան քեղ և անձի՛ն, այսինովն
Գաւառ և Ժողովարդ, և ոչ Տի ՚ի նոցանի կարել լինել խորելի . Մեկքեղ
Գործ է ասնամ ինչն, Տիա քեղ՝ լինին, այլ քեղ՝ ինչն, Գարշեալ յե-
րոյ՝ իլան ևայն . էլանել, Ելել, Ելնել . Տանաղել, Տանգել, Տանլեալ,
լանել, լանոյ, լանու = Մարտարութեամբ լնիւրցողը՝ էլնի Տարտիւր ականջ
քնի զանազան Գաւառական խօսից Եղանակին, անՏեղադիբ իւր լեզու այսպիսի
կամար զարտարութիւնը . Տեղ Բնախնդիր Կարեն Բաղճարի՛ն լեռն-
ութիւն Բարդել լեզուի և ասացուածոց յեւրոս վրայ, իւր ի յարգ լանուան
այն, որ հեղինակին դիտարարութիւնը Եղել է Տիայն ասելի պարզութիւն
և Գաւառական խօսից Եղանակաց պահպանութիւն, Կան լեզուի կնիւրութեան
Ժարայակերտ հեղեղութիւն, որ՝ լոսր իա՝ Տեղ Ժածուի Բողոք է այլոց դեմ,
և Ես ինչ համար քեղն է՝ շինել ոչ Տեղ Գաւառական Բարբարա համարել օ-
րար հայրենի լեզուի, և նոզու անհետ արանել արդեն կորուսեալ Տի
Բարբարոյ նշխարովն :

(The appearance of the)

15647-15650

2013

(The appearance of the)

15647-15650

2013

